ՀՈՎՀԱՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԱՀԱՅՏ ՊԱՍՏԱԹՂԹԵՐ

ԵՐԵՎԱՆ 2019

1653330

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

929:891.981.05 Հովհաննեսյան

Ֆ 1054984

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
192

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
192

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒ ԳՈՒՄԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 821.19Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)
Թ950

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝
պ.գ.թ., դոցենտ **Համո Սուքիասյան**

Խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյան**

Թումանյան Հովհաննես
Նորահայտ փաստաթղթեր/ Հ. Թումանյան; Աշխատասիրությամբ՝
Թ 950 Հ. Կ. Սուքիասյանի. – Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
2019. - 120 էջ:

Ժողովածուում հրատարակվում են հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հասարակական բազմաշերտ գործունեությունը լուսաբանող, ինչպես նաև նրա հիսնամյակի և վաթսունամյակի տոնակատարություններին, ստեղծագործությունների տպագրությանը, տարածմանն ու գնահատմանը վերաբերող նորահայտ փաստաթղթեր: Ժամանակագրական տեսակետից դրանք վերաբերում են 1918–1929 թվականներին:

Ժողովածուն հասցեագրվում է պատմաբաններին, բանասերներին, թումանյանագետներին և թումանյանասերներին:

ՀՏԴ 821.19Թումանյան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-860-81-7

© Սուքիասյան Հ. Կ., 2019
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019

ԱՌԱՋԱԲԱՆ

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը (1869–1923) գրական բեղուն գործունեությանը զուգահեռ ակտիվորեն զբաղվել է նաև հանրօգուտ հասարակական աշխատանքներով: Այս առումով իր ծավալներով առանձնանում է հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և հաջորդող շրջանում Հ. Թումանյանի իրականացրած բուռն գործունեությունը, որի առանցքում Հայոց ցեղասպանության հետևանքով թուրքական յաթաղանից մազապուրծ եղած և Անդրկովկասում ապաստանած հարյուրհազարավոր հայ գաղթականների անհամար կարիքները դարմանելն էր:

Թումանյան գրող-հասարակական գործիչը մեկ դարից ավելի եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, իսկ նրա կյանքին առնչվող շատ իրողություններ դարձել են համընդհանուր ուշադրության առարկա, բանաստեղծի կենսագրության և գրական ստեղծագործությունների մասին գրվել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, հրատարակվել հարյուրավոր փաստաթղթեր:

Չնայած այն հանգամանքին, որ Հովհ. Թումանյանն առավել շատ ուսումնասիրված հայ գրողներից է, վստահաբար նրա ստեղծագործություններն ու բազմաբովանդակ գործունեությունը ներկայում և ապագայում ևս հետազոտվելու է հայագետների նորանոր սերունդների կողմից: Հայագետների առաջնային խնդիր-

ներից է Մեծ բանաստեղծի կյանքի ու գործունեության մինչ այս անհայտ էջերի բացահայտումը, արխիվային նոր վավերագրեր ի հայտ բերելը՝ լրացնելով 10 հատորից բաղկացած նրա երկերի լիակատար ժողովածուն[1]: Այս առումով կարևոր է պետական, կուսակցական և անձնական արխիվներում պահվող և Թումանյանի գործունեության տարբեր դրվագները բացահայտող անտիպ փաստաթղթերի հրապարակումը:

Վերջին մեկուկես տասնամյակում Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) իրականացրած գիտահետազոտական աշխատանքների ընթացքում մեզ հանդիպել են Հովի. Թումանյանի հասարակական բազմաշերտ գործունեությանը վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, որոնց զգալի մասն անտիպ է: Ամենայն հայոց բանաստեղծի և նրա ստեղծագործությունների հանդեպ ունեցած անսահման սերը պատճառ է հանդիսացել, որպեսզի հավաքենք դրանք՝ ապագայում հրատարակելու նպատակով: Որոշ փաստաթղթեր գիտական հանրության ուշադրությանն ենք ներկայացրել 2009, 2013 և 2014 թվականներին Հովի. Թումանյանին նվիրված գիտաժողովների ընթացքում[2]: Փաստաթղթերի մի խումբ էլ 2009 թվականին հրատարակել ենք Հայաստանի առաջին հանրապետության անկախացման գործընթացին նվիրված փաստաթղթերի և նյութերի ժողովածուում և

---

[1] Տե՛ս **Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1-10, Երևան, 1988-1999:

[2] Տե՛ս «Հովհաննես Թումանյանի հրապարակախոսությունը ժամանակի զուգահեռականներում» (Երևան, 19-20 փետրվարի 2009 թ.), «Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 140-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան» (Երևան, 23 դեկտեմբերի 2009 թ.), «Հովհաննես Թումանյանը և արդիականությունը» միջբուհական գիտաժողով (Երևան, 29 մարտի - 2 ապրիլի 2013 թ.), «Թումանյան – 145» միջբուհական գիտաժողով (Երևան, 6-7 մայիսի 2014 թ.):

«Էջմիածին» ամսագրում[3]: Այս ընթացքում որոշ փաստաթղթեր հրապարակել են մեր գործընկերները[4]:

Հովի. Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանն առիթ հանդիսացավ, որպեսզի ի մի բերենք նրա կյանքին, հասարակական գործունեությանը, ժառանգներին, հետմահու ստեղծագործությունների ճակատագրին վերաբերող մեր հայտնաբերած, հավաքած փաստաթղթերը:

Ժողովածուում հրատարակված են Հովի. Թումանյանի հասարակական բազմաշերտ գործունեությունը լուսաբանող, ինչպես նաև նրա հիսնամյակի և վաթսունամյակի տոնակատարություններին, ստեղծագործությունների տպագրությանը, տարածմանն ու գնահատմանը վերաբերող նորահայտ փաստաթղթեր: Ժամանակագրական տեսակետից դրանք վերաբերում են 1918–1929 թվականներին և տեղ չեն գտել գրողի երկերի լիակատար ժողովածուի բուն տեքստում և ծանոթագրություններում: Այս փաստաթղթերը լրացնում են բանաստեղծի ԵԼԺ-ում հրատարակված վավերագրերի տեղեկությունները՝ նոր մանրամասներ բացահայտելով նրա հանրօգուտ գործունեության վերաբերյալ:

---

[3] Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ **Հ. Կ. Սուքիասյան**, երկրորդ հրատ., Երևան, 2009, էջ 84-92, 109-110, **Սուքիասեան Հ., Թումանեան Լ.**, Նորայայտ փաստաթղթեր Յովհաննէս Թումանեանի մասին, «Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 85-93:

[4] Տե՛ս **Մախմուրյան Գ.**, Հովի. Թումանյանի ելույթները Հայոց ազգային խորհրդի և Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության նիստերում (1918 թ. ապրիլ–հուլիս), «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 237-250, **Մակարյան Լ.**, Փաստաթղթեր Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 2, էջ 99-108, նույնի՝ Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921–1937 թթ.), Երևան, 2018, էջ 32:

Փաստաթղթերն ընտրված են ՀԱԱ տարբեր ֆոնդերից և հրատարակվում են բնագրային տեսքով: Պահպանել ենք երկգրությունները, կատարել միայն անհրաժեշտ կետադրական և ուղղագրական շտկումներ, վերնագրել փաստաթղթերը, ծանոթագրել: Կիսատ բառերը լրացրել ենք, իսկ պակասողները՝ ավելացրել ուղղանկյուն փակագծերում ([]): Հրապարակումից դուրս թողնված հատվածները ցույց ենք տվել ուղղանկյուն փակագծերում կախման կետեր դնելով ([...]): Հիշատակել ենք նաև փաստաթղթերի նախորդ հրատարակությունները (վերջինների առկայության պարագայում):

Վստահաբար, ներկայացվածով չեն սպառվում Ամենայն հայոց բանաստեղծի գործունեությունը լուսաբանող անտիպ վավերագրերը:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

№ 1

Հովհ. Թումանյանի ղեկավարած Հայ հայրենակցական միությունների միության հիմնադիր ժողովի արձանագրությունը

1 մարտի 1918 թ.
Թիֆլիս

Մարտի 1-ին, ցերեկ[ւայ] ժամը 12-ին Հայոց բարեգործական ընկերութեան Թիֆլիսի դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի բոլոր հայրենակցական միութիւնների ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցեցին հետևեալ հայրենակցական միութիւնների ներկայացուցիչները. 1. Ախալցխայի, 2. Ախալքալաքի, 3. Գանձակի, 4. Լոռու, 5. Հին Նախիջևանի, 6. Ղարաբաղի և Զանգեզուրի, 7. Ղազախ-Շամշադնի, 8. Նուխւայ և Արէշի, 9. Նոր Բայազէտի:

Ժողովը բաց է անում Յովհ. Թումանեանը և առաջարկում է ընտրել նախագահ և քարտուղար: Ընտրւում են՝ նախագահ՝ Յովհ. Թումանեանը և քարտուղար՝ Ար. Տէր-Գրիգորեանը:

Նախագահը յայտարարում է, որ ժամանակի բացառիկ պայմանները առաջ են բերել Թիֆլիսում հայրենակցական միութիւններ, որոնց գործունէութիւնը, բնականաբար, առաջ է գնում միևնոյն ձևով և միևնոյն սահմաններում: Սակայն ի նկատի առնելով, որ ընդհանուր ոյժերով և համերաշխ գործելով աւելի յաջող կերպով պէտք է հնարաւոր լինի դրական արդիւնքներ ստա-

նալ, միտք է ծագել բոլոր հայրենակցական միութիւնների միութիւն կազմել: Այդ ընդհանուր միութեան նպատակը պարզ է ինքնըստինքեան. ամէն կերպ ձգտել հաշտ ու խաղաղ ապրել մեր բոլոր հարևանների հետ և այս պատմական ծանր րոպէին փրկել մեր ժողովրդի կեանքը[1]:

Ժողովն ընդհանուր առմամբ համաձայնելով միութիւնների միութիւն հաստատելու անհրաժեշտութեանը և նպատակին՝ վերջին հարցի քննութիւնն ու կոնկրէտ որոշումը թողնում է յետագային: Երկար թեր և դէմ վիճաբանութիւնից յետոյ ընդունում է հետևեալ բանաձևը. «Թիֆլիսի բոլոր հայրենակցական միութիւններից կազմել միութիւնների միութիւն Թիֆլիսում»:

Ապա քննւում է այն հարցը, թէ ամէն հայրենակցական միութիւնից քանի՞ հոգի պէտք է ընտրւի իբր ներկայացուցիչ միութիւնների միութեան մէջ, և այդ թիւը որոշւում է՝ երկու:

Միութիւնների միութեան առաջին նիստը նշանակւեց կիրակի, ժամը 5-ին (մարտի 5-ին):

Ժողովը փակւեց ժամը 2-ին:

Նախագահ՝ Յ. Թումանեան

Քարտուղար՝ Ա. Տէր-Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 4, թ. 1 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

---

[1] Թիֆլիսի "Кавказское слово" թերթի 1918 թ. մարտի 28-ի համարում տպագրած «Հանգցրեք հրդեհը» հոդվածում Հովի. Թումանյանը երկրամասի ժողովուրդներին խաղաղ գոյակցելու կոչ էր անում (**Թումանյան Հ.**, Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 7, Երևան, 1995, էջ 352-354):

№ 2

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Հայոց ազգային խորհրդին՝ Նոր Բայազետի քաղաքային ինքնավարությանն ավտոմոբիլներ տրամադրելու հարցով

12 մարտի 1918 թ.

N 2

[Թիֆլիս]

Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը խնդրում է Ազգային խորհրդին միջնորդել, որպէսզի ներկայումս լիկուիդացիայի ենթարկող հիմնարկութիւններից մէկ կամ երկու աւտօմօբիլ տրուի Նոր Բայազէտի քաղաքային ինքնավարութեանը՝ կանոնաւորելու Նոր Բայազէտի և Դիլիջանի մէջ եղած երթևեկութիւնը, որ շատ անհրաժեշտ է տեղի ազգաբնակչութեան թէ՛ ինքնապաշտպանութեան և թէ՛ պարենաւորման գործի համար:

Նախագահ խորհրդի՝ Յ. Թումանեան

Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 5, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

№ 3

Քաղվածք Անդրկովկասյան սեյմի, կառավարության հայ անդամների և գավառների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից

30 մարտի 1918 թ.

[Թիֆլիս]

Նախագահում է Ա. Ահարոնեան, որ նիստը բանալով հաղորդում է հաշտութեան բանակցութիւնների մասին մի քանի տեղեկութիւններ[1]: Թիւրքիան ներկայացրել է ուլտիմատում՝ պահանջելով 48 ժ. ընթացքում պատասխանել, թէ ընդունում են Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, թէ՝ ոչ: Եթէ վրացիներն ընդունեն, մենք ինչ դիրք ենք բռնելու, շարունակելու՞ ենք պատերազմը, թէ՝ ոչ: [...]

Յով. Թումանեան[2]. Ի նկատի առնելով, որ հաց, զօրք, տրամադրութիւն և կազմակերպչական շնորհք չկայ, առաջարկում է հաշտուել՝ մանաւանդ դրսից որևէ օգնութեան յոյս չկայ: Պէտք է կենդանի ոյժը փրկել: Ժողովրդին բնաջնջումից փրկել, ինչ գնով էլ լինի: [...]

Եթէ ուրիշ ելք չկայ այս դրութիւնից դուրս գալու, և Թիւրքիան էլ առաջ է գալու, ի հարկէ, այլևս խօսք չի կարող լինել հաշտութեան մասին, և պէտք է կռիւը շարունակել, ինչքան էլ ծանր ու դժւար լինի մեզ համար: Միայն պէտք է ամէն միջոց գործ դնել՝ թոյլ չտալու էքսցեսներ խաղաղ թիւրք ազգաբնակչութեան նկատմամբ:

[...] Վիճաբանութիւնները ընդհատւում են: Ժողովի ցանկութեամբ գործնական առաջարկներ չեն արւում: Միայն յանձնարարւում է Սէյմի անդամներին[3] վճիռ կայացնելիս ի նկատի

---

[1] Խոսքը Տրապիզոնում Օսմանյան կայսրության և Անդրկովկասի պատվիրակությունների միջև կայացած, սակայն անարդյունք ավարտ ունեցած բանակցությունների մասին է:

[2] Հովի. Թումանյանը նիստին մասնակցում էր իբրև ՀՅԴ ներկայացուցիչ: Նա ներկա է գտնվել նաև Ազգային խորհրդի նախորդ՝ մարտի 27-ի նիստին, սակայն ելույթ չի ունեցել:

[3] Այն է՝ Անդրկովկասյան սեյմի հայ անդամներին:

առնեն այս տրամադրութիւնները և գործնական քայլեր անեն այս սահմանում:

ՀԱԼ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 173 շրջ.-174, 175-176: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

«Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 241-245:

№ 4

Հովհ. Թումանյանի մասնակցությունը հայ ղեկավար գործիչների արտակարգ խորհրդակցությանը[1]

8 ապրիլի 1918 թ.

Ալեքսանդրապոլ

4-րդ նիստ

Նիստը բացուեց առ[աւօտեան] ժ. 10 1/4-ին, նախագահութեամբ Ա. Ահարոնեանի և քարտուղարութեամբ Ա. Աբեղեանի: Օրակարգի խնդիրներ էին՝ 1. իշխանութեան խնդիր, 2. ինքնապաշտպանութեան խնդիր:

[...] Յ. Թումանեան[2]. Կովկ[ասի] ո՛չ մի ժողովրդի համար այնչափ անհրաժ[եշտ] չէ ընդհ[անրական] իշխանութիւնը, կենտրոնը, որչափ մեզ համար: Անջատումն Անդրկ[ովկասի] մասերի՝ կնշանակէ կռիւ առանձին մասերի դէմ, կռիւ ոչ միայն Տաճկ[աստանի], այլև Ադրբեջ[անի] և Վրաստ[անի] դէմ, թոյլ չպիտի տալ առանձին կառավ[արութիւններ] ստեղծելը: Առանձին կառավ[արութիւն]՝ կնշանակէ առ[անձին] թշնամի, բարե-

---

[1] 1918 թ. ապրիլի 6-8-ը Ալեքսանդրապոլում գումարվել է Անդրկովկասյան սեյմի և կառավարության հայ անդամների, Հայոց ազգային խորհրդի, հայկական քաղաքական կուսակցությունների անդամների, հասարակության ներկայացուցիչների արտակարգ խորհրդակցություն:

[2] Բանաստեղծը խորհրդակցությանը մասնակցում էր իբրև Հայոց ազգային խորհրդի լիազոր:

կամ[ութիւն] պիտի ստեղծել հարևանների հետ: Ժամանակն է խոստովանիլ, որ պարտուած ենք մենք, մեր իտէալները՝ ջախջախուած: [...]

4-րդ նիստ, երեկոյեան ժ. 6 1/2-ին

Նախագահութեամբ Ա. Ահարոնեանի և քարտուղարութեամբ Ա. Ստամբոլցեանի:

[...] Յովի. Թումանեան. Առաջարկում է ստեղծել մի կամք և հեղինակութիւն, իսկ մեզանում երկու իշխանութիւն կայ՝ Ազգ[ային] խորհուրդ և Հ. Յ. Դաշնակցութիւն, այս հանգամանքը քայքայիչ ազդեցութիւն է ունենում մեր գործի վրայ, ապացոյց՝ թուրք-հայկական ընդհարումները, որի հանդէպ Ազգ[ային] խ[որհրդ]ի լիազօրները խաղաղարար ընթացք են բռնում, իսկ խմբերը՝ ընդհակառակը: Պէտք է վերջ տալ այս բոլորին, որովհետև հետևանքները շատ վատ կլինեն: [...]

5-րդ նիստ

[...] Յ. Թում[անեան]. Մի հեղինակութիւն, մի կամք: Ազգային խորհուրդ և ՀՅԴ: Իրար խանգարում են[1]: [Նրանց լիազորությունների] սահմանները որոշուած չէ: Մի քանի լիազօր ... [...]

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 15, 16 և շրջ., 21 շրջ., 23: Բնագիր: Ձեռագիր (սղագրություն):

«Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 245-246:

---

[1] Այդ օրերին նշյալ խնդրի վերաբերյալ Թիֆլիսում մի շարք քննարկումներ տեղի ունեցան:

№ 5

Ստեփան Մամիկոնյանի[1] հայտարարությունը Հայոց ազգային խորհրդի նիստում՝ Հովհ. Թումանյանին ուղղած իր խնդրանքի մասին

19 մայիսի 1918 թ.

[Թիֆլիս]

[...] Ս. Մամիկոնեան. [...] Լոռայ գունդը պէտք է վերակազմել, գնդապետը անպէտք է: Արամեանի գոյքը պահելու համար իբրև պահակ ուղարկուած էր, առիթ է տուել բոլշևիկական տրամադրութեան: Ինքը խնդրել է Յով. Թումանեանին, որ գնայ, կարգի բերի գունդը և դնի կորպուսի հրամանատարի տրամադրութեան տակ[2]: [...]

Նախագահ

Անդամ-քարտուղար

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 213 շրջ.: Պատճեն: Մեքենագիր:
Տե՛ս նաև՝ «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 238:

№ 6

Քաղվածք Հովհ. Թումանյանի մասնակցությամբ կայացած Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից

24 հունիսի 1918 թ.

[Թիֆլիս]

---

[1] Ս. Մամիկոնյանը Հայոց ազգային խորհրդի զինվորական մասի վարիչն էր:

[2] 1918 թ. մայիսի 16-ին Հովհ. Թումանյանը Ղարաքիլիսայում հանդես է եկել լոռեցիներին ուղղված կոչով՝ հորդորելով կենաց ու մահու պայքարի դուրս գալ թուրք զավթիչների դեմ. «Թող թշնամին էլ տեսնի, աշխարհքն էլ, որ կարելի է Էրզրումի վրից էլ անցնել, Ղարսի վրից էլ, բայց Լոռու սարերից անցնել չի կարելի» (**Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 354):

[Ներկաներ]՝ Աւ. Սահակեան, Ս. Տիգր[անեան], Մ. Ղարաբէգեան, Յ. Դաւթեան, Ռ. Տ[էր]-Մ[ինասեան], [Ա.] Բաբալեան, Ն. Ա[ղբալեան], Ռ. Քաջ[ազնունի], Խ. Կարճ[իկեան], Ան. Ստ[ամբոլցեան], Ս. Մ[ամիկոնեան], Լ. Թումանեան, Յով. Թումանեան[1], Ա. Երզ[նկեան]:

[...] [Լսեցին]. Ա. Ռ. Քաջազնունի[2]. Հետևեալ խնդիրներն է դնում. կառավարութիւն չկայ այն մասերով, որ ինքը ուզում էր՝ արտաքին, զինուոր[ական] և ֆինանսական: Արտաքինը չկա. Ալ[եքսանդր] Խատ[իսեանը] [Կ.] Պոլիս է, նրան փոխարինող չկա, թէև [իր կողմից] դիմումներ եղել են: Ֆինանսների մինիստրութեան հարցը քաշքշում է, որ Հ[այ] ժ[ողովրդական] կ[ուսակցութիւնը] կէս իրաւունք չէր համաձայնում, մինչև պարզէր: Բայց ես ժամանակաւորապէս առաջարկեցի Խ[աչատուր] Կ[արճիկեանին] և Գ[եղամ] Տէր-Յար[ութիւնեանին]: Մնում է միայն զինուորական մինիստր գ[եներալ] [Հ.] Հախվերդովը, որ տանում է իր գործը: Վերջերս նորից խօսեցի Հ[այ] ժ[ողովրդական] կ[ուսակցութեան] հետ: Նրանք խոստացան վերջնական պատասխան տալ: 14 օրից անցել է, բայց կառավարութիւն չկայ: Երբ լինի էլ, այստեղ չի կարող մնալ:

[...] Յ. Թում[անեան]. Կառավարութիւնը պէտք է երկրում լինի, կտրուած է երկիրը: Ձեր մասին ոչինչ չգիտեն: Հայերին սեղ-

---

[1] Հունիսի 23-ին Լոռուց Թիֆլիս վերադարձած Հ. Թումանյանը Հայոց ազգային խորհրդի նիստին հրավիրվել էր Լոռու շրջանի վերաբերյալ տեղեկություններ հայտնելու համար:

[2] 1918 թ. հունիսի 7-ին Հայոց ազգային խորհուրդը Հովհաննես (Ռուբեն) Քաջազնունուն հանձնարարել էր կազմել նորանկախ Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կառավարությունը վերջնականապես կազմավորվել է հուլիսի 24-ին, Երևանում (**Սուքիասյան Հ. Կ.**, Հայաստանի անկախացումը և պետական կառավարման մարմինների ձևավորման գործընթացը (1918 թ. մայիս–օգոստոս), «Վէմ» համահայկական հանդես, 2018, N 4, էջ 63-68):

մել են: Իրաւունքով, թէ՞ ուժով եք կառավարութիւն կազմելու: Երբ ասել են կառավարութիւն կազմիր, աւելի լաւ ձեր [...][1]:

Դրութիւնը լուրջ է, պէտք է գնալ, տէր դառնալ և կառավարել [երկիրը]: Ժողովրդին փչացնում են[2]: Ճանապարհից: Եթէ կառավարութիւն լինի, շատ բան այսպէս չէր լինի:

[...] Ինքը կարող է [կառավարութեանը Երևան] տանել ձիով՝ Սանահինից Դիլիջան:

[...] [Լսեցին]. III. Յ. Թում[անեանի] զեկուցումը[3]. Թուրքերը բռնել են բոլոր Դվալի գագաթները[4]՝ Ջալալօղլիից[5]–Ձորի գէղ–Գոլագերանը[6]–Դսեղ՝ դէպի Համզաչիման[7]: Դսեղում մի պահակներ են: [Օսմանցի] փաշան Ձորագէղում է: Նախքան գերմ[անացիների] գալը [օսմանցիները] կարծես գնում էին. ժողովրդին պատւիրեցին դուրս չգալ. յետոյ գերմանացիք երևացին, նրանք նորից հետ դարձան, լաւ դիրքեր բռնեցին, ակոպներ[8] շինեցին, Դսեղների լաւ դիրքերը գրաւել [են]: Գերմ[անացիք] զգում են, որ դժւար է նրանց այդտեղից քշել: Ըստ իմ տեղեկ[ութեան]՝ օսմ[անցիների] [թիւը] 1500-2000 է: Թնդանոթներ շատ չունեն՝ 2 հատ է: Գերմ[անացիք] գալիս են Վորոնցովկից[9]: Թէև քիչ են, բայց թուրքերի վրա սարսափ են ազդում: Օսմ[անցիները] շատ կատաղած են վրացիների [դէմ]: Շատ հայ լրտեսներ կան:

---

[1] Թերթի վերջին տողը վնասված է:

[2] Այսինքն՝ կոտորում, սպանում են:

[3] Հովի. Թումանյանի զեկուցման մեջ բարձրաձայնված դրույթներից որոշները նրա անհատական տպավորության արդյունք է:

[4] Խոսքը Բազումի լեռնաշղթայի մասին է:

[5] Ներկայումս Լոռու մարզի Ստեփանավան քաղաքը:

[6] Քոլագերան, Քոլագիրան: Ներկայումս Լոռու մարզի Թումանյան երկաթուղային կայարանը:

[7] Ներկայումս Լոռու մարզի Մարգահովիտ գյուղը:

[8] Խրամատ:

[9] Վորոնցովկա: Ներկայումս Լոռու մարզի Տաշիր քաղաքը:

Նրանց միջոցով իմացայ, թէ ինչ են ուզում. վախում են Դսեղից: Շրջաբերական գրեցի, որ կանոնավոր զորքի դէմ դուրս չգան, [դուրս գան] միայն խուժանի դէմ: Փաշային գրեցի, որ ուզում եմ տեսնել: Տեղական յոյներն ու ռուսները վատ դեր են կատարել: Ինքը գնալու է, փոխարէնը եկաւ այստեղ: Անցեալ օրը [փաշան] եկաւ իր սվիրտով[1], ինձ կանչեց, խոսակցութիւնից իմացա, որ ուզում են մեր գիւղի դիրքերը բռնել: Եկան, գերմանացիք եկան: Թուրքերը դիրք մտան, յետոյ փախան: Գերմանացոնց ասեցի, որ էս դիրքերը բռնեն: Նրանք ինձ ...[2] տւին: Եկող գիծը բռնւած է վրաց-գերմ[անական] զօրքով:

Դեռ ճանապարհից էն կողմ ապահով չեն: Օսմ[անցիները] Ջալալօղլին թալանում են, հայոց սայլերով տանում են: Հայ գիւղերը տուժել են իրենց վատ հարաբերութիւնների պատճառով: Գերիների սպանութիւնը Ջալալօղլում շատ վատ է ազդել: Անդրանիկի օրինակն ուզում են իրենք գործադրել: Սկզբում շատ խիստ էին, լրտեսները գործում էին, մի քանի տեղ զինաթափ են արել: Ջալալօղլի Անդրանիկից հետո, երբ նա չմտներ, թուրքը չէր մտնի. Ղարախաչը կոտորեցին, թուրքերը եկան, թալանեցին, ջարդեցին: Յետոյ մնացածներին հաւաքել [են]: Մի քանի տեղ բռնաբարել են, դիմադրեցին մի քանի ...[3]:

Անդրանիկի Լոռի գալը. Դսեղ եկաւ: Անդրանիկի վերաբերմունքը դէպի գիւղացիները: Ղարաքիլիսի կռիւը: Նամակ է ստանում Մանասից[4] ու Գ. Ղազարեանից, որ կռւելու են, օգնեցէք: Ես ուղարկեցի Վեհիբ փաշի թղթերը: Մինչ այդ ինձանից ձայն:

---

[1] Свита – շքախումբ:
[2] Մեկ անընթեռնելի բառ:
[3] Մեկ անընթեռնելի բառ:
[4] Հայկական կորպուսի հրամանատարի օգնական Սարգիս Մանասյանը:

Անդրանիկը հեռագիր ստացաւ՝ գիծը պահեն, Դվալը չբռնել. եկան թուրքերը բռնեցին: Երկրորդ օրը նա գրութիւն ստացավ՝ դիրք բռնելու, բայց չարին, փախան Դիլիջան[1]:

Ժողովուրդը, գաղթականները՝ թալանչի, անխղճմտանք, աներևակայելի է, անխիղճ՝ ջարդուած զինվորին թալանել, սպանել [են]: Զարհուրելի վախկոտած ու փախած: Նոյնը գաղթականները. ունի 3-4 հրացան, նաև օձիքներս գողացան, բռնեցի: Գերմանացու թանքն էին բռնել, գողացել էին: Յիմար, ցած, վախկոտ, սրիկայ, չարչի, անխիղճ, լիրբ ժողովուրդ է էս ռոպէիս: Հայ զինուորները նոյնպէս: Երբ մեր լոզունգը լինէր թալանը, գուցէ ավելի յաջողութիւն ունենայինք: Թուրքերն աւելի քիչ թալան[եցին] ու կողոպտեցին: Թուրքերի շնորհիվ աւերակ չի եղել: Բորչալուի շրջանում կայարաններն աւելի լաւ են մնացել, քան հայկ[ական] շրջանում: Ղարաքիլիսէի դէպքը (գերիները հանեցին և կրակեցին թալանչիներին): Մոլոկաններն ու յոյները, մանաւանդ վերջինները, շատ վատ դեր կատարեցին: Վորոնցովկա ...

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 47 շրջ.-48, 50-51 շրջ.: Բնագիր: Ձեռագիր (սղագրություն):

Մեքենագիր պատճենից հրատարակված է՝ «Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 246-247: Տե՛ս նաև՝ Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս–հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, երկրորդ հրատ., Երևան, 2009, էջ 84-90:

№ 7

[1] Շաբաթներ անց Հովի. Թումանյանը մամուլում հանդես եկավ «Անդրանիկը և Ղարաքիլիսան» հոդվածով, որտեղ բացատրում էր Ղարաքիլիսայի ճակատամարտին Անդրանիկի չմասնակցելու պատճառները («Հորիզոն», 10 օգոստոսի 1918, N 158):

Հ-105484

Հայոց ազգային խորհրդի նամակը Կ. Պոլսում գտնվող ՀՀ պատվիրակությանը[1] Լոռու վերաբերյալ Հովհ. Թումանյանի հաղորդած տեղեկությունների մասին

25 հունիսի 1918 թ.[2]

Թիֆլիս

Օգտուելով գերման[ական] առաքելութեան սիրալիր պատրաստակամութիւնից՝ հաղորդում ենք մի քանի տեղեկութիւններ այստեղի անցուդարձի և կացութեան մասին: [...]

Ճամբաների խնդիրը. Մինչև այսօր ապահով ճանապարհ չկայ դէպի Ղարաքիլիսա և Երևան: Գերմանական և վրացական զօրքերը կռուով ճանապարհը բացին մինչև Սանահին և մի քիչ այն կողմը: Շուլավերից արդէն կարողանում են մարդիկ գալ ու գնալ: Բայց երէկ լուր տարածեց, որ գերմանացիք յետ են գալիս և իբր անցել են Սադախլուից այս կողմը, որ արդէն տաճիկներն են գրաւել [Սադախլուն]: Վերջին կէտը ստուգման կարօտ է, բայց ճիշտ է, որ տաճիկները գրաւել են Դսեղը, որի մօտերքն էին: Երկու օր առաջ եկաւ Յ. Թումանեանը և սրտաճմլիկ բաներ պատմեց գաղթականների դրութեան մասին, որոնց կոտորում են անխնայ: Ճիշտ է Ջալալօղլու աւերածը և մասնակի կոտորա-

---

[1] Քաղաքակ դաշինքի երկրների և կովկասյան հանրապետությունների միջև կայանալիք կոնֆերանսին մասնակցելու համար Ավետիս Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունը (անդամներ՝ Ալեքսանդր Խատիսյան, Միքայել Պապաջանյան) Թիֆլիսից Կ. Պոլիս էր մեկնել 1918 թ. հունիսի 13-ին: ՀՀ պատվիրակությունը Կ. Պոլսում մնաց մինչև նոյեմբերի 1-ը: Կոնֆերանսն այդպես էլ չգումարվեց (**Սուքիասյան Հ.**, Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս–նոյեմբեր), «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 193-195):

[2] Նամակը Կ. Պոլսում ստացվել է 1918 թ. հուլիսի 14-ին:

ծը. աւարի է ենթարկւել և Դիլիջանը մերոնց կողմից (թիւրքահայ զինուորներ, որ անցել են Նոր Բայազէտ): Բորչալուի խճուղին ևս անապահով է հայերի համար, ինչպէս և շրջանը: Ճամբաների ապահովութիւնը տառացի իմաստ ունի. ճամբից մի քանի սաժէն[1] այն կողմ արդեն անապահով է: Փախստական զինուորները մեզ պատմեցին, որ մի ամբողջ գնացք որբեր կոտորվել են Խրամի մօտ, ինչպէս և գաղթականներ: Գետափի մասուրների մէջ պահած և ապա մի կերպ մեր կողմերն ընկած մի վարժուհի անձամբ տեսել էր մանուկների դիակները իրենց վարժուհու դիակի կողքին: Վրաց-գերմանական զօրքերը Խրամի մօտ կռիւ ունենելով՝ գերի էին բռնել շատերի, որոնց մէջ և մի տաճիկ գնդապետ և զինուորներ, թէև կռիւը ուղղած էր բանդաների դէմ և ասում էին, որ նրանք են ճամբան գոցում: Մի քանի թուրք գիւղեր աւերուած ու հրդեհուած են այդ շրջանում: Թուրքերը մի պատգամաւորութեամբ իրենց հպատակութիւնն են յայտնել վրաց կառավարութեան: Անհնարին է հայերի համար ազատ երթևեկութիւնը Բորչալուի գաւառում՝ մինչև իսկ դաշտային աշխատանքը. միայն երկաթուղին է, որով կարելի է դեռ երթևեկել մինչև Սանահին (եթէ Սադախլուն երեկ չեն վերագրաւել տաճիկները): [...]

Ի դիմաց [Հայոց] ազգ[ային] խորհրդի՝ Ն. Աղբալեան

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 13, 15-16, 18 շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, երկրորդ հրատ., Երևան, 2009, էջ 91-92:

№ 8

---

[1] Երկարության միավոր: 1 սաժենը հավասար է 2,134 մետրի:

Հայոց ազգային խորհրդի Փոքր խորհրդի որոշումը Հովհ. Թումանյանին ազգային խորհրդի լիազորի պարտականություններից ազատելու մասին

30 հունիսի 1918 թ.

[Թիֆլիս]

[...] [Լսեցին]. 3. Յ. Թումանեան. Հրաժարւում է Ազգ[ային] խ[որհրդ]ի լիազօրութիւնից[1]: Խնդրում է իր արած ծախսի պակասորդը լրացնել որևէ ուրիշ ընկերութիւնների միջոցներից:

[Որոշեցին]. Հրաժարականն ընդունել, գործը լիկվիդացիայի ենթարկել և [այս]պէս ներկայացնելով: [...]

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 11, թ. 3: Բնագիր: Ձեռագիր (սղագրություն):
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 86:

№ 9

Բաթում ուղարկված հայկական պատվիրակության[2] հեռագիրը Կ. Պոլսում գտնվող պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին

4 հուլիսի 1918 թ.

Բաթում

---

[1] 1918 թ. փետրվարին Հովհաննես Թումանյանը Հայոց ազգային խորհրդի կողմից նշանակվել էր Լոռու, Փամբակի, Ղազախ-Շամշադինի և Բորչալուի ընդհանուր լիազոր: Նա պաշտոնից հրաժարվել է հունիսի 27-ին:

[2] Սամսոն Հարությունյանից, գեներալ Իվան Բաղրամյանից և Հովհաննես Թումանյանից կազմված պատվիրակության առջև խնդիր էր դրվել համոզել Կովկասյան ճակատի օսմանյան բանակների նորանշանակ հրամանատար Էսսադ փաշային, 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի դաշնագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության սահմաններից հեռացնել զորքերը, հայ գաղթականներին թույլատրել վերադառնալ թուրքերի կողմից ռազմակալված տարածքները, ինչպես նաև առևտրական հարաբերություններ սկսել Օսմանյան կայսրության հետ: Այդ մասին վկայում է Հ. Թումանյանը («Հորիզոն», 9 յուլիսի 1918, N 133):

Ելնելով նրանից, որ Հայաստան տանող բոլոր ճանապարհները փակ են, փոստային և հեռագրային հաղորդակցությունն ընդհատված է, երկաթուղային ճանապարհները գրավված են վրացական և գերմանական զորքերի կողմից, մեր կառավարությունը և Ազգային խորհուրդը հնարավորություն չունեն մեկնել Երևան: Քանի որ Լոռու և Փամբակի շրջանները գրավված են օսմանյան զորքերի կողմից, հարյուրհազարավոր քաղցած և մերկ հայ գաղթականներ, կտրված իրենց տներից, թափառում են լեռներում և անտառներում, ինչի հետևանքով յուրաքանչյուր օր մեծաքանակ զոհեր են լինում: Այդ բոլոր հանգամանքների արդյունքում Հայոց ազգային խորհուրդը մեզ հանձնարարեց ճանապարհվել Բաթում, որպեսզի այդ մասին հաղորդենք նորին գերազանցություն Էսսադ փաշային և այստեղ երեք հարց կարգավորենք. առաջին՝ Հայկական Հանրապետությանը փոխանցել իր տարածքում գտնվող երկաթուղագիծը՝ համաձայն խաղաղության պայմանագրի, երկրորդ՝ Հայկական Հանրապետության տարածքից տարհանել օսմանյան զորքերը՝ համաձայն այդ պայմանագրի, և երրորդ՝ հայ բոլոր գաղթականներին թույլատրել տուն վերադառնալ՝ լիակատար անվտանգության երաշխիքով:

Նորին գերազանցություն Էսսադ փաշան սիրալիր ընդունեց հայկական պատվիրակությանը և մեծ համակրանք արտահայտեց հայերի հանդեպ: Նա կարծում է, որ գաղթականների վերադարձը այն գավառները, որտեղ մուսուլմանների և հայերի միջև բախումներ չեն եղել, հիմա արդեն հնարավոր է, միաժամանակ՝ հայ գաղթականների վերադարձը այն շրջաններ, ուր նրանց միջև լավ հարաբերությունները դեռ չի վերականգնվել, պետք է հետաձգվի մինչև հասարակական կարծիքի լիակատար հանդարտեցումը: Նա Ալեքսանդրապոլի և Կարսի գաղթական-

ներին թույլատրեց իրենց անձնական գործերով այդ քաղաքներ այցելել: Վերջապես, նա խոստացավ օսմանյան բոլոր զորամասերին հրաման ուղարկել՝ հայ բնակչությանը որևէ կերպ չճնշելու և այդ շրջաններում հնարավոր բախումների դեմ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու մասին: Ինչ վերաբերում է օսմանյան զորքերի տարհանմանը և երկաթուղագիծը Հայկական Հանրապետության կառավարությանը վերադարձնելուն, Էսսադ փաշան կարծում է, որ այդ հարցերը պետք է լուծվեն Կ. Պոլսի կոնֆերանսում:

Քանի որ այդ հարցերը շատ կարևոր և հրատապ են հայերի համար, մենք կարծում ենք, որ Կ. Պոլսում մեր պատվիրակությունը, չսպասելով կոնֆերանսին, կարող է օսմանյան կառավարության հետ այն կարգավորել՝ հիմնվելով խաղաղության պայմանագրի պայմանների վրա: Այդ պատճառով մենք խնդրում ենք, որքան հնարավոր է շուտ, այդ հարցով բանակցություններ վարել օսմանյան կառավարության հետ և աշխատել հանգել բարեհաջող ու արագ լուծման, ինչպես նաև բոլոր գաղթականների վերադարձին: Հեռագրեցեք կամ ցրիչի հետ պատասխան ուղարկեք Թիֆլիս, ուր մենք մեկնում ենք վաղը:

պատվիրակներ՝ Սամսոն Հարությունյան, գեներալ [Իվան]
Բաղրամով, Հովհաննես Թումանյան,
քարտուղար՝ Երվանդ Միրզոյանց

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 49-50: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից[1]:

Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, երկրորդ հրատ., Երևան, 2009, էջ 109-110:

---

[1] Հեռագրի ֆրանսերեն օրինակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 47 և շրջ.:

№ 10

Քաղվածք Հովի. Թումանյանի մասնակցությամբ կայացած Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից

6 հուլիսի 1918 թ.
[Թիֆլիս]

Նախագահութեամբ՝ Ա. Սահակեանի: Ներկայ էին Խորհրդի անդամներից՝ Ս. Մամիկոնեան, Ս. Տիգրանեան, բժ. Յ. Դալաթեան, Ռ. Տ[էր]-Մինասեան, բժ. Ա. Բաբալեան, Ա. Երզնկեան, Մ. Ղարաբէգեան, Լ. Թումանեան, Ա. Ստամբոլցեան, Ս. Յարութիւնեան, Ա. Մխիթարեան, կառավարութեան նախագահ [Յ.] Քաջազնունի, Բաթումի պատւիրակութեան անդամներ՝ Յ. Թումանեան, գեն. [Ի.] Բաղրամեան, Երևանի ներկայացուցիչ Մարգար և Տ. Յովհաննիսեան՝ Բագւի Ազգային խորհրդի նախագահը:

[...] <u>II. Բաթումի պատւիրակութեան զեկուցումը:</u>

Ս[ամսոն] Յարութիւնեան զեկուցում է. Մենք՝ ես, Յ[ովհաննէս] Թումանեան, գեն. [Իվան] Բաղրամեան և թարգման [Երուանդ] Միրզոյեան մեկնեցինք և հասանք մեծ դժւարութիւններով, որովհետև նախօրօք չէր յայտնւած նրանց (իմա թուրքերին – Հ. Ս.): Բաթումում մեզ լաւ ընդունելութիւն ցոյց տւին: Հետևեալ առաւօտ մենք տեսնւեցինք Էսսատ փաշային հետ: Ես Խորհրդի անունից ողջոյնի խօսք ասեցի՝ յոյս յայտնելով, որ մեր բարեկամական յարաբերութիւնները այսուհետեւ աւելի կամրապնդւեն: Անցանք գործի: Նախօրօք մենք պատրաստել էինք մի յուշագիր (մեմորանդում) այն հարցերի մասին, որ պիտի կազմէր մեր խօսակցութեան նիւթը, այն է՝ սահմանների, գաղթականութեան և թուրք[ական] զօրքի կատարած բռնաբարութիւնների մասին

(կարդում է այդ յուշագիրը[1]): Ամէն մի կէտը մենք պարզաբանում էինք պարզ ու կտրուկ կերպով: Յետոյ խօսեց Յ. Թումանեան այն բռնութիւնների մասին, որոնց ինքը ականատէս է եղել Լոռուայ շրջանում: Փաշան պատասխանեց՝ ինքը կարգապահութեան և արդարութեան կողմնակից է և իրենից կախուած միջոցները ձեռք կառնի՝ բաւարարելու հայերի պահանջները, թէև այդ խնդիրների վերջնական լուծումը տեղի կունենայ [Կ.] Պոլսի խորհրդաժողովում: Մեր անկեղծ ցանկութիւնն է, ասաց նա, որ ձեր տերիտորեան մեծանայ, եթէ այժմ մեր զօրքերը գրաւել են որոշ տեղեր, այդ եղել է ձեր օգտին, որովհետև գերմանո-վրացական զօրքերը ուզում են գրաւել, մանաւանդ որ գեներալ [Թ.] Նազարբէկովը համաձայնւել է դրան, թէև, ի հաստատութիւն վերջինիս, գրաւոր ապացոյց [չ]տուեց: Ես նրան պատասխանեցի, որ գերմանացիք էլ նոյնն են ասում մեզ, աւելի լաւ է դուք ձեր զօրքերը յետ քաշէք, մենք մեր զօրքերով կպահենք մեր սահմանները, եթէ չկարողանանք, կդիմենք ձեր օգնութեան՝ իբրև բարեկամ պետութեան: Նա ասեց, որ չի հաւատում, թէ դուք կարողանաք այդ անել:

Ախալքալաքի գաղթականութեան մասին յայտնեց, որ, շնորհիւ հայերի գազանութիւնների (400 մարդ սպանուած) [տեղի բնակչութեան] մտքերը գրգռուած են, առայժմ չի երաշխաւորում ապահովութիւն տեղական մահմեդականների վրէժխնդրութիւնից, ուստի պէտք է առժամանակ սպասել: Ինչ վերաբերում է մասնակի[2] մարդկանց, թոյլատրւում է նրանց գնալ Ալեքսանդրապոլ, Ղարս՝ անձնական գործերով, դրա համար գրութիւն է

[1] Այս և հաշվետու զեկուցման մեջ հիշատակվող մյուս փաստաթղթերն արխիվային գործում բացակայում են:
[2] Այն է՝ մասնավոր:

տուել Թահսին բէյի անունով, որ այդ գործը կազմակերպի: Այն մասին, թէ Ղարաքլիսում[1] 3 օր կոտորած անելու իրաւունք է տրուած, համարում է սխալ և ապահովութիւն է տալիս մարդիկ ուղարկելու քննութիւն կատարելու համար ոչ միայն Ղարաքլիսի, այլև միւս վայրերի նկատմամբ: Այդ հարցերի առթիւ մենք լրացուցիչ յուշագիր ներկայացրինք (կարդում է): Նրանք մեզ գրաւոր պատասխանեցին (կարդում է): Ղարաքլիսէի դէպքը հերքում են: Բաշաբարանից իրենք զօրքերը իբր թէ յետ են քաշել: Ղամաղլուում հայերը յարձակուել [են] թուրքական զօրքի վրայ, 23 ասկեար սպանել և շատերին վիրաւորել. այս դէպքերը վրդովեցուցիչ են, բայց չենք ուզում ընդհանրացնել և կխնդրէինք նման դէպքեր այլևս չկրկնուեն: Մենք պատասխանեցինք, որ երկրից կտրուած լինելով չենք կարողանում իրազեկ լինել և տեղն ու տեղը մեր ազդեցութեամբ խնդիրները լուծել: Դրա համար անհրաժեշտ է, որ ճանապարհները բացուեն, սահմաններից զօրքերը քաշուեն՝ թողնելով, որ սահմանների խնդիրը՝ իբրև ներքին գործ, լուծուի մեր հարևանների փոխադարձ համաձայնութեամբ: Երբ դժուարանում էր պատասխան տալ, մենք նրա թոյլտուութեամբ հեռագիր ուղարկեցինք Պոլիս՝ մեր պատուիրակութեան՝ շուտափութ պատասխան խնդրելով[2]: Բայց ոչ մի պատասխան չստացանք, [Էսսատ փաշան] խոստացաւ պատասխան ստացուելուն պէս մեզ ուղարկել[3]: Ապա վերջում յանձն առաւ մի կտրուկ շրջաբերական ուղղելու զօրքին ու ժողովրդին, որ բարեկամական յա-

---

[1] Ղարաքիլիսայում:

[2] Տե՛ս № 9 փաստաթուղթը:

[3] Կ. Պոլսի ՀՀ պատվիրակության պատասխան հեռագիրը տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, երկրորդ հրատ., Երևան, 2009, էջ 110-111:

բաբերութիւններ պահեն հայերի հետ, խոստացաւ նաև անձամբ շրջագայել նոյն նպատակով: Իսկ եթէ որևէ բան պատահի, դիմէք ինձ փաստերի ճշգրիտ արձանագրութեամբ, իսկ եթէ ինձ էլ չհաւատաք, ես դիւրութիւն կտամ քննութիւն նշանակելու կատարուած դէպքերի մասին: Մեկնելիս մենք շնորհակալական հեռագիր ուղղեցինք նրան (կարդում է այդ հեռագիրը):

Բագւի վերաբերմամբ նա տուեց մեզ մի գրութիւն: Խնդրում են ճիշտ կերպով իրագործել դաշնագրի այդ կէտը[1], մանաւանդ որ բոլշևիկ զօրքերի մեծ մասը հայեր են: Խնդրում են, որ Ազգային խորհուրդը լրացուցիչ հրահանգ տայ գիւղացիներին, որ չդիմադրեն օսմանցոց, ինչպէս այդ եղել է Կայաբաշ[2] հայ գյուղերում (կարդում է նրանց գրութիւնը): Մենք պատասխանեցինք, որ հայ զօրքերի բոլշևիկացման մէջ մեղաւոր են տեղական թուրքերը, որոնք ճանապարհը փակեցին և թոյլ չտուին հայ զօրքերին հայրենիք վերադառնալու: Դրանից էլ օգտուեցին բոլշևիկները և ահագին ռոճիկներով կարողացան իրենց ազդեցութեան տակ գցել: Այնուամենայնիւ, Ազգային խորհուրդը իր վերցրած պարտականութիւնը կատարելու է. Գանձակում անյաջողութեան է հանդիպել[3], բայց նա կշարունակի այն գործը այլ ուղղութեամբ (կարդում է գրաւոր պատասխանը):

Այսպիսով, մեր պատուիրակութեանը յաջողուեց. 1) պարզել գաղթականութեան խնդիրը, նրանց վերաբերմունքը այդ գոր-

---

[1] Խոսքը 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հայ-թուրքական պայմանագրի մասին է, որով ՀՀ-ն պարտավորվել էր քայլեր ձեռնարկել Բաքվից հայկական զինուժը հեռացնելու նպատակով:

[2] Այդ անվանումով գյուղեր կան Երևանի նահանգի Նոր Բայազետի և Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառներում:

[3] Ճանապարհները փակ լինելու պատճառով Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Մարտիրոս Հարությունյանին և Միշա Արզումանյանին չէր հաջողվել Գանձակով Բաքու մեկնել:

ծին: 2) Իրաւունք ստացուեց քննութիւն կատարելու բռնութիւնների և կոտորածների վերաբերմամբ: Կիսատ մնաց սահմանների խնդիրը, որ, թերևս, շուտ լուծում ստանայ, եթէ Վրաստանի հետ համաձայնութեան գանք: Բագւի խնդիրը կարող է շատ լուրջ հետևանքներ ունենալ, պէտք է միջոցներ ձեռք առնել այդ ուղղութեամբ: Առաջարկում է սրանից բխող բոլոր խնդիրները քննութեան ենթարկել առաջիկայ ժողովում կամ Փոքր խորհրդում:

Վերջում հաղորդում է իր տպաւորութիւնները: Նրանք միշտ փաստերով են խօսում, մենք ևս նոյնն ենք անելու, եթէ ուզում ենք որևէ շօշափելի բան անել: Էսսատ փաշան խելօք է և դէպի հայերը լաւ տրամադրուած է երևում: Մի աւստրիացի սպայ մեզ յայտնեց, որ Էսսատը խելօք, հաստատակամ և վստահելի մարդ է, Նա հակառակ է եղել կառավարութեան հայաջինջ քաղաքականութեան, ինչպէս և Վեհիբ փաշան, և նրանք են փոխել Էնվերի տրամադրութիւնը դէպի հայերը: Նրա ասելով՝ ավստրիացիք, բոլգարացիք ուզում են, որ Կովկասում կազմւի մի կոալիցիոն խնամակալութիւն երեք պետութիւնների վրայ, որովհետև հազիւ թէ նրանք կարողանան ինքնուրոյն գոյութիւնը պահել: Մի ուրիշ աւստրիացի պատմում էր, որ Տաճկաստանում մեծ դժգոհութիւն կայ պատերազմի դէմ, իբրև դրա հետևանք Պոլսում այրուած է 11.000 տուն, ահագին դասալքութիւն կայ ամբողջ երկրում:

Երևանի ներկայացուցիչ Մարգարը յայտնում է, որ, իրօք, Ղամարլ[ւ]ում այդ դէպքը տեղի է ունեցել: Մեր զօրամասն այնտեղից հանուած է, բայց տեղացիք դիմադրել են թուրքերին, որոնցից սպանուած է մինչև 38 ասկեար: Այդ առթիւ ուլտիմատում գրութիւն ստացուեց, հետևանքը իրեն յայտնի չէ:

Վերջում Յ. Թումանեան յայտնում է, որ, ինչպէս երևում է, Վեհիբ փաշան շրջաբերական է ուղարկել հայերի հետ լաւ վարուելու, լաւ կլինի, որ Ազգային խորհուրդը իր կողմից մի կոչ ուղղի ժողովրդին նման բովանդակութեամբ:

Նիստը փակւեց ժամը 12 և կէսին:

Նախագահ՝ [Ա. Սահակեան]

Անդամ-քարտուղար՝ [Ա. Ստամբոլցեան]

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 285, 289-290 շրջ.: Պատճեն: Մեքենագիր:
«Պատմաբանասիրական հանդես», 2014, N 3, էջ 248-250:

№ 11

Հայոց ազգային խորհրդի ժամանակավոր նախագահ Ավետիք Սահակյանի նամակը Կ. Պոլսում գտնվող ՀՀ. պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին՝ Բաթում մեկնած հայկական պատվիրակության գործունեության արդյունքների մասին

7 հուլիսի 1918 թ.

Թիֆլիս

Յուսով ենք, որ մեր ուղարկած հեռագիրները ստացած էք: Պատճէնները ներփակ ուղարկում ենք Ձեզ: Աւստրիացի կուրիերի միջոցով ուղարկած ենք նաև մի ընդարձակ նամակ, քարտէզներ և թերթեր: [...]

Գաղթականութեան դրութիւնը քանի գնում, այնքան սոսկալի է դառնում: Մասնավորապես ծանր է Ախալքալաքի գաղթականութեան դրութիւնը. թափւած Բակուրիանի, պաշարը հատնելու վրայ, այդ գաղթականութիւնը անկարող է վերադառնալ իւր հացառատ շրջանը: Ներփակ նամակից, որ ստացած ենք

Էսադ փաշայից, դուք կտեսնեք, որ տաճիկ հրամանատարութիւնը դեմ [է], որ Ախալքալաքի հայութիւնը վերադառնայ իւր շրջանը:

Երևանից մեզ հաղորդում են, որ տաճիկները մերժում են այդ շրջանում տեղաւորուած գաղթականութեանն էլ վերադառնալ իրենց տեղերը՝ պատճառաբանելով, որ դաշնագրի մէջ այդպիսի կէտեր չկան:

Մեր պատգամաւորութիւնը, որ գնացել էր Բաթում (Ս. Յարութիւնեան, գեներալ [Ի.] Բաղրամով և Յովհ. Թումանեան) Էսսադ փաշայի մօտ, առանձին գրութիւններով դրել էր այդ հարցը Էսսադ փաշայի առաջ և բանակցութիւնների մէջ պարզել էր, որ մեր գաղթականութեանը առայժմ չպիտի թոյլատրւի վերադառնալու իւր տեղերը, որ մեր տերիտորիան այժմ իսկ չի պարպւելու և որ ջարդեր ու թալաններ բնաւ չեն եղել: Եւ համարեայ ձեռնունայն նրանք Բաթումից վերադարձան Թիֆլիս: [...]

Բարևներով՝ ի տ. նախագահի՝ Ա. Սահակեան

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 59, 60 և շրջ., 63: Բնագիր: Ինքնագիր:

№ 12

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գաղթականության խնդրին նվիրված խորհրդակցություն գումարելու պահանջով

4 սեպտեմբերի 1918 թ.

N 40

[Թիֆլիս]

Հայրենակցական միութիւնների միութիւնը իր սոյն թուի սեպտեմբերի 3-ի Ընդհանուր ժողովի նիստում, լսելով յայտարարութիւններ գաղթականական հարցի ներկայ դրութեան և նրա ցանկալի լուծման մասին, գտաւ, որ այդ խնդիրը իր վերջնական տնօրինութեան համար պահանջում է բազմակողմանի և մանրամասն քննութիւն, որպիսին անհրաժեշտ է կատարել ամենամօտ ապագայում և որ այդ՝ մեր իրականութեան ամենահրատապ ու ծանրակշիռ հարցի քննութեան ու լուծման նպատակով անհրաժեշտ է Վրաստանի Հայոց ազգային խորհրդի, Փախստականական գլխաւոր խորհրդի ձեռներեցութեամբ, Հայրենակցական միութիւնների միութեան մասնակցութեամբ գումարել մի ընդհանուր խորհրդակցութիւն՝ բաղկացած նաև միւս հայկական հաստատութիւնների ներկայացուցիչներից, համարելով, որ միայն այդպիսի խորհրդակցութիւնը կարող կը լինի իր կազմով ու հեղինակութեամբ բաւարար կերպով տնօրինել գաղթականութեան հարցը իր ամբողջ ծաւալով, ուստի Միութիւնների միութիւնը, դիմելով Վրաստանի Հայոց ազգային խորհրդին, խնդրում է միջոցներ ձեռք առնել ամենամօտ ապագայում գումարելու վերոյիշեալ խորհրդակցութիւնը:

Նախագահ՝ Յ. Թումանեան

Քարտուղար՝ Հ. Համբարձումեան[1]

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 1 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 86-87:

---

[1] Բանաստեղծ: Նոր Բայազետի հայրենակցական միության ներկայացուցիչ: Հետագայում՝ գիտության վաստակավոր գործիչ:

№ 13

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ վերջինի կազմը միության ներկայացուցիչներով համալրելու մասին

13 սեպտեմբերի 1918 թ.

N 41

[Թիֆլիս]

Հայրենակցական միութիւնների միութիւնը իր սոյն թուի օգոստոսի 20-ի նիստում, քննութեան առնելով Վրաստանի Հայոց ազգային խորհրդին ներկայացուցիչների միջոցով մասնակցելու հարցը և նկատելով, որ Ազգային խորհուրդը, ըստ իր կազմի, հիմնականում լինելով կուսակցական սկզբունքի վրայ, միակողմանի է և, որպէս այդպիսին, չի համապատասխանում գաւառների ներկայացուցչութեան սկզբունքին, և որ այդ պակասը լրացնելու նպատակով Ազգային խորհրդի մէջ ներկայացուցիչներ պէտք է ունենայ Հայրենակցութիւնների միութիւնը, որը բաղկացած է գաւառների ներկայացուցիչներից, որոշեց. մասնակցել Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ ուղարկելով Միութիւնների միութեան կողմից ութ ներկայացուցիչներ:

Յայտնելով վերոյիշեալը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ Հայրենակցութիւնների կենտրոնական խորհուրդը պատիւ ունի խնդրելու ընդունել միութիւնների միութեան ներկայացուցչութիւնը:

Այսուհանդերձ, խորհուրդս յայտնում է, որ միութեան ներկայացուցչութեան անհրաժեշտութիւնը Ազգային խորհրդում պաշտպանելու և այդ մասին բացատրութիւններ տալու համար

լիազօրուած են խորհրդիս անդամներ Պ. Աբելեանը և Բ. Օհանջանեանը:

Նախագահ՝ Յ. Թումանեան

Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 2 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 87:

№ 14

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գաղթականության խնդրին նվիրված խորհրդակցություն գումարելու հարցի մասին

2 հոկտեմբերի 1918 թ.

N 42

[Թիֆլիս]

Խորհուրդս սոյն թուի սեպտեմբերի 4-ի N 40 գրութեամբ դիմել էր Ազգային խորհրդին և խնդրել գումարել ամենամօտ ապագայում գաղթականական խորհրդակցութիւն՝ կազմուած Հայոց գլխաւոր հաստատութիւնների ներկայացուցիչներից՝ քննելու համար գաղթականական խնդիրը իր ամբողջ ծաւալով: Ի պատասխան այս գրութեան՝ Ազգային խորհրդի գործադիր մարմինը յայտնել էր խորհրդիս ներկայացուցիչներին, որ գաղթականական խորհրդակցութիւնը կը գումարուի շատ շուտով, և որ այդ խորհրդակցութեանը կը հրաւիրուին Միութիւնների միութեան ներկայացուցիչները: Սակայն մինչև այսօր այդ խորհրդակցութիւնը ո՛չ միայն Ազգային խորհրդիդ կողմից չի գումարուել, ո՛չ միայն այդ ուղղութեամբ քայլեր չեն արուած, այլ նոյնիսկ Միութիւնների միութեան խորհրդիս վերոյիշեալ գրութ-

ինը ցայսօր մնում է առանց պատասխանի և առանց հետևանքի, ուստի խորհուրդս պատիւ ունի խնդրելու՝ քննել այս դէպքը, պարզել նրա պատճառները և հետևանքի մասին տեղեկացնել Միութիւնների միութեանը:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 3 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 87-88:

№ 15

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գաղթականության խնդրին նվիրված խորհրդակցության հետաձգման առթիվ

11 հոկտեմբերի 1918 թ.
N 45
[Թիֆլիս]

Քննելով Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչի[1] կողմից գումարելիք փախստականական խորհրդակցութեան յետաձգումը, որը, ինչպէս այդ յայտարարուեց խորհրդիս նիստում, պայմանաւորուած է Փախստականական գլխաւոր խորհրդի վարիչ Յովսէփ Արղութեանի՝ Թիֆլիսից Ցալկա[2] մեկնելու հետևանքով: Խորհուրդս իր սոյն թուի հոկտեմբերի 10-ի նիստում գտաւ, որ վերոյիշեալ խորհրդակցութիւնը, որը կոչուած է քննութեան առնելու գաղթականութեան վերաբերեալ յոյժ կարևոր և միան-

[1] 1918 թ. հուլիսի 14-ին Հայոց ազգային խորհուրդը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ էր նշանակել դաշնակցական գործիչ Արշակ Ջամալյանին:
[2] Այսինքն՝ Ծալկա:

գամայն անյետաձգելի խնդիրներ, չպէտք է յետաձգման ենթարկուի և ոչ մի օրով, մանաւանդ երբ յետաձգման պատճառը արտայայտւում է, ինչպէս այս դէպքում, այս կամ այն անձի բացակայութեամբ:

Յայտնելով այս մասին՝ խորհուրդս խնդրում է անյապաղ գումարել վերոյիշեալ խորհրդակցութիւնը:

Նախագահ՝ Յ. Թումանեան

Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 4 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 88:

№ 16

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հրավերը՝ Հաշտության համագումարին հուշագիր ներկայացնելու համար գումարվող հանձնաժողովի նիստին մասնակցելու մասին

1 նոյեմբերի 1918 թ.[1]

N 47

[Թիֆլիս]

Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհրդին կից՝ Հաշտութեան համագումարին հայ ժողովրդի կողմից ներկայացուելիք յուշագիրը (memorandum) կազմելու նպատակով գումարուած յանձնաժողովը պատիւ ունի խնդրելու Ձեզ շնորհ բե-

[1] Փաստաթուղթը Վրաստանի Հայոց ազգային խորհրդում ստացվել է նույն օրը: Հանձնաժողովի նիստը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի մասնակցությամբ գումարվել է նոյեմբերի 2-ին (Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ **Ա. Զաքարյան**, Երևան, 2005, էջ 26-27):

ռել՝ մասնակցելու այդ յանձնաժողովի առաջիկայ նիստին, որը կկայանայ սոյն թուի նոյեմբերի 2-ին՝ շաբաթ օրը, երեկոյեան ժամը 7-ին պ. Յովհաննէս Թումանեանի բնակարանում (Вознесенская 18):

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 29, թ. 5: Բնագիր: Ձեռագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 88-89:

№ 17

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը միությունների վարչություններին՝ վճարումները ժամանակին կատարելու մասին

5 դեկտեմբերի 1918 թ.
N 73
[Թիֆլիս]

Հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը, նկատի առնելով, որ իր ընթացիկ անհրաժեշտ ծախքերը ծածկելու համար հարկաւոր են անյետաձգելի կերպով միջոցներ, համաձայն իր անցեալ որոշումների, խնդրում է հայրենակցութիւնների վարչութիւններին վճարել ոչ ուշ, քան մինչև սոյն դեկտեմբերի 31-ը իրենց գանձած գումարների՝ խորհրդիս հասանելի 5 %%: Այդ %% ստանալու և հաւաքելու համար լիազօրւում է խորհրդիս քարտուղարը:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 7, թ. 30: Բնագիր: Ձեռագիր:

№ 18

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ վրաց-հայկական պատերազմին վերջ դնելու հարցով

[18 դեկտեմբերի 1918 թ.[1]
Թիֆլիս]

Հայ հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը իր դեկտեմբերի 18-ի արտակարգ նիստում քննելով հայ-վրացական ընդհարման[2] խնդիրը եւ ի նկատի ունենալով,

1. որ հարեւան եւ ազգակից ժողովուրդների միջեւ առաջ եկած եղբայրասպան պատերազմը յղի է սարսափելի ծանր ու կործանարար հետեւանքներով,

2. որ այդ ժողովուրդների բարեկամ ու խաղաղ համակեցութիւնն է միակ գրաւականը նրանց քաղաքակրթական յառաջադիմութեան եւ քաղաքական ու տնտեսական բարգաւաճման,

3. որ այդ երկու եղբայր ժողովուրդների պատմութեան մէջ չեղած[3] համակեցութեան խախտումը կնշանակի ոճիր գործել այդ ժողովուրդների խղճմտանքի դէմ,

4. որ չկայ եւ չի կարող լինել այդ երկու ազգակից ժողովուրդների միջեւ եւ ոչ մի դէպք ու ոչ մի խնդիր, որ անկարելի լինէր լուծել հաշտ ու խաղաղ ճանապարհով,

---

[1] Թվագրվում է համաձայն բովանդակության:
[2] Վրաց-հայկական պատերազմը սկսվել էր 1918 թ. դեկտեմբերի 13-ին: Ռազմական գործողություններն ընթացել են մինչև դեկտեմբերի 31-ը:
[3] Այդպես է փաստաթղթում: Պետք է լինի՝ «եղած»:

5. որ այդ համակեցութեան խախտումը կատարւում է այն ժամանակ, երբ այդ ժողովուրդները մտնում են նոր՝ լուսաւոր կեանքի շրջանը,

Որոշեց. ա. բուռն կերպով բողոքել կատարւող արիւնահեղութեան դէմ, բ. պահանջել անմիջապէս դադարեցնել թշնամական գործողութիւնները, գ. ընդհարման պատճառները վերացնելու համար անմիջապէս գումարել հայ-վրացական կոնֆերանս, որի իրաւասութեանը յանձնել նաեւ միւս բոլոր վիճելի խնդիրները[1], դ. տրամադրել երկու կառավարութիւններին Խորհրդիս լայն աջակցութիւնը՝ վերոյիշեալ նպատակներին հասնելու համար եւ ե. այս որոշումը յայտնել երկու կառավարութիւններին, երկու ժողովուրդների ազգային-հասարակական հիմնարկութիւններին եւ ամէն կերպ տարածել այդ ժողովուրդների ամենալայն խաւերի մէջ:

Հայրենակցական միութիւններ. Ալէքսանդրապօլի, Ախալցխայի, Ախալքալաքի, Գանձակի, Գողթնի, Ղազախ-Շամշադինի, Ղարսի, Ղարաբաղի, Լոռու, Հին Նախիջեւանի, Նոր Բայազէտի, Պարսկաստանի, Փամբակի, Շամախու եւ Շուլավերի

Կենտրոնական խորհրդի նախագահ՝ [Յ. Թումանեան]
Քարտուղար՝ [Հ. Համբարձումեան]

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 14, թ. 18 և շրջ.: Թողոն: Մեքենագիր:

---

[1] Վրաց-հայկական պատերազմի ավարտից հետո՝ 1919 թ. հունվարի 9-ին, Դաշնակից պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Թիֆլիսում գումարվեց վրաց-հայկական կոնֆերանս՝ երկու հանրապետությունների միջև առկա խնդիրներին լուծում գտնելու նպատակով (մանրամասն տե՛ս **Հարությունյան Մարտիրոս**, Հայ-վրացական հարաբերությունները 1918–1919 թվականներին (նամակներ, զեկուցագրեր), Երևան, 2017):

№ 19

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հիմնավորումը՝ միությունների անհրաժեշտության մասին

5 փետրվարի 1919 թ.

Թիֆլիս

Անդրկովկասում առաջացած ներկայ սահմաններում բազմահազար հայեր բովանդակող երեք հանրապետության՝ Վրաստանի, Հայաստանի և Ատրպատականի[1] իշխանությունները դեռևս այնքան անկատար են, որ չեն կարողանում բավարարել ինչպես բնակչության բոլոր խավերի, նոյնպես և մանավանդ գավառների պահանջներին: Գավառի բազմաթիվ կարիքները զանց են առնում գլխավորապես այն պատճառով, որ յիշեալ պետությունների մէջ գործող ներկայացուցչական մարմինները՝ պառլամենտները, խորհրդարանները, ազգային խորհուրդները և նմանօրինակ հաստատությունները կազմուած են զուտ կուսակցական սկզբունքով և իրենց մէջ չեն պարունակում գավառների ներկայացուցիչներին: Միւս կողմից, շնորհիւ Անդրկովկասում տիրող քաոսային վիճակի, իրենք՝ գավառներն էլ տակաւին չեն կարողացել իրենց սահմաններում գէթ իրենց տեղական կարիքները հոգալու համար ստեղծել համաժողովրդական ընտրական սկզբունքի վրայ հիմնուած և փոքր ի շատէ կանոնաւոր գործող հիմնարկութիւններ:

Այս պայմաններում հայրենակցութիւնները, որ չեն ընտրուած կուսակցական սկզբունքով, հանդիսանում են այն միակ կազմակերպութիւնները, որ, իբրև օժանդակ մարմիններ, տեղ են հաս-

[1] Նկատի է առնվում Ադրբեջանը:

նում և լսելի են դարձնում գաւառի ձայնը: Հայրենակցութիւնները և նրանց միութիւնը հեռու են քաղաքական պայքարից և իրենց առաջ տեսնում են երկու մեծ նպատակ՝ անդրկովկասեան ազգերի համերաշխութիւնը և հայ ժողովրդի ֆիզիկական ու կուլտուրական գոյութեան ապահովումը: Սակայն հայրենակցութիւնները և նրանց ընդհանուր օրգանը՝ Հայրենակցութիւնների միութիւնը, իրենց վրայ դրուած ծանր և յոյժ պատասխանատու գործը չեն կարող կատարել առանց իրենց հայրենակիցների բարոյական և նիւթական աջակցութեան: Հայրենակցութիւնները, մանաւանդ նրանցից ոմանք, որ գաղթականներ ունեն, իրենց վարչական ծախսերի, գրասենեակներ պահելու վարձատրութեամբ, աշխատաւոր անդամներ ունենալու, գաւառներ ժամանակաւոր կամ մշտական ներկայացուցիչներ ուղարկելու և այլ կարիքների համար նիւթական միջոցների պահանջ են զգում: Այդ միջոցները, դժբախտաբար, չկան, ուստի հայ ժողովրդի համար էական նշանակութիւն ունեցող շատ գործեր մնում են չկատարուած ...

Հայրենակցութիւնների միութեան խորհուրդը այսու դիմում է բոլոր հայերին և յատկապէս հայրենակցութիւնների անդամներին՝ առաջարկելով բոլորին աջակցել հայրենակցութիւնների վարչութիւններին թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս: Նիւթական աջակցութեան կարևորութիւնը պէտք է շեշտել մանաւանդ այն պատճառով, որ հայրենակցութիւնները, բացի նրանց նշանակութիւնը գիտակցողների օժանդակութիւնից, իրենց վարչական կարիքները հոգալու համար ուրիշ աղբիւրներ չունեն:

Հայրենակցութիւնների միութեան խորհուրդը յոյս է տածում, որ հայերը առհասարակ և թիֆլիսաբնակ մեր հայրենակիցները՝ մասնաւորապէս, վերջ կտան հայրենակցութիւնների համար սպանիչ հետևանքներ ունեցող իրենց անտարբերութեան,

կխմբուին այդ կազմակերպութիւնների շուրջը և կաջակցին նրանց բարգաւաճմանը թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս: Հայրենակցութիւնները այժմ էլ, իրենց ներկայ ծանր պայմաններում, հայ ժողովրդի համար կատարում են համեստ, բայց անփոխարինելի մի գործ: Եթէ մեր հասարակութիւնը, գիտակցելով այդ կազմակերպութիւնների գոյութեան անհրաժեշտութիւնը, չմերժի նրանց իր հուժկու աջակցութիւնը, այդ դէպքում հայրենակցութիւնները կդառնան մի դարբնոց, որտեղ ժողովրդի մշակները կկոփեն հայութեան համար ոչ երկրորդական նշանակութիւն ունեցող մի գործ ...

Նախագահ՝ Յ. Թումանեան

Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 20, թ. 6-7: Բնագիր: Ձեռագիր:

«Մշակ» թերթի 1919 թ. մարտի 7-ի համարի հիման վրա տպագրվել է՝ Թումանյան Հ., ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 385-387:

№ 20

ՀՀ մինիստրների խորհրդի որոշումը՝ հոբելյանի առթիվ Հովի. Թումանյանին շնորհավորելու մասին

25 փետրվարի 1919 թ.

[Երևան]

[...] 7. Լսեցին. Մինիստր-նախագահի տեղակալի[1] առաջարկութիւնը՝ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի ծննդեան յիսնամեակը շնորհաւորելու մասին:

Որոշեցին. Ուղարկել շնորհաւորական հեռագիր[2]: [...]

---

[1] Այսինքն՝ Ալեքսանդր Խատիսյանի:

[2] Մարտի 8-ին Հովի. Թումանյանը շնորհակալական հեռագիր ուղարկեց ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանին՝ պատրաստակամություն հայտնելով

ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 31 շրջ.: Բնագիր: Մեքենագիր:
Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918–1920 թթ., Երևան, 2014, էջ 118:

№ 21

Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի հրապարակային նիստը՝ նվիրված Հովհ. Թումանյանի հիսնամյակին

27 փետրվարի 1919 թ.
[Թիֆլիս]

1919 թ. փետրուարի 27-ին Կով[կասի] Հայոց բարեգ[ործական] ընկերութեան ընթերցարանում Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ, Ախալքալաքի, Լոռու, Ախալցխայի, Գանձակի, Փամբակի, Նոր Բայազէտի, Շուլաւերի, Ղարսի, Ղազախի, Գողթնի, Ղարաբաղի, [Հին] Նախիջևանի հայրենակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ կայացաւ Միութիւնների միութեան կենտրոնական խորհրդի հրապարակական[1] նիստը՝ նուիրուած միութեան նախագահ Յովհաննէս Թումանեանի յիսնամեակին:

Նիստին ներկայ էին բազմաթիւ հանդիսատեսներ:

Բանալով նիստը՝ Մ. Աւետիսեանը առաջարկում է պատգամաւորութիւն ուղարկել խորհրդի կողմից Յովհաննէս Թումանեանին հրաւիրելու՝ ներկայ լինելու նոյն նիստին: Խորհուրդը որոշում է ընտրել պատգամաւորներ Մադաթ Պետրոսեանին և [Բագրատ] Շահպարոնեանին՝ յանձնարարելով նրանց անմիջապէս գնալ Յովհաննէս Թումանեանին հրաւիրելու:

իր երեսնամյա գրական գործունեության առթիվ (1920 թ.) Երևան ժամանել (**Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 307):

[1] Այն է՝ հրապարակային:

Համաձայն այս որոշման՝ Մ. Պետրոսեանը և [Բ.] Շահապարոնեանը թողնում են դահլիճը՝ յանձնարարութիւնը կատարելու նպատակով:

Յայտնելով ժողովին, որ առաջարկ կայ Յովհաննէս Թումանեանի՝ որպէս Միութեան նախագահի, յոբելեանին նուիրուի մի բանկետ՝ կազմակերպուած Հայրենակցութիւնների միութեան անունից, նախագահը առաջարկում է արտայայտել այս խնդրի մասին: Խորհուրդը, մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ, որոշում է սկզբունքով ընդունել բանկետ կազմակերպելու առաջարկը, իսկ նրա կազմակերպութեան, ձևի և բովանդակութեան հարցերը քննութեան առնել հետևեալ նիստին:

Այնուհետև յայտնւում է, որ արդէն գալիս է Յովհաննէս Թումանեանը: Նրան ընդառաջ իջնում է փ[ոխ]նախագահ Մարգար Աւետիսեանը: Յոբելեարին, երբ նա Մարգար Աւետիսեանի, Մ. Պետրոսեանի և [Բ.] Շահպարոնեանի ուղեկցութեամբ ներս է մտնում դահլիճ, ժողովն ընդունում է ոտքի կանգնելով, ոգևորուած և երկար ու բուռն ծափահարութիւններով:

Դիմելով Յովհաննէս Թումանեանին՝ Մարգար Աւետիսեանը ողջունում է նրան Հայրենակցութիւնների միութեան խորհրդի կողմից, բնորոշում է նրա գրական-հասարակական գործունէութիւնը որպէս ժողովրդական մեծ ու բարձր գործ և առանձնապէս շեշտում նրա կատարած անգնահատելի ծառայութիւնը հայ ժողովրդի քաղաքակրթական, հոգևոր կեանքում:

Պատասխանելով Մարգար Աւետիսեանին՝ Յովհաննէս Թումանեանը յայտնում է, որ ինքը անչափ յուզուած է այն իսկապէս էական և հայ ժողովրդի համար շատ բնորոշ հանգամանքով, որ նա՝ բազմաչարչար հայ ժողովուրդը, այս արհաւիրքի ու ընդհանուր ձախողութեան օրերին, երբ ահն ու մահն են տիրում

նրա հայրենիքում, կարողանում է, այնուամենայնիւ, աչք բաց անել ցաւ ու տառապանքից և ոգևորուել իր կուլտուրական գործերով, որին լաւ ապացոյց են այսպիսի լաւ հանդէսները: «Այս բանը, – շարունակում է Յով. Թումանեանը, – լցնում է մեր հոգին կենդանի և անմեռ յոյսերով դէպի մեր ազգի ապագան»:

Ստ. Մալխասեանը կանգ է առնում Յով. Թումանեանի բանաստեղծութեան լեզուային արժանիքների վրայ՝ յայտնելով, որ ինքը իրան հպարտ է զգում՝ տեսնելով, թէ որքան հարուստ, ճկուն և բանաստեղծական արժանիքներով օժտուած է հայոց լեզուն, որի ամենափայլուն արտայայտիչն է Յովի. Թումանեանը:

Պատասխանելով Ս. Մալխասեանին՝ Յովի. Թումանեանը աշխատում է ապացուցանել, որ իր արածը՝ որպէս գրական գործ, առանձին մի բան չէ և որ դեռևս յայտնի չէ, թէ այս ամենից, ինչ որ ինքը գրել է, որ մասը կկարողանայ դիմանալ ժամանակի ազդեցութեանը: «Իմ բազմաթիւ գրուածքներից, – ասում է բանաստեղծը, – թերևս շատ և շատ քչերը պէտքական լինեն գալիք սերունդներին: Դեռ աւելին ևս կարելի է ասել. իմ բոլոր գրուածքներից դժուար թէ մի կամ երկու բան մնան ապագայի համար և արևի հզօր ազդեցութեան տակ չխունանան»:

Այնուհետև ողջոյնի խօսք ասում են Համ. Համբարձումեանը, որ ընդգծում է Յովի. Թումանեանի ստեղծագործութեան և հոգեկան աշխարհի համամարդկային էլէմէնտը, Պ. Աբելեանը, որ առանձնապէս կանգ է առնում Յով. Թումանեանի անձնաւորութեան ու գործունէութեան վրայ՝ որպէս հասարակապէս բարձրարժէք քաղաքացու տիպարի վրայ, Ս. Աբովեանը, որ յոբելեարի բնաւորութեան հասարակական կողմերը և առանձնապէս նրա ստեղծագործութեան թռիչքը աշխատում է ապացուցա-

նել իր մանկութեան յիշողութիւններով, որոնք կապած են Յով. Թումանեանի հետ և այլն:

Պատասխանելով [Հ.] Համբարձումեանին, [Պ.] Աբելեանին և [Ս.] Աբովեանին՝ Յով. Թումանեանը կրկին անգամ շեշտում է, որ ինքը առանձնապէս ոչինչ չի արել ու իրանից ոչինչ չի ներկայացնում: «Ախպէ՛ր, էն, ինչ որ դուք բոլորդ ասում էք ու իմ մէջ տեսնում, էդ ամենը հասարակ մի բան է և յատուկ է բոլորիդ», – աւելացնում է բանաստեղծը:

Մարգար Աւետիսեանը, կրկին անգամ ողջունելով, յայտնում է բանաստեղծին, որ բոլոր խօսողները խօսում են անկեղծօրէն և իբրև ընկերներ և որ բոլորի ասածը ճշմարտութիւն է:

– Հենց էդ պատճառով, որ մենք խօսում ենք որպէս ընկերներ, ես հնարաւոր եմ համարում վիճել Ձեզ հետ ձեր ոգևորութեան առարկայի վերաբերմամբ, հէնց էդ պատճառով էլ ձեր բոլորիդ ասածների դէմ ես բերում եմ յարգելի "от водъ"-ներ:

Նախագահ Մ. Աւետիսեանը վերջին խօսքն է ուղղում բանաստեղծին և կրկին անգամ շնորհաւորում նրա յիսնամեակը, նա ողջունում է իր և յոբելեարի ջանքերով ստեղծուած Հայրենակցութիւնների միութեան խորհրդի անունից:

Ղարսի հայրենակցութեան ներկայացուցիչը շնորհաւորում է Ղարսի հայրենակցութեան անունից և ցանկութիւն է յայտնում, որպէսզի հայրենակցութիւնների ու խորհրդի պատմութիւնը գրուի ու առանձին հրատարակութեամբ նուիրուի Յովի. Թումանեանին:

Բանաստեղծը իր բուռն շնորհակալութիւնն է յայտնում ժողովին:

Ոտքի կանգնելով՝ ժողովականները երկար ու բուռն ծափահարութիւններով ողջունում են Յովհաննէս Թումանեանին:

Նախագահը յայտարարում է նիստը փակուած:

Նախագահ՝ Մ. Աւետիսեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 15, թ. 7-9: Բնագիր: Ձեռագիր:

№ 22

Քաղվածք Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստի արձանագրությունից՝ Հովհ. Թումանյանի հոբելյանին նվիրված բանկետ կազմակերպելու մասին

4 մարտի 1919 թ.
[Թիֆլիս]

1919 թ. մարտի 4-ին, Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ, Ախալքալաքի, Գանձակի, Նոր Բայազէտի, [Հին] Նախիջևանի և Ղազախի հայրենակցութիւնների ներկայացուցիչների [մասնակցութեամբ] կայացաւ Միութիւնների միութեան կենտրոնական խորհրդի նիստը:

[...] Մարգար Աւետիսեանը առաջարկում է շարունակել Յով. Թումանեանին նուիրուելիք բանկետի խնդիրը: Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշում է ընտրել մի մասնաժողով, որին և յանձնել բանկետի կազմակերպութեան իրագործումը: Մասնաժողովին իրաւունք տալ կազմել տեղեակ անձանցից մի մարմին, որի հետ և գործակցութեան մէջ մտնել: Յանձնաժողովի անդամներ ընտրուեցին՝ Ար. Տէր-Գրիգորեանը, Ջալալ Տէր-Գրիգորեանը և Հ. Համբարձումեանը՝ խորհրդի կողմից, Աշոտ Աթանասեանը՝ որպէս բանկետի առաջարկ անող: [...]

Նախագահ՝ Մ. Աւետիսեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 15, թ. 4-5: Բնագիր: Ձեռագիր:

№ 23

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդի գաղթականական բաժնին՝ Ղազախի հայությանն օգնելու խնդրանքով

24 մարտի 1919 թ.
N 96
[Թիֆլիս]

Համաձայն Ղազախ-Շամշադինի հայրենակցական միութեան վարչութեան՝ Ղազախի հայ ազգաբնակչութիւնը չափազանց մեծ կարիք ունի հաց և սերմացու ստանալու համար, ըստ որում՝ այդ գաւառին ուղարկուելիք պարէնը նպատակայարմար կը լինի անցկացնել Թովուզ, Աղստաֆա և Այրում կայարաններով: Վերոյիշեալից զատ, ինչպէս երևում է նոյն հայրենակցութեան մարտի 20-ի N 34 յայտարարութիւնից, վերին աստիճանի տխուր և աննախանձելի դրութեան մէջ է գտնւում Ղազախում պատսպարուած գաղթականութիւնը, որի կեանքում սննդի պակասութեան պատճառով տեղի են ունենում սովամահութեան դէպքեր, իսկ մահացութեան դէպքերը և ընդհանուր տոկոսը հետզհետէ աւելանում են, ուստի անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն և գաղթականների կազմակերպուած վերադարձը դէպի հայրենիք:

Յայտնելով վերոյիշեալը՝ հայրենակցութիւնների կենտրոնական խորհուրդը պատիւ ունի խնդրելու Գաղթականական բաժնիդ ձեռք առնել համապատասխան միջոցներ՝ Ղազախի հայ ազգաբնակչութեանը օգնելու և նոյն գաւառում պատսպարուած գաղթականութեան վիճակը թեթևացնելու համար:

Նախագահ՝ Յ. Թումանեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 17, թ. 1 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 89-90:

№ 24

Հովհ. Թումանյանի 50-ամյակին նվիրված Հայ հայրենակցական միությունների միության կազմակերպած երեկույթի հրավիրատոմսը

[1919 թ. ապրիլ[1]
Թիֆլիս]

Հայոց Հայրենակցական Միութիւնների Կենտրոնական Խորհուրդը խնդրում է Ձեզ, մեծարգոյ պարոն, յարգել Ձեր ներկայութեամբ հայրենակցութիւնների միութեան հիմնադիր ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ 50-[ամեակ]ին նուիրուած երեկոյթը, որ տեղի կունենայ սոյն թուի ապրիլի «...»-ին[2], երեկոյեան ժամը «...»-ին, Քաղաքային վարկի ընկ[երութեան] շէնքում, Պուշկինեան փ. N 3 (Городское кредитное о-во, Пушкинская N 3):

Հայրենակ[ցական] Միութիւնների Կենտրոնական Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 7, թ. 46: Տպագիր օրինակ (կնքած):

---

[1] Թվագրվում է համաձայն բովանդակության:
[2] Հովհ. Թումանյանին նվիրված երեկույթը տեղի է ունեցել ավելի ուշ՝ մայիսի 11-ին:

№ 25

Քաղվածք Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստի արձանագրությունից՝ Հովհ. Թումանյանի հոբելյանին նվիրված բանկետ կազմակերպելու մասին

8 մայիսի 1919 թ.
[Թիֆլիս]

8 մայիսի 1919 թ. Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ, Ախալքալաքի, Նոր Բայազէտի, Նուխու, Շամախի-Գէօկչայի, Լոռու, Ղազախի, Ղարսի և Գանձակի հայրենակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ կայացաւ միութեան կենտրոնական խորհրդի նիստը, որը որոշեց. 1. Յովհաննէս Թումանեանին ներկայացուելիք թղթապանակի վրայ արուած ծախքի գումարը հայրենակցութիւններից հաւաքելու գործը յանձնել Մադաթ Պետրոսեանին: 2. Ընտրել մի մասնաժողով, որին յանձնել Յովհ. Թումանեանին նուիրուած երեկոյթի կազմակերպումը: Ընտրւում են՝ Բ. Օհանջանեանը, Ս. Լազարեանը, Բագր. Շահպարոնեանը և Մադաթ Պետրոսեանը: 3. Երեկոյթը կազմակերպել առաջիկայ կիրակի օրը[1]: [...]

Ի. տ. նախագահի՝ Մ. Աւետիսեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 15, թ. 24: Բնագիր: Ձեռագիր:

[1] Այն է՝ 1919 թ. մայիսի 11-ին:

№ 26

Հովհ. Թումանյանին նվիրված բանկետի ժամանակ Հայ հայրենակցական միությունների միության կողմից նրան ներկայացված շնորհավորական գրությունը[1]

11 մայիսի 1919 թ.[2]

Թիֆլիս

Յարգելի բանաստեղծ!

Հազար-հազար տարիներ՝ անվերջ տառապանքների ճանապարհը բռնած, իր տանջանքի գնով, արեան ու արցունքի հեղեղներով հայ ազգը կարողացել է ստեղծել հոգեկան արժէքներ՝ քաղաքակրթութեան ու լոյսի կարօտ, կատարելագործութեան հզօր եռանդ և քաղաքացիական բարձր կեանքով ապրելու անմահ ձգտումներ:

Անժխտելի է, որ մեր ազգային գեղարուեստը՝ մասնաւորապէս բանաստեղծութիւնը, իր ծագման և զարգացման պարագաներով պատկանում է այդ կարգի արժէքներին:

Արդ՝ ինչպէս երկնահաս լեռների կատարներից դիտող հայեացքը դիւրին և հեշտ կարող է թափանցել ու տեսնել շատ հեռաւոր հորիզոններ, այնպիսի հորիզոններ, որոնք այլ պայմաններում, անշուշտ, կը մնային անտես ու անըմբռնելի, այդպէս էլ բանաստեղծի սուր ու կախարդական հայեացքը՝ ուղղելով հոգու վեհ ու լուսաւոր բարձունքներից դէպի կեանքը, դէպի նրա բազմազան երեկոյթները, այնտեղ, նոցա բիւր ելևէջներում, կարողանում է տեսնել, դիտել և ըմբռնել ճշմարտութիւնը, վեր հանել

---

[1] Գրության վերնագիրն է՝ «Յովհաննէս Թումանեանին (1869-1919)՝ Հայրենակցութիւնների միութիւններից»:

[2] Թվագրվում է համաձայն բովանդակության և նախորդ փաստաթղթի:

մարդկային ցեղի կատարելագործութեան յաւիտենական գաղափարը, նրա հոգու զարգացման ազնիւ լոյսը և գեղեցկութիւնը:

Իսկ դու՞ ...

Հարազատ որդիդ հայրենի խրոխտ բնութեան. չէ՞ որ մեզ մօտ դու եկած ես բարձր երկնահաս մեր լեռների կատարներից. չէ՞ որ դու տեսել և դիտել ես հայրենի երկրի կենսուրախ ու փարթամ հովիտները, անդնդախոր ձորերը, ամեհի ու ազգիդ վշտից կնճռոտած ժայռերը, կանաչազգեստ բլուրները, յաւիտենական, չնաշխարհիկ կեանքի լեզուով կարկաչող գետակն ու աղբիւրը, խորհրդաւոր անտառը – երբեմն տխուր ու տերևաթափ, երբեմն էլ ուրախ, ժիր և լեզուանի, աղմկող՝ շաչն ու շառաչը բերնին և մշտապէս կռւարար ջրվէժները և այն ամէնը, ինչ հրաշագործ է, վեհ ու վսեմ:

Տեսած, լսած և հոգեպէս խորը թափանցուած՝ չէ՞ որ դու, չքնաղ քնարիդ լարերին զարկելով, մեզ և մեր ազգին բերել ես այդ հպարտ ու ճոխ բնութեան դիւթիչ երգերը, նրա անմահ բարբառը, անընմբռնելի սէրն ու կարօտը ...

Բանաստեղծ, գալով հայրենի լեռների կատարներից, շնորհիւ թափանցող հայեացքիդ, լայն, բիւրեղ, ընտիր և էապէս ժողովրդական ապրումներիդ, դու կարողացար կանգնել մեր ազգային հոգու ձիւնապատ բարձունքների վրայ և այնտեղից շրջահայեաց ու ազատ նայել և տեսնել ազգի գոյութեան հեռուները, քննել ու կախարդիչ հնչիւններով երգել մեր կեանքի բոլոր կողմերը՝ անցեալը և ներկան:

Տանջուած, վէրքերով լեցուն, բայց և առմիշտ անվհատ հայ ժողովուրդը երկար տարիներ հմայքով ու զմայիլ լսել է և դեռ այսօր շարունակում է կախարդուած լսել քեզ:

Քո սիրուն երգերը լսելով՝ նա ըմբռնել է իր վիշտն ու ցաւը, իր յոյսն ու լոյսը, իր ժպիտն ու թախիծը:

Ստեղծագործութեան գոհարները չեն միայն, որ հրամայական առիթ են տալիս մեզ յայտնելու մեր ամենաբուռն զգացմունքները:

Հասարակական գործի ծանր ճանապարհը բռնած, դու՝ որպէս ճշմարիտ քաղաքացի, միշտ հնչեցրել ես քո խրախուսող ձայնը և ամեն անգամ՝ ձախորդութեան թէ փորձանքի ժամին, հանդէս ես եկել մեզ համար իբրև սուրբ զգացմունքներով և ճշմարտութեան գաղափարով համակուած իսկական առաջնորդ:

Եւ կարող ձեռքիդ բռնած, վեհ վեր բարձրացրած ճանապարհները լուսաւորող և թանձր խաւարի կուրծքը ճեղքող լուսաւոր դրօշակը՝ մեր ազգային հոգու կրակը, դու՝ որպէս մեր կեանքի մարգարէն, միշտ կանչել ես մեզ դէպի արևն ու ազատութիւնը, դէպի եղբայրութեան գաղափարի աշխարհը, դէպի յաւիտենական երջանկութիւնը ...

Եւ ահա, Հայոց հայրենակցութիւնների միութիւնը դառնում է դէպի Քեզ՝ որպէս իր հիմնադրին, և իւր ամենաջերմ զգացմունքներով ի յայտ աշխարհի գոչում է. «Կեցցէ՛ բանաստեղծը, կեցցէ՛ ճշմարիտ քաղաքացին»:

Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալաքի, Արդահան-Օլթու, Արդանուշ-Շաւշէթի, Բուլանլուղի, Գանձակի, Գողթնի, Լոռու, Ղազախ-Շամշադնի, Ղարսաբաղի, Ղարսի, [Հին] Նախիջևանի, Նոր Բայազէտի, Նուխու, Շամախի-Գէօկչայի, Շուլավերի և Փամբակի հայրենակցութիւններ

Ի. գ.[1] Հայրենակցական միութիւնների միութեան
կենտրոնական խորհրդի նախագահ՝ *Մ. Աւետիսեան*
Քարտուղար՝ *Հ. Համբարձումեան*
Անդամներ

Կազմել է Համազ[ասպ] Համբարձումեան, ընդունուեց խորհրդի մայիսի 8-ի նիստում, կիրակի՝ մայիսի 11-ին, Յ. Թումանեանին գրուելի թէյըմպումին թղթապանակի մէջ ներկայացնելու համար: Քարտ. Պ. Աբելեան: Ախալքալաքի հայրենակցութեան կողմից՝ Բ. Օհանջանեան և Պ. Աբելեան, Ջ. Տէր-Գրիգորեան, հին նախիջևանցիների կողմից՝ Յ. Արիստակէսեան, ստորագր[ել] են նոյնպէս՝ Մ. Աւետիսեան և այլք: Առաջինը ստորագրեցին, որպէս Թումանեանին մօտ մարդիկ, Ջ. Տէր-Գրիգորեան և Մ. Պետրոսեան»:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 19, թ. 1-2: Մեքենագիր օրինակ:

№ 27

Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստի արձանագրությունը՝ Հովհ. Թումանյանի հոբելյանի առթիվ կազմակերպված բանկետի արդյունքներն ամփոփելու մասին

15 մայիսի 1919 թ.
[Թիֆլիս]

Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ կայացաւ Հայրենակցութիւնների միութեան կենտրոնական խորհրդի նիստը:

Ներկայ էին Ախալքալաքի, Գանձակի, Ղազախի, Լոռու, Շամախի-Գէօկչայի, Նուխու, Ղարսի, Արդահանի և Նոր Բայազէտի հայրենակցութիւնների ներկայացուցիչները:

---

[1] Փաստաթղթի այս և հաջորդ շեղատառ հատվածները ձեռագրով ավելացրել է Պողոս Աբելյանը:

Նիստի քարտուղարութեան պաշտօնը կատարում էր միութեան քարտուղար Հ. Համբարձումեանը:

Բանկէտի կարգադրիչ յանձնաժողովը ներկայացրեց մանրամասն հաշիւ Յովի. Թումանեանի 50-ամեակին նւիրւած երեկոյթի մասին: Հաշւից երևաց, որ մասնադրութեամբ երեկոյթի համար հաւաքւած է եղել մէկ հազար չորս հարիւր րուբլի և որ այս գումարը ամբողջովին ծախսւել է երեկոյթի վրայ:

Խորհուրդը որոշեց՝ հաշիւը հաստատել:

Նոյն կարգադրիչ յանձնաժողովը ներկայացրեց Յովի. Թումանեանին ներկայացւած թղթապանակի հաշիւը. թղթապանակի համար հայրենակցութիւնների վարչութիւններից հաւաքւած է եղել ընդամէնը իննը հարիւր ութսուն և հինգ (985 ր.) րուբլի, ըստ որում՝ վարչութիւններից ոմանք վճարել են 100 ր., ոմանք էլ՝ 50-80 րուբլի: Այս գումարի հանդէպ ծախսւած է՝ 1. թղթապանակի կաշւէ աշխատանքը՝ 600 ր., 2. նրա կազմը՝ 100 ր., 3. աստառը՝ 180 ր. և 4. ուղերձի տպագրութիւնը՝ 125 րուբլի: Բացի այդ՝ տոմսակների տպագրութեան վրայ, ի հաշիւ նոյն փողի, ծախսւած է 200 րուբլի: Այսպիսով՝ թղթապանակի նպատակով հաւաքւած է եղել միայն 985 ր., ուստի կարգադրիչ յանձնաժողովի անդամ Ս. Լազարեանը երկու հարիւր քսան րուբլին ծախսել է իր անձնական միջոցներից:

Խորհուրդը որոշում է. ա. Յանձնաժողովի հաշիւը հաստատել, բ. Հայրենակցութիւնների վարչութիւններից պ. Մադաթ Պետրոսեանի ձեռքով հաւաքել պակաս գումարը՝ երկու հարիւր քսան (220 ր.) րուբլի և այդպիսին վճարել պ. Ս. Լազարեանին և գ. Կարգադրիչ յանձնաժողովին յայտնել շնորհակալութիւն:

Նախագահ՝ Մ. Աւետիսեան
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 15, թ. 25-26: Բնագիր: Ձեռագիր:

№ 28

Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի նախագահ Հովհ. Թումանյանի գրությունը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը՝ հանձնաժողովին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով

28 հունիսի 1919 թ.
Թիֆլիս

Միսիայի՝ ամսիս 27-ի N 1829 գրութիւնը, որ վերաբերում է պ. [Ա.] Խատիսեանի N 2153 ինձ ուղղած հեռագրին, պատիւ ունեմ յայտնելու հետևեալը.

Էդ հեռագիրը պատասխան է էն զեկուցագրի, որ ուղարկել եմ ես մեր կառավարութեանը՝ իրեն պ. նախարարապետի անունով[1]՝ Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ յանձնաժողովի մասին և խնդրել եմ. 1. մի հարիւր տասը հազար ռուբլի՝ քննիչ յանձնաժողովի ծառայողների չվճարած ռոճիկները վճարելու և արած պարտքերը հատուցանելու առ 15 ապրիլի, 2. 50 հազար ռուբլի՝ կիսատ մնացած գործը վերջացնելու և 3. 50 հազար ռուբլի՝ յանձնաժողովի Ղարաբաղի ճիւղին ուղարկելու: Ընդամէնը՝ երկու հարիւր տասը հազար ռուբլի:

---

[1] Այն է՝ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանին ուղղված իր 1919 թ. հունիսի 7-ի գրությունը (**Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 320-326):

Քննիչ յանձն[աժողովի] նախագահ՝ Յովհ. Թումանեան

ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 202, թ. 33: Բնագիր: Ինքնագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 90:

№ 29

ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության գրությունը Հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանին՝ գրողներին նպաստ հատկացնելու մասին

9 հուլիսի 1919 թ.
N 1309
[Երևան]

Կառավարութեան որոշմամբ[1] մի հարիւր հազար ռ. է յատկացւում՝ հայ գրողներին, հրապարակախօսներին եւ գիտնականներին նպաստ տալու նպատակով: Նպաստի տուչութիւնը թողնւում է Հայ գրողների ընկերութեան վարչութեան հայեցողութեանը[2], որը, սակայն, ի նկատի է ունենալու հետեւեալ նորմերը.

ա. Նպաստը տրւելու է յիշեալ կատեգորիայի արեւելահայ թէ արեւմտահայ անձանց՝ անխտիր Հայաստանում, թէ այլուր ապրողներին,

բ. Նպաստ տալու իւրաքանչիւր դէպքի մասին կայացած պատճառաբանւած որոշման պատճէնը ուղարկւելու է Հանրային կրթութեան եւ արւեստի մինիստրութեան:

---

[1] Որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության 1919 թ. հուլիսի 7-ի նիստում (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2014, էջ 243):

[2] Այս առթիվ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանին ուղղված Հովհ. Թումանյանի նամակները տե՛ս Թումանյան Հ., ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 327-330, 670-672:

Հանրային կրթութեան եւ արուեստի մինիստր՝ [Ս. Տիգրանեան]
Դիւանապէտ

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 218, թ. 54: Ռոզոն: Մեքենագիր:

№ 30

Հայ գրողների ընկերության վարչության գրությունը ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանին՝ վարչությանը հանձնված դրամական նպաստը բաշխելու հարցի մասին

13 սեպտեմբերի 1919 թ.
Թիֆլիս

Ստանալով Հանրային կրթութեան եւ արուեստի տէր նախարարի գրութիւնը, որով առաջարկում էր վարչութեանս գրութեան հետ փոխադրած հարիւր հազար ռուբլին բաժանել իբրև նպաստ վարչութեանս հայեցողութեամբ Թիֆլիս եւ այլուր գտնւած հայ գրողներին, գիտնականներին և հրապարակախօսներին, վարչութիւնս նախապէս խորհրդակցելով մեր ականաւոր գրողների հետ և նկատի ունենալով, որ դա պաշտպանութիւն է Հայոց գրականութեանը և ոչ թէ բարեգործութիւն, որ նպաստը, աչքի առաջ ունենալով դրամի արժէքի անկումը, պէտք է այնպիսի չափով բաշխել, որ լինի փոքր ինչ շօշափելի, իր տարւոյս յուլիս 20-ի ժողովում որոշեց այդ գումարը առաջին հերթին բաժանել հետեւեալ անձերին.

1. Յովհաննէս Թումանեանց – 10 հազար ռուբլի (նպաստից հրաժարւում է մինչև միւս բաշխումը)
2. Յովհաննէս Յովհաննիսեան – 10 “ “
3. Դերենիկ Դեմիրճեան – 10 “ “

4. Շիրվանզադէ – 10 “ “

5. Վրթանէս Փափազեան – 10 “ “

6. Նար-Դոս – 10 “ “

7. Նիկողայոս Աղբալեան – 10 “ “ (նպաստից հրաժարւում է մինչև միւս բաշխումը)

8. Մանուկ Աբեղեան – 7 “ “

9. Լէօ – 10 “ “

10. Ստեփան Կանայեան – 7 “ “

11. Երուանդ Տէր-Մինասեան – 7 “ “

12. Գիւտ ա[ւագ] ք[ահանայ] Աղանեանց – 7 “ “

13. Սմբատ Տէր-Աւետիսեանց – 7 “ “

14. [Դաւիթ] Անանուն – 7 “ “

Բայց որովհետև, բացի վերոյիշեալներից, կան նոյնպէս ուրիշ գրողներ, որոնք նոյնպէս գտնւում են կարօտութեան մէջ, ուստի վարչութիւնս կազմեց նաև 19 հոգու մի երկրորդ ցանկ, որոնց և որոշեց բաժանել 50.000 ռուբլի, որպիսի գումարը սպասւում էր Կովկ[ասի] Հ[այոց] բարեգործական ընկերութեան կողմից նոյն նպատակով: Միևնոյն նիստում վարչութիւնը որոշում կայացրեց շարունակել գրողների այդ ցուցակը, ուր մտցնել նաև Տաճկաստան և այլուր մեզանից անծանօթ մնացած այլ գրողներին և նրանց համար միջնորդել Հայաստանի Հանրապետութեան առաջ՝ տրամադրելու վարչութեանս դարձեալ մի գումար՝ բաւարարելու նաև երրորդ ցուցակի գրողներին:

Հազիւ թէ այս որոշումը կայացել էր, բայց տակաւին չէին ստացել թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ գումարները, երբ վարչութիւնս ստացաւ ընկերութեան 10 անդամի ստորագրութեամբ մի յայտարարութիւն, որով յիշեալները խնդրում էին անյապաղ

ընդհանուր ժողով գումարել՝ 100.000 ռուբլու մասին կարգադրութիւններ անելու համար: Վարչութիւնս անյապաղ հրաւիրեց ընդհանուր ժողով, որ ունեցաւ երեք նիստ:

Ընդհանուր ժողովը հենց առաջին նիստում որոշեց քանդել վարչութեանս որոշումը և ընտրել իր միջից մի նոր յանձնաժողով, որին և յանձնել 100.000 ռուբլու բաշխման գործը՝ ի միջի այլոց առարկելով, թէ նպաստ ստացողների մէջ կան վարչութեան անդամներ, սակայն հենց նոյն ընդհանուր ժողովը կայացրեց որոշում, որ դրամաբաշխ մասնաժողովի անդամները իրաւունք ունէին նպաստ ստանալ:

Սրանից յետոյ եղած ժողովում ընդհանուր ժողովը գտաւ իր որոշումը հակասական և փոխեց իր այդ որոշումը:

Վարչութիւնս, նկատելով այդ ընդհանուր ժողովի կողմից իրեն յայտնուած անվստահութիւն և ակնյայտնի վիրաւորանք, որոշեց հրաժարուել նպաստը բաշխելուց և որևէ յանձնաժողովի հետ բաշխման գործին մասնակցելուց և այդ մասին յայտարարեց հետևեալ ընդհանուր ժողովին:

Նոյն ժողովին այն 12 անձերը, որոնց վարչութիւնս որոշել էր յատկացնել յիշեալ գումարը, վարչութեանս նախագահի միջոցով յայտարարեցին, որ իրենք ևս հրաժարւում են դրամ ստանալ այն ընկերութեան միջոցով, որը մինչև այդ օրը ոչ մի նպաստ ստացողի անուն չի հանել հրապարակ նոյնիսկ հաշուետուութիւնների մէջ, իսկ այժմ իրենց անունները դարձրել են հրապարակական վիճաբանութեան և վիրաւորանքի առարկայ:

Չնայելով այս բոլոր յայտարարութիւններին՝ ընդհանուր ժողովը որոշեց ընտրել հինգ հոգուց մի մասնաժողով, որին և յանձնարարեց դրամն ստանալ և բաժանել ըստ իր հայեցողութեան:

Ընդհանուր ժողովները, առհասարակ, այն տեսակ կերպարանք էին առել, որ վարչութիւնը և նպաստառու գրողները մնացին իրենց որոշման վրայ և հրաժարեցին մէկը բաշխելուց ու միւսները՝ նպաստ ստանալուց:

Վերոյիշեալների մասին վարչութիւնս հարկ է համարում, տէ՛ր նախարար, զեկուցանել Ձեզ՝ ի տնօրէնութիւն:

Սրա հետ վարչութիւնս ուղարկում է իր յուլիս 20-ի օրագրի վաւերացրած պատճէնը[1] և մասնաժողովի ամբողջ գրագրութիւնը՝ խնդրելով վերջինս վերադարձնել կարևորութիւնն անցնելուց յետոյ:

Վարչութեան նախագահ՝ Յ. Թումանեան
Անդամ-քարտուղար՝ Գիւտ ա. ք. Աղանեանց

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 218, թ. 138 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

№ 31

ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության գրությունը Հայ գրողների ընկերության վարչությանը՝ տրամադրված նպաստի անդորագրերը ներկայացնելու մասին

10 մարտի 1920 թ.
N 1120
[Երևան]

Անցեալ տարւայ օգոստոսի 5-ին փոխադրւած է վարչութեանդ նախագահ Յովհաննէս Թումանեանին մի հարիւր հազար ռուբլի՝ հայ գրողներին և գիտնականներին մասնատրելու համար:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 218, թ. 139-140 շրջ.:

Դիւանս սրանով կրկին անգամ խնդրում է ներկայացնել այդ դրամի գործադրութեան հաշիւն ու փաստաթղթերը՝ պետական վերահսկողութեանը ներկայացնելու համար:

Աւելորդ չէ յիշել, որ դիւանս ստիպւած է կրկնել իր խնդիրը, որովհետև առաջին դիմումը մինչև այսօր մնացել է անհետևանք:

Դիւանի տեսուչ
Գործ[ավար]

ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 251, թ. 22: Ռոտոն: Ձեռագիր:

№ 32

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հրավերը հայկական մշակութային հաստատություններին՝ մասնակցելու Վրաստանի բանաստեղծության և գրականության ազգային տոնին

30 ապրիլի 1920 թ.[1]
[Թիֆլիս]

Վրաց գրողների համագումարը որոշել է մայիսի 7-ը դարձնել Վրաստանի բանաստեղծութեան եւ գրականութեան ազգային տօնի օր եւ առաջին տօնը կատարելու է առաջիկայ մայիսի 7-ին:

Հայ գրողների վարչութիւնը եւ Հայ հայրենակցական միութիւնների կենտրոնական խորհուրդը որոշել են մասնակցել այդ տօնակատարութեան՝ հրաւիրելով նաեւ մեր կուլտուրական հաստատութիւններին միանալու իրենց հետ: Ուստի խնդրում

[1] Նուխիի, Արեշի և Զաքաթալայի հայրենակցական միությունում հրավերը ստանալու ամսաթիվը:

ենք ուղարկել Ձեր մէկ ներկայացուցչին խորհրդակցութեան, որ տեղի կունենայ կիրակի օրը՝ մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 6-ին [Հայոց] ազգային խորհրդի դահլիճում[1]:

Հայ գրողների վարչութեան եւ Հայ հայրենակց[ական] միութ[իւնների] կենտրոնի նախագահ՝ Յ. Թումանեան
Անդամ՝ Հ. Դարբինեան

Մակագրություն. «Նուխու, Արեշի, Զաքաթալ[այ]ի հայրենակց[ական] միութիւն: III արական գիմնազիա: Միք. Զարգարեանին»:

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 21, թ. 1 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

№ 33

Երևանում գտնվող Հովհ. Թումանյանին[2] ուղղված ռադիոհեռագիր (պատճենը՝ Գեորգի Օրջոնիկիձեին)՝ խորհրդային զորքերի ճամբար տեղափոխվելու մասին[3]

25 մարտի 1921 թ.

Մեր կողմից բռնագրավված է ձեր հեռագիրը ընկ. [Գ.] Օրջոնիկիձեի անվամբ՝ Հայաստանում Փրկության կոմիտետի կողմից ղեկավարվող ապստամբության բնույթի մասին[4]: Ըստ էության չպատասխանելով ձեր տեղեկատվությանը, մեր բանակի և նրա հետ նահանջած մեծաքանակ գաղթականների անունից

---

[1] Հովհ. Թումանյանն այս առթիվ 1920 թ. մայիսի 6-ին մամուլում հանդես եկավ նաև հատուկ կոչով (**Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 398-399):

[2] Հայաստանում ծավալվող քաղաքացիական պատերազմին վերջ տալու նպատակով Հովհ. Թումանյանը 1921 թ. մարտի 20-ին ժամանել էր Երևան:

[3] Հավանաբար ռադիոհեռագիրն ուղարկել է Հայաստանի հյուսիսային շրջանների ռազմհեղկոմի նախագահ Գևորգ Աթարբեկյանը:

[4] Նշյալ հեռագիրը տե՛ս **Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 375:

մենք առաջարկում ենք ժամանել մեզ մոտ և անձնապես համոզվել՝ ումից է բաղկացած և ում դեմ է կռվում հայկական Կարմիր բանակը, որը ղեկավարվում է Խորհրդային Հայաստանի հեղափոխական կոմիտեի կողմից: Ձեր միակողմանի տեղեկատվությամբ, ինքներդ էլ չգիտակցելով, վատ ծառայություն եք մատուցում հայ աշխատավոր ժողովրդին, որի լավագույն որդիները այժմ գտնվում են մեր բանակի շարքում: Կամ Ձեր ժամանման մասին մեզ տեղեկացրեք:

ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 361, թ. 33: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

№ 34

Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կովկասյան մասնաճյուղի կառավարչի ճաշի հրավերը Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանին

6 ապրիլի 1921 թ.
Երևան

Իմ նախկին հրավերի ձեր ընդունելությունը մերժվել է մեր հսկողությունից դուրս գտնվող պայմաններում:

Հուսով եմ, այժմ Դուք կնդունեք իմ հրավերը և Ձեր ներկայությամբ կհարգեք մի պարզ ճաշ, շաբաթ օրը՝ ապրիլի 9-ին, ժամը 16:00-ին:

Ես հրավիրել եմ նաև հետևյալ ընկերներին. արտաքին գործերի և ներքին գործերի կոմիսարներին[1], ինչպես նաև բանաստեղծ Հովհ. Թումանյանին և [Վ.] Դերոյանին[2]:

---

[1] Այսինքն՝ Ասքանազ Մռավյանին և Իսահակ Դովլաթյանին:
[2] Վարազդատ Դերոյանը (Տերոյան) պաշտոնավարում էր Ամերկոմում:

Հարգանքներով՝ Ձեր Ք. Դ. Աշեր

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 4, թ. 44: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն անգլերենից:

№ 35

ՀՍԽՀ արտգործժողկոմատի գրությունը անցագրերի բյուրոյին՝ Հովհ. Թումանյանին, դստերը և թոռանը Թիֆլիս ուղևորվելու անցագիր տրամադրելու հարցով

16 ապրիլի 1921 թ.
N 1017
Երևան

Խնդրում եմ Ձեզ սոյնը հանձնողի հետ Արտաքին գործերի կոմիսարիատ ուղարկել Թիֆլիս ուղևորուելու անցագիր Յովհաննէս Թումանյանի, դստեր՝ Աշխեն Խատիսեանի[1] և թոռան՝ Հովիկ Խատիսեանի անուամբ:

Արտգործժողկոմ՝ [Ա.] Մռաւեան
Քարտուղարի փոխարեն՝ [Մ.] Խոջամիրեան

ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 18, թ. 195: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 90:

---

[1] Աշխենը դաշնակցական ճանաչված գործիչ, իրավաբան Գևորգ Խատիսյանի (Ա. Խատիսյանի եղբոր) կինն էր:

№ 36

ՀՍԽՀ արտգործժողկոմատի կողմից Հովհ. Թումանյանին տրված անցագիրը՝ Թիֆլիս մեկնելու առթիվ

18 ապրիլի 1921 թ.
N 1034
Երևան

Սույն անցագիրը տրվում է Հովհաննես Թումանյանին առ այն, որ նրան դստեր՝ Ա[շխեն] Խատիսյանի և թոռան՝ Հովիկ Խատիսյանի հետ թույլատրվում է մեկնել Թիֆլիս:

Սույնը վավերացվում է ստորագրությամբ և կնիքով:

Արտգործժողկոմ՝ [Ա. Մռավյան]
Քարտուղարի փոխարեն՝ [Մ. Խոջամիրյան]

ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 18, թ. 205: Պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 91:

№ 37

Հովհ. Թումանյանի մասնակցությունը Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիր համագումարին

I նիստ

13 սեպտեմբերի 1921 թ.
Երևան

Երեկոյեան ժ[ամը] 6-ին մօտ 40 հրաւիրուածների ներկայութեամբ նիստը բացուած յայտարարեց ընկ. Արամ[այիս] Յերզնկեանը[1], որը և նոյն կոմիտէի կազմակերպման նախաձեռնող խմբակի կողմից զեկուցեց հետևեալը.

---

[1] Վերջինս 1921 թ. մայիսից ՀՍԽՀ հողագործության ժողկոմն էր:

Ընկերնե՛ր, հասարակական գործիչների մի խմբակի մէջ միտք յղացաւ օգնութեան հասնել Հայ[աստանի] խորհ[րդային] կառավարութեանը այն բոլոր ձեռնարկներում, որը ուղղւած է Հայաստանի ազգաբնակչութեան տնտեսական դրութեան բարելաման և Հայաստանի վերաշինութեան գործին: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ համարւեց հայ ժողովրդի բոլոր կենսունակ և աշխատանքի տրամադիր ոյժերը՝ հասարակական գործիչներ, գրականագէտներ, գեղարւեստագէտներ և այլն, ի մի համախմբել և կազմել մի այնպիսի կոմիտէ, որը վերոյիշեալ նպատակը կարողանար իրագործել՝ ամուր կապ հաստատելով արտասահմանի հայ գաղութների և մայր երկրի միջև: [...]

Ընկ. Յովհ. Թումանեանը, խօսք առնելով, նախ ողջունում է այս կոնֆերանսը, մատնանշում է, որ այժմ ամենակենսական և այրող ընթացիկ հարցը սովամահ լինելիք աշխատաւոր մասսաները ազատելու հարցն է, ուստի և յոյս է յայտնում, որ կոմիտէն առաջին հերթին իր ուշադրութեան առարկայ կը դարձնի սովեալների խնդիրը: Նա յայտնում է, որ իր ունեցած տեղեկութեանց համաձայն՝ Հայաստանը հացի կողմից ապահովւած է միայն մինչև դեկտ[եմբեր] կամ յունւ[ար] ամիսը, թէև կան գաւառներ, ուր մինչև իսկ օգոստ[ոս] ամսին սով էր, օրինակ՝ Ղազախն ու Լոռին: [...]

III նիստ

16 սեպտեմբերի 1921 թ.
Երևան

Նիստը բացեց նախագահ ընկ. Ար. Յերզնկեանը և խնդրեց [ՀՍԽՀ ժողկոմխորհի] նախագահին ներկայացող պատգամաւորութեանը զեկուցել իր միսիայի մասին:

Պատգ[ամաւորութեան][1] կողմից խօսք առաւ ընկ. Յ. Թումանեան, որ յայտնեց, թէ նախագահ ընկ. [Ա.] Մեասնիկեանը շատ սիրալիր կերպով ընդունել է պատգ[ամաւորութեան]ը և, մի երկու կէտերի նկատմամբ իւր անհատական կարծիքը յայտնելուց յետոյ, խոստացել է իրան ներկայացրած «Հայ[աստանի] օգն[ութեան] կոմիտէի» կանոնադրութիւնը նոյն երեկոյեան ևեթ ներկայացնել Ժողկոմների խորհրդին, որը, յիրաւի, նոյն երեկոյ քննութեան ենթարկելով կանոնադրութիւնը, փոքրիկ փոփոխութիւններով հաստատել է այն[2]: [...]

IV նիստ

18 սեպտեմբերի 1921 թ
Երևան

Նիստը բացուեց ցերեկ[ւայ] ժ. 11-ին:

Նախագահ ընկ. Ար. Յերզնկեանը, նիստը բացելով, յայտնում է, որ ներքին կանոնադրութիւնը արդէն պատրաստ է և կարդում է ամբողջովին: Ապա ժողովականների ցանկութեամբ կարդացւում է յօդուած առ յօդուած: [...]

Կարծիքների փոխանակութիւնից յետոյ ժողովը միաձայն[հուրդ] հաւանութեամբ Կենտ[րոնական] վարչութեան նախագահ ընտրեց ընկ. Արամայիս Յերզնկեանին:

---

[1] ՀՕԿ-ի հիմնադիր համագումարի 1921 թ. սեպտեմբերի 14-ի (թիվ 2) նիստում որոշվել էր Հովի. Թումանյանի նախագահությամբ (անդամներ՝ Լեո, Ալ. Տեր-Վարդունի, Ալ. Պապովյան և Տ. Հովհաննիսյան) պատվիրակություն կազմել՝ կազմակերպության կանոնադրության նախագիծը ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանին ներկայացնելու համար:

[2] 1921 թ. սեպտեմբերի 28-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը դեկրետ ընդունեց Հայաստանի օգնության կոմիտեի մասին, հաստատվեց նաև վերջինի կանոնադրությունը (ՀՍԽՀ դեկրետների եւ որոշումների հաւաքածու, Երևան, 1921, N 9, էջ 71):

Անդամներ ընտրվեցին՝ Յովհ. Թումանեան, Եր. Թաղիանոսեան, Ալ. Պապովեան, Յովհ. Մելիքեան, Գ. Տէր-Օհանեան, Գ. Վարդանեան, Ս. Կասեան, Ս. Յարութիւնեան և Դր. Տէր-Սիմոնեան և Կ[ենտրոնական] վարչ[ութեան] նիստերին վճռական ձայնի իրաւունքով մասնակցելու էր Խորէն [արք]եպիսկոպոս Մուրադբէկեանը՝ իբր Պոլսոյ Սովելոց յանձնաժողովի ներկայացուցիչ:

Վեր[ստուգիչ] յանձ[նաժողով]ի անդամներ ընտրուեցին՝ Ս. Կանայեան, Գ. Պիճիկեան, Գ. Եվանգուլեան, Պօղոս Աբելեան, և նիստը փակուեց ցերեկ[այ] ժ. 3-ին:

V նիստ

20 սեպտեմբերի 1921 թ.
Երևան

Նիստը բացեց ընկ. Ար. Յերզնկեանը երեկ[ոյեան] ժ. 6 1/2-ին և յայտնեց, որ օրակարգի խնդիրներն են՝ 1) նախորդ արձանագրութիւնների ընթերցումն ու վաւերացումը, 2) պրեզիդիումի խմբագրած շրջաբերականի և կոչի ընթերցումն ու հաստատումը: [...]

Այնուհետև ընկ. Յովհ. Թումանեանը կարդում է սկզբում լրիւ, ապա մաս առ մաս պրեզիդիումի խմբագրած կոչը:

Կոչի շուրջը առաջ եկաւ եռանդուն կարծիքների փոխանակութիւն՝ յատկապէս ոճի և դիմումի ձևի մասին:

Ապա հարց յարուցեց, թէ ովքե՞ր էին ստորագրելու կոչը. կոմիտէի անդամները՞, թէ՞ պրեզիդիումը:

Կարծիքների փոխանակութիւնից յետոյ նախագահը քւէարկեց հետևեալը. «Ո՞վ է կողմնակից, որ կոչը կոմիտէի կողմից

հրատարակի և կամ ո՞վ, որ պրեզիդիումի կողմից է ցանկանում հրատարակել»:

Կոմիտէի կողմիցը ստացաւ 13 ձայն, իսկ պրեզիդիումինը՝ 11 ձայն: Այսպէս որոշուեց կոչը ևս հրատարակել կոմիտէի անունից: [...]

ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 1, թ. 1, 2, 5, 6 և շրջ., 9 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:
«Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 2, էջ 99-104:

№ 38

Հովհ. Թումանյանի ելույթը Հայաստանի օգնության կոմիտեի Վրաստանի մասնաճյուղի հիմնադիր ժողովում

22 հոկտեմբերի 1921 թ.
Թիֆլիս

Նիստը բաց արեց [ՀՕԿ-ի] Երևանի կենտրոնական կոմիտէի նախագահ Յով. Թումանեանը և զեկուցեց կոմիտէի նպատակների մասին:

Օգնութեան կոմիտէի նպատակն է Հայաստանում սպասուելիք սովի առաջն առնել և առաջ տանել երկրի շինարարական գործը: Այդ նպատակով, բացի Երևանի կենտ[րոնական] կոմիտէից, օժանդակ կոմիտէներ են հիմնւում թէ՛ կովկասեան միւս հանրապետութիւնների քաղաքներում՝ Թիֆլիս, Բաքու և այլն և թէ՛ արտասահմանի հայաշատ կենտրոններում, ինչպէս Կ. Պոլիս, Գահիրէ, Փարիզ և այլն:

Դրամական օգնութիւն հասցնելու են հեռաւոր վայրերից, արտասահմանից, որովհետև վալիտային տեսակետից արժէք ունին այնտեղից ուղարկւածները, իսկ կովկասեան քաղաքներից նպատակայարմար է համարուել օգնել իրեղէններով՝ շինարա-

րական և կուլտուրական գործին վերաբերող: Զեկուցողը ցաւ յայտնեց, որ Երևանից դեռ չի ստացած կենտր[ոնական] կոմիտէի կողմից խմբագրուած ստատուտը[1], որի մէջ աւելի մանրամասն գրուած են կոմիտէի նպատակների և իրաւունքների մասին: [...]

ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 6, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

№ 39

Խորհրդային Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության դիմումը ՎՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատին՝ ՀՕԿ-ի գործերով Կ. Պոլիս մեկնող Հովհ. Թումանյանի և Ե. Թաղիանոսյանի ուղեբեռը մաքսային զննման չենթարկելու հարցով

22 հոկտեմբերի 1921 թ.
N 5925
Թիֆլիս

Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը խնդրում է թույլտվություն տալ, որպեսզի արտասահման գործուղման մեկնող ընկերներ Հովհաննես Թումանյանի և [Երվանդ] Թաղիանոսյանի ուղեբեռը մաքսային զննման չենթարկվի:

Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության քարտուղար
Գործավար

ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 71, թ. 156: Թողոն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

---

[1] Կանոնադրությունը:

№ 40

Խորհրդային Վրաստանի արտաքին գործերի ժողկոմատի պատասխան գրությունը ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությանը՝ Հովհ. Թումանյանի և Ե. Թաղիանոսյանի առաքելության մասին լրացուցիչ տեղեկություններ հայտնելու խնդրանքով

9 նոյեմբերի 1921 թ.
N 9803
Թիֆլիս

Արտգործժողկոմատը ներկայացուցչությանդ խնդրում է, ի հավելումն հոկտեմբերի 22-ի N 5995 գրության, առավել մանրամասն տեղեկություններ հայտնել արտասահման գործուղվող Հովհաննես Թումանյանի և [Երվանդ] Թաղիանոսյանի, ինչպես նաև նրանց վերապահված հանձնարարության մասին:

Գործերի կառավարիչ (ստորագրություն)
Ընդհանուր բաժնի վարիչ (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 71, թ. 176: Բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

№ 41

Հայրենիքի օգնության մարմնի և Հայաստանի օգնության կոմիտեի համատեղ կոչը՝ ՀՕՄ-ի մասնաճյուղեր կազմակերպելու և հայրենիքին օժանդակելու մասին

1 դեկտեմբերի 1921 թ.
Կ. Պոլիս

Մեծայարգ Հայրենակիցներ,

ՀՕՄ-ը, հիմնուած 24 հոկտ[եմբեր] 1920 Կ. Պոլիս, կազմուած է քաղաքական չորս կուսակցութիւններու, մամուլի եւ 43 միութիւններու ներկայացուցիչներէն, նպատակ ընտրած է իր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը ընծայել Մայր-Հայրենիքին: ՀՕԿ-ը, հիմնուած Հայաստանի մէջ, որուն կանդամակցին երկրի եւ Կովկասի հայ բոլոր հոսանքներու ղեկավարները, առաջադրած է կուիլ սովին դէմ եւ օգնել Հայաստանի վերաշինութեան:

Այսպէս ուրեմն՝ ՀՕՄ-ը եւ ՀՕԿ-ը, իրենց հետ ունենալով արեւելահայ եւ արեւմտահայ մտաւորական եւ հասարակական ուժերու ամբողջութիւնը, նոյն սրբազան յառաջադրութիւնը ունին՝ պահպանել հայ ժողովուրդի ֆիզիկական գոյութիւնը և նպաստել Հայաստանի վերաշինութեան աշխատանքին: Մենք համոզուած ենք, որ ծրագիրը, զոր գծած են արեւմտահայերը Պոլսոյ մէջ եւ արեւելահայերը՝ Հայաստանի մէջ, պիտի դառնայ օրակարգը բոլոր հայերուն, ուր որ ալ գտնուած ըլլան անոնք: Ինչքան ալ գաղափարական ըլլայ պայքարը, զոր զանազան կուսակցութիւններ, նոյնիսկ յանուն Հայաստանի բարօրութեան, յանուն հայ ժողովուրդի երջանկութեան, այնքան մոլեգնօրէն կը մղեն իրարու դէմ, պէտք է դադրի այդ պայքարը հոն, ուր մեծ օրակարգը կը սկսի՝ Հայաստան եւ հայ ժողովուրդ: Մենք հոս եւ Հայաստանի մէջ հաստատած ենք ներդաշնակ համագործակցութեան կարելիութիւնը, կարգը արտասահմանինն է:

Հայրենակիցնե՛ր,

ՀՕՄ-ի և ՀՕԿ-ի անունով կոչ կուղղենք ձեզի, որպէսզի փութաք ՀՕՄ-եր կազմել: Մեր կոչը պարտականութեան հրաւէրէն աւելի բանաձեւուած աշխատանքի մը հաղորդագրութիւնն է, որովհետեւ մեզի ծանօթ է այն մաքուր տրամադրութիւնը, որ կայ

արտասահմանի մէջ հայ ժողովուրդին եւ հայ հայրենիքին նկատմամբ:

Հայրենակիցնե՛ր,

Ամէն քաղաք պէտք է իր անկախ ՀՕՄ-ը ունենայ, այս կերպով ստեղծելու համար ազգային պաշտպանութեան հզօր կազմակերպութիւն մը, որուն նշանաբանները, հաւատացած ենք թէ, պարտադիր պիտի ըլլան բոլոր հայերուն համար:

Այս կերպով ՀՕՄ-ը մեծ ընտանիք մը պիտի ըլլայ, որուն ոեւէ մէկ անդամ, ինչ քաղաք ալ փոխադրուած ըլլայ ան, պիտի ունենայ այն բոլոր իրաւունքները, զոր ունին այդ քաղաքի ՀՕՄ-ի անդամները:

Ձեզ կը ղրկենք ՀՕԿ-ի ստատուտը եւ ՀՕՄ-ի ծրագիրը, որպէսզի ձեր տեղական պայմաններուն յարմարցնելով, կաշխատէք ձեր սեփական մարմինները:

Խորին յարգանքներով՝

Դիւան ՀՕՄ-ի կեդր[ոնական] վարչութեան
ատենադպիր Յովհ. Չալլքեան
ատենապետ փոքթ. Վ. Ալթունեան

Դիւան ՀՕԿ-ի նախագահութեան
անդամ-քարտուղար՝ Ե. Թաղիանոսեան
նախագահ՝ Յովհ. Թումանեան

ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 2: Բնագիր: Մեքենագիր:

Մակարյան Լ., Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921–1937 թթ.), Երևան, 2018, էջ 32:

№ 42

ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատի գրությունը Հովի. Թումանյանին՝ նրա նամակը ստանալու մասին

6 հունիսի 1922 թ.
N 3239
Երևան

Ձեր գրությունը՝ ուղղած Հայաստանի լուսժողկոմին, գրված մայիսի 17-ին[1], կոմիսարիատս ստացել է և զեկուցվել լուսավորության ժողովրդական կոմիսար ընկ. Պ. Մակինցեանին, որը մակագրել է վրան՝ «կցել գործին»:

Լուսժողկոմի գործերի վարիչ

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 63, թ. 50: Թողոն: Ձեռագիր:

№ 43

Քաղվածք Հայաստանի օգնության կոմիտեի առաջին համագումարի նիստի արձանագրությունից

20 հուլիսի 1922 թ.
N 1
[Երևան]

Հողային ժողովրդական կոմիսարիատի սրահում բացվեց ՀՕԿ-ի և ճյուղերի 1-ին համագումարը, որին ներկա էին 23 հիմնական անդամներ և 6 պատգամավորներ: Համագումարը բաց է անում ՀՕԿ նախագահ Ա. Երզնկյանը՝ ողջունելով ՀՕԿ-ի նախագահության կողմից առաջին համագումարը: [...]

---

[1] Հայերենի ուղղագրությունը փոխելու առթիվ ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ Պողոս Մակինցյանին ուղղված Հովի. Թումանյանի 1922 թ. մայիսի 17-ի նամակը տե՛ս **Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 414:

Նախագահը, լրացնելու համար այս զեկուցումը[1], կարդում է Թիֆլիսից ստացված ՀՕԿ նախագահ Հով. Թումանյանից մի նամակ[2], որով նա հայտնում է իր և [Ե.] Թաղիանոսյանի [Կ.] Պոլիս կատարած առաքելության մասին՝ հայտնելով, որ Պոլսում օգնության մարմինը ստեղծված է և փոխադարձ կապ հաստատված Երևանի ՀՕԿ-ի հետ: Նույնպիսի մարմիններ կազմված են և այլ գաղութներում:

Մեծ եռանդով աշխատում է Պոլսի ՀՕԿ-ը, և շատ ջերմ վերաբերմունք է ցույց տալիս օգնության գործին արտասահմանի հայությունը՝ հանդեպ Մայր երկրին:

Նույնպիսի դրական վերաբերմունք ունեն քաղաքական կուսակցություններն էլ: Ռամկավար-ազատական և դաշնակցական կուսակցության ներկայացուցիչների հետ ՀՕԿ-ի պատվիրակությունը մի խորհրդակցության ընթացքում երկու կուսակցություններն էլ որոշեցին շրջաբերականներ ուղարկել իրենց ճյուղերին՝ անվերապահորեն նպաստելու Հայաստանի օգնության գործին:

Վերջում Թումանյանը ավելացնում է, որ [այս] ամենը վստահություն են ներշնչում՝ ասելու, թե Հայաստանի օգնության կոմիտեի գործը, մեր երկրի վերաշինության գործը հաստատուն հիմք ունի մեր գաղթավայրերում և գործը կենդանի տանելու դեպքում արդյունավետ է լինելու բառի ընդարձակ իմաստով:

---

[1] Խոսքը Կ. Պոլսի ՀՕՄ-ի պատգամավոր Մելքումյանի՝ կազմակերպության գործունեության մասին զեկուցման մասին է:

[2] Հ. Թումանյանի 1922 թ. հուլիսի 11-ի նամակը տե՛ս **Թումանյան Հ.**, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 523-524, հ. 10, Երևան, 1999, էջ 418-420:

Նախագահը, կարդալով այս նամակը, առաջարկում է ողջունել ՀՕԿ-ի նախագահ Հով. Թումանյանին և ցանկանալ նրան առողջություն: Առաջարկությունն ընդունվում է: [...]

ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 33, թ. 36, 37: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

№ 44

Հայաստանի օգնության կոմիտեի որոշումը՝ Հովհ. Թումանյանին դրամական օժանդակություն ցուցաբերելու մասին

28 հուլիսի 1922 թ.

N 1

[Երևան]

[...] Նախագահութիւնը առաջարկութիւն մտցրեց ծանր հիւանդութեամբ տառապող և այժմ ապաքինման շրջանում գտնուող Յովհաննէս Թումանեանին՝ իբրև ՀՕԿ-ի նախկին նախագահի, օգնութեան գալ՝ տրամադրելով նրան մի գումար 1000-1500 ռ.: Կոմիտէն, ի նկատի ունենալով, որ ներկայումս իր տրամադրութեան տակ ոչ մի գումար չունի, որոշեց յիշեալ նպատակին յատկացնել միմիայն 300 ռուբլի ոսկով, որպիսի գումարը վերցնել փոխարինաբար: [...]

Նախագահ՝ Ա. Յերզնկեան

Անդամ-քարտուղար՝ Կ. Գիւլնազարեան

ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 35, թ. 2: Բնագիր: Ձեռագիր:

№ 45

Հովհ. Թումանյանի որդու՝ Համլիկի դիմումը ՀՍԽՀ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանին՝ ընտանիքին օժանդակելու և հոր ձեռագրերն անխաթար պահպանելու խնդրանքով

28 մարտի 1923 թ.

Բեռլին

Տարաբախտ հորս մահը Մոսկվայում ս. թ. մարտի 23-ին էնքան անսպասելի էր և տարաժամ, որ ես չհասայ նրան՝ գէթ մահից առաջ մի երկու խօսք ասելու և լսելու: Այժմ Բեռլին եմ և կշռելով հանգամանքները, որոնք շատ են ծանր և պատասխանատու հանդէպ իմ ընտանիքի, ես ստիպած եմ վերադառնալ Փարիզ՝ աւարտելու Սորբոնը, որ դեռ մի տարի ունեմ: Էդ է եղած և հորս վերջին ցանկութիւններից մէկը. դժուար է շեղուել սիրելի հայրիկիս պատուերից, սակայն եթէ սովետ[ական] իշխանութիւնը ինձ կպահանջի ներկայանալ՝ ես անմիջապէս կդառնամ Թիֆլիս, Երևան, մանաւանդ որ երբէք քաղաքականութեամբ չեմ զբաղուել, ո՛չ մի կուսակցութեան չեմ պատկանած և, փառք Աստուծոյ, Թիֆլիսից մեկնել եմ սովետ[ական] իշխ[անութեան] գիտութեամբ և թոյլտուութեամբ[1]:

Սիրելի ընկ. [Ա.] Մռաւեան, ես գիտեմ էն բուռն յարգանքն ու սէրը, որ տածում էր սով[ետական] իշխ[անութիւն]ը դէպի յանգուցեալ հայրիկս և էդ պատճառով վստահ եմ, որ աչքաթող չէք

---

[1] Համլիկ Թումանյանը 1920 թ. հանդոսացել է ՀՀ կառավարության դիվանապետը: Նույն պաշտոնն է վարել նաև Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շաբաթներին և Հայրենիքի փրկության կոմիտեի ղեկավարման շրջանում: 1921 թ. փետրվարյան հակախորհրդային ապստամբության պարտությունից հետո տարագրվել է Պարսկաստան, ապա՝ վերադարձել Թիֆլիս: 1921 թ. հոկտեմբերին ուսումնառության նպատակով մեկնել է Վենետիկ, այնուհետև՝ Փարիզ: Հետագայում վերադարձել է Խորհրդային Միություն: Բռնադատվել է:

անի մեծ բանաստեղծի անօգնական ընտանիքը վշտի էս դժբախտ օրերին: Բացի էդ, խնդրում եմ Ձեզ, յանուն հայ գրականութեան և պատմութեան, կարգադրէք, որ ո՛չ ոք իրեն իրաւունք չհամարի խառնել և քրքրել հօրս ձեռագրերն ու թղթերը: Ես գտնում եմ յարմար, որ լաւ կլինէր կնքուէին նրա գրասեղանն ու բիւրօ-պահարանը՝ մինչև նոր կարգադրութիւն, կամ իմ վերադարձը: Լինելով գրականութեան ուսանող՝ ես մօտ եմ կանգնած հօրս գործերին (բայց ո՛չ տաղանդին) և կարող եմ մեծ խնամքով ու զգուշութեամբ կարգի բերել բոլոր գործերն ու թղթերը:

Եղբայրս՝ Արեգը, էդտեղ է, նա երևի ձեզ հետ կտեսնուի և կանէք յարմարագոյնը՝ ձեռագիրներն ու գործերը անվնաս և խնամքով պահելու համար:

Հաճեցէք, սիրելի ընկեր, երկտողով պատասխանել իմ էս գրութեանն ու նախկին խնդրիս Բեռլին՝ ընկ. Սիմ. Փիրումեանի միջոցով:

Իմ հասցէս. H. Toumanean, 3, Rue Casimir Delavigne Paris, 6 (France).

Սրտագին բարևներով՝ Ձեր վշտահար Հ[ամլիկ] Թումանեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2ա), գ. 1, թ. 30ա և շրջ.: Բնագիր: Ինքնագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 91:

№ 46

Հովհ. Թումանյանի որդու՝ Համլիկի դիմումը Բեռլինում Անդրկովկասյան Դաշնության տնտեսական ներկայացուցիչ Սիմոնիկ Փիրումյանին՝ իր ուսման ծախսերը հոգալու խնդրանքով

29 մարտի 1923 թ.
Բեռլին

Հօրս՝ բանաստեղծ Յովհ. Թումանեանի տարաբախտ մահից յետոյ մնում է մի մեծ ընտանիք, որը ո՛չ մի գումարի հասոյթ չունի: Ես շատ լաւ գիտեմ մեր սովետ[ական] իշխանութեան միանգամայն ազնիւ վերաբերմունքն ու յարգանքը դէպի իմ յանգուցեալ հայրը, էդ պատճառով էլ համոզուած եմ, որ Հայաստանի իշխանութիւնը աչքաթող չի անի հօրս որբացած ընտանիքը:

Միւս կողմից ես եմ էն աւագ որդին, որ կարիք ունեմ օր առաջ աւարտելու կիսատ ուսումս և վերադառնալու՝ հայրիկիս օջախը կանգուն պահելու և ուժերս իմ ժողովրդին տրամադրելու համար: Յայտարարելով ինձ Հ[այաստանի] սով[ետական] իշխանութեան լիակատար տրամադրութեան տակ և նոյնիսկ Ձեր, պատրաստ լինելով մեկնելու Հայաստան համաձայն Ձեր առաջին հրահանգի՝ ես խնդրում եմ, յարգելի ընկեր, հայթայթել ինձ համար որևէ օժանդակութիւն, թէկուզ և պետական նպաստ՝ հնարաւորութիւն տալով ինձ 2 սեմեստր անցնելու Սորբոնում և աւարտական քննութիւն տալու եկող փետրուարին կամ, թերևս, սոյն նոյեմբերին: Խոստանում եմ աւարտելուց անմիջապէս մեկնել Փարիզից Հայաստան՝ իմ համախոհ մի քանի ընկերների հետ միասին:

Անցեալ տարին տաժանելի պայմաններում անց կացրի. հայրս տառապում էր անկողնում և ես Փարիզում միանգամայն զուրկ [էի] որևէ օժանդակութիւնից:

Այժմ, աւելի քան երբևէ, իմ միակ յոյսն ու աղբիւրը, որին կարող եմ դիմել և արդիւնքի սպասել, դա մեր ներկայ իշխանութիւնն է, որի օժանդակութիւնն եմ խնդրում՝ մի տարով ինձ ապահովել Փարիզում ուսումն աւարտելու համար: Մասնագիտութիւնս է գրականութիւն-փիլիսոփայութիւն:

Հաճեցէք, յարգելի ընկեր, Ձեր արած կարգադրութեան և դիմումի մասին իրազեկ անել ինձ:

Հասցէս: H. Toumanean, 3, Rue Casimir Delavigne Paris, 6 (Frankreich).

Սորբոնի գրական բաժնի ուսանող՝ Համլիկ Թումանեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2ա), գ. 1, թ. 30 և շրջ.: Բնագիր: Ինքնագիր:
«Էջմիածին», 2009, սեպտեմբեր (Թ), էջ 92:

№ 47

ՀՍԽՀ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի «գաղտնի» նշագրումով երկտողը ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանին՝ Հովհ. Թումանյանի որդի Համլիկի խնդրանքի մասին

[1923 թ. մայիս
Երևան]

Աշոտ,

Ուզում եմ հեռագրել Սիմոնիկին[1], որ Համլիկի[2] խնդիրը հարգել չենք կարող, իսկ ընտանիքի ապահովության հարցը կլուծենք դրականորեն: Հայտնիր կարծիքդ[3]:

Ասքանազ [Մռավյան]

Մակագրություն. «Համաձայն եմ: Աշոտ Հովհաննիսյան»:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2ա), գ. 1, թ. 28: Բնագիր: Ինքնագիր:

---

[1] Սիմոնիկ Փիրումյանը:

[2] Համլիկ Թումանյանը:

[3] 1923 թ. ապրիլի 3-ին Ա. Մռավյանին գրած նամակում Ս. Փիրումյանն առաջարկել էր ընդառաջել Համլիկ Թումանյանի խնդրանքներին և ամսական 30-40 ռուբլի հատկացնել: Համլիկին կրթաթոշակ տրամադրելը, Ա. Մռավյանի խոսքերով, մերժվել է «քաղաքական նկատառումներով» (ՀԱԱ, ֆ. 122, ց. 3 (2ա), գ. 1, թ. 28-29):

№ 48

Հովի. Թումանյանի այրու՝ Օլգայի դիմումը ՀՍԽՀ լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ ամուսնու երկերի հրատարակության հոնորարն ընտանիքի անդամներին փոխանցելու հարցով

19 ապրիլի 1925 թ.

Թիֆլիս

Հայաստանի լուսժողկոմատը 1924 թվին հրատարակել է Հով. Թումանյանի «Գիքոր» պատմվածքը[1], այժմ էլ, ինչպես լսում ենք, լուսժողկոմատը որոշում է կայացրել հրատարակել Հով. Թումանյանի մանկական գրվածքների ամբողջ սերիան և մամուլի տակ են էդ սերիայից «Գելը»[2] և «Տերն ու ծառան»[3]:

Թողնելով մի կողմ են հանգամանքը, որ Հով. Թումանյանի երկերը, համաձայն օրենքի, արդեն մեծ ծավալով օգտագործվում են դասագրքերում և նրա ընտանիքը վաղուց չի օգտվում նրա կազմած դասագրքերից, լուսժողկոմատը իր վերջին կայացրած որոշումով, այն է՝ հրատարակել նրա մանկական գրվածքները առանց հեղինակի ժառանգների գիտության, խախտում է հեղինակի իրավունքի դեկրետը:

Սրանով դիմում եմ լուսժողկոմատին, որ Հով. Թումանյանի երկերի հրատարակության ժամանակ լուսժողկոմատը անտես չանի հեղինակի ժառանգներին և առհասարակ մեկընդմիշտ պարզ ու որոշ լինի մեր փոխհարաբերությունները էդ խնդիրներում, քանի որ նրա ընտանիքի համար էդ խնդիրները երկրորդական նշանակություն ունեցող խնդիրներից չեն:

---

[1] Տե՛ս **Թումանյան Հ.**, Գիքորը, Երևան, Պետհրատ, 1924, 32 էջ:

[2] Տե՛ս **Թումանյան Հ.**, Գելը, Երևան, Պետհրատ, 1925, 36 էջ:

[3] Տե՛ս **Թումանյան Հ.**, Տերն ու ծառան, Երևան, Պետհրատ, 1925, 8 էջ:

Մակագրություն. «...[1] և խնդրել Հովի. Թումանյանի գրվածքների հրատարակության համար ընդունած որոշման քաղվածքը և տալ տեղեկանք՝ ինչքան գումար է տրված նրա ընտանիքին: 6/5, Ա. Մռավյան»:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 189, թ. 4 և շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

№ 49

Հովի. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստի արձանագրությունը

14 հունվարի 1929 թ.

N 1

[Երևան]

Ներկա էին՝ [Ա.] Մռավյան, Սերիկ ([Դավթյան]), [Շ.] Գարագաշ, [Ս.] Կանայան, [Ռ.] Դաշտոյան, [Լ.] Օհանյան, Մ. Գևորգյան և [Վ.] Ռևազով:

Նախագահ՝ Մռավյան, քարտուղար՝ Ռևազով

ԼՍԵՑԻՆ – 1. Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարելու մասին (զեկ.՝ ընկ. [Ա.] Մռավյան):

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Առաջարկել ընկ. Սերիկին պիոներ կազմակերպության և կոմսոմոլի հետ միասին մշակել դպրոցներում կազմակերպվելիք հանդեսների ծրագիրը և այդպիսին ներկայացնել հանձնաժողովին՝ ի քննություն:

---

[1] Փաստաթուղթը վնասված լինելու պատճառով մակագրության առաջին բառերը չեն ընթերցվում:

2. Հանձնարարել Պետհրատին մինչև փետրվարի 10-ը հրատարակել Հ. Թումանյանի մանկական գրվածքներից 3 անուն՝ նախօրոք համաձայնեցնելով ընկ. Սերիկի հետ:

3. Առաջարկել Հանրային գրադարանի և Պետ[ական] թանգարանի վարչություններին Հ. Թումանյանի 60-ամյակի առթիվ հատուկ ցուցահանդես կազմակերպել:

4. Առաջարկել Քաղլուսգլխվարչության նախ[ագահ] ընկ. [Պ.] Ֆոլյանին, ՀԱՄԽ-ի կուլտբաժվար ընկ. [Շ.] Գարագաշին և «Կորչի անգրագիտությունը» [ընկերության] խորհրդի նախագահ ընկ. [Ռ.] Դաշտոյանին՝ հոբելյանական մասսայական հանդեսների պլան մշակել և ներկայացնել հանձնաժողովին:

5. Առաջարկել Գիտ[ության] և արվեստի ինստիտուտին՝ Հ. Թումանյանի հիշատակին նվիրված հատուկ հանդիսավոր նիստ կազմակերպել դասախոսությամբ:

6. Դիմել Պրոլետ[արական] գրողների և աշխատավոր[ական] գրողների միությանը՝ հայտնելու, [թէ] ինչ են մտադիր անելու:

7. Առաջարկել Պետհրատին՝ 2 օրվա ընթացքում հայտնել հանձնաժողովի նախագահին Հ. Թումանյանի ընտիր գրվածքների հրատարակության մասին:

8. Առաջարկել Արհլուսգլխվարչությանը[1] իր գծով կազմակերպվելիք հանդեսների ծրագիր մշակել և ներկայացնել հանձնաժողովին:

9. Խնդրել Երևանի բոլոր թերթերի և ամսագրերի խմբագրություններին՝ նախապատրաստական աշխատանքներ տանել:

---

[1] Լուսժողկոմատի արհեստագիտական լուսավորության գլխավոր վարչություն:

10. Պահանջված բոլոր առաջարկները գրավոր կերպով բերել հանձնաժողովի հետևյալ նիստին, որը հրավիրել շաբաթ՝ հունվարի 19-ին, առավոտյան ժամը 10-ին:

Նախագահ՝ Ա. Մռավյան

Քարտուղար՝ Վ. Ռևազով

Իսկականի հետ ճիշտ է՝ ԼԺԿ-ի գործավար Եր. Խոջայան

ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 189, թ. 2: Վավերացված պատճեն: Մեքենագիր:
ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 9: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

№ 50

Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակը տոնող հանձնաժողովի հերթական նիստին մասնակցելու հրավեր

[18 հունվարի 1929 թ.[1]
Երևան]

Վաղը՝ հունվարի 19-ին, առավոտյան ժամը 10-ին լուսժողկոմ ընկ. [Ա.] Մռավյանի առանձնասենյակում հրավիրվում է Հովհաննես Թումանյանի 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստ՝ համաձայն այդ հանձնաժողովի որոշման (14/1, արձանագրութ[յուն] N 1):

Հրավիրվում են՝ 1. [Ա.] Մռավյան, 2. Սերիկ, 3. [Պ.] Ֆոլյան, 4. [Գ.] Ստեփանյան (լուսաշխ), 5. [Լ.] Վարդունի, 6. Արտո Եղիազարյան, 7. Հայկուշ Թումանյան, 8. [Ռ.] Դաշտոյան, 9. [Ն.] Մակինց, 10. ՀԿ[(բ)]Կ ԿԿ ագիտոբաժնի ներկայացուցիչ, 11. ՀԱՄԽ-ից՝ [Շ.] Գարագաշ, 12. ԼԿԵՄ կենտկոմ, 13. Գեղաշխի ներկայացուցիչ, 14. [Ս.] Կանայան, 15. Պրոլետ[արական] գրող-

[1] Թվագրվում է համաձայն բովանդակության:

ների միություն[1], 16. Աշխատավորական գրողների միութ[յուն][2], 17. Հանրային գրադարան՝ Մամիկոն Գևորգյան, 18. Պետ[ա-կան] թանգարանի վարչութ[յուն][3]:

ԼԺԿ-ի ընդհ[անուր] բաժնի վարիչ՝ Վ. Ռևազով

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 8: Բնագիր: Մեքենագիր:

№ 51

Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստի արձանագրությունը

[19 հունվարի 1929 թ.[4]

N 2

Երևան]

Ներկա էին՝ [Ա.] Մռավյան, Սերիկ, [Վ.] Ալազան, [Դ.] Դեմիրճյան, Հ. Թումանյան, Հ. Պետրոսյան, Ս. Կանայան, Մ. Գևորգյան, Ա. Թումանյան:

Նախագահ՝ Մռավյան, քարտուղար՝ Ռևազով

ԼՍԵՑԻՆ – 1. Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հանրային գրադարանի և թանգարանի վարչության հայտարարությունը, որ Հ. Թումանյանի հիշատակին նվիրված կազմակերպվելու է մանուկ ընթերցողների զրույցի երեկո, առնել ի գիտություն:

2. Հանձնարարել Հանրային գրադարանի և թանգարանի վարչությանը Հ. Թումանյանի հիշատակին նվիրված ցուցահան-

---

[1] Ներկայացուցիչը Վահրամ Ալազանն էր:

[2] Ներկայացուցիչը Դերենիկ Դեմիրճյանն էր:

[3] Ներկայացուցիչը Երվանդ Շահազիզն էր:

[4] Թվագրվում է՝ համաձայն նախորդ փաստաթղթի:

դեսի էկսպոնատների[1] բացատրություն տալու համար նշանակել հատուկ անձնավորություններ: Միաժամանակ հանձնարարել թանգարանի վարչությանը՝ միջոցներ ձեռք առնել հավաքելու թանգարանում Հովհաննես Թումանյանի գրվածքները՝ թե՛ ձեռագրերը և թե՛ տպագրվածները:

3. Հանձնարարել ընկ. Ա. Թումանյանին ցուցահանդեսի համար հավաքել Հով. Թումանյանի գրական-հասարակական կյանքին վերաբերող նյութերը:

4. Առնել ի գիտություն Պրոլետ[արական] և Աշխ[ատավորական] գրողների հայտարարությունը, որ Հով. Թումանյանի հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական երեկո են կազմակերպելու:

5. Հանձնարարել ընկ. Մռավյանին՝ տարեդարձը անցկացնելու համար պահանջված դրամական միջոցներ գտնել:

6. Գտնել անհրաժեշտ ռադիոյի գծով կազմակերպելու հատուկ երեկո՝ [նվիրված] Հովհաննես Թումանյանի հիշատակին:

7. Պետ[ական] կոնսերվատորիայի վարչության հետ պարզել «Անուշ»-ի բեմադրության հարցը և հատուկ երեկո կազմակերպել՝ նվիրված Հով. Թումանյանի հիշատակին:

8. Քաղլուսգլխվարից[2] և Պիոներական կենտ[րոնական] բյուրոյից պահանջել շտապ ներկայացնել իրենց գրավոր ծրագիրը:

9. Հանձնարարել Պետհրատին հանձնարարված բոլոր գրքերի և նկարների հրատարակությունը շտապ վերջացնել:

10. Փետրվարի 19-ից մինչև 26-ը համարել հատուկ շաբաթ՝ [նվիրված] Հ. Թումանյանի հիշատակին:

---

[1] Ցուցանմուշների:

[2] Լուսժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչություն:

11. Հով. Թումանյանի կյանքի և ստեղծագործման[1] մասին կազմել թեզեր և ուղարկել բոլոր լուսիիմնարկներին:

12. Խնդրել ՀԱՄԽ-ին բանակումբներում կազմակերպել հատուկ երեկոներ՝ [նվիրված] Հով. Թումանյանի հիշատակին:

13. Գրել Հայկ[ական] դիվիզիայի քաղբաժնին՝ Հովի. Թումանյանի շաբաթի մասին և խնդրել ծրագիրը:

Նախագահ՝ Ա. Մռավյան

Քարտուղար՝ Վ. Ռևազով

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 5 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

№ 52

Լուսավորության ժողկոմատի սոցիալական դաստիարակության գլխավոր վարչության շրջաբերականը գավառային լուսբաժիններին՝ Հովի. Թումանյանի ծննդյան 60-ամյակը տոնելու մասին[2]

5 փետրվարի 1929 թ.

N 2763-4

Երևան

Սույն թվի փետրվարի 20-ին (ն. տ.)[3] լրանում է ժողովրդական մանկական գրող Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյակը:

---

[1] Այդպես է փաստաթղթում: Այն է՝ ստեղծագործության:

[2] ՀՍԽՀ լուսժողկոմատին կից Հ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովին ուղարկված տարբերակն է:

[3] Տոմարական սխալ հաշվարկների պատճառով Հովի. Թումանյանի ծննդյան 50 և 60-ամյակները նոր տոմարով նշվել է փետրվարի 20-ին: Այս խնդրին նվիրված մեր ուսումնասիրությունը հրատարակման ընթացքում է (ՊԲՀ, 2019, թիվ 2):

Սոցդասգլխվարչությունս անհրաժեշտ է գտնում նշել [Հ.] Թումանյանի ծննդյան 60-ամյակը բոլոր տիպի դպրոցներում՝ տալով այդ հանդեսներին լայն հասարակական նշանակություն:

Ա աստիճանի դպրոցներում (վերջին խմբերում) հանդեսին կարելի է տալ ընդհանուր բնույթ՝ մատչելի բանախոսությամբ, արտասանություններով ու բեմադրությամբ՝ Հ. Թումանյանի երկերից: Բարձր տիպի դպրոցներում, բացի այդ, անհրաժեշտ է կանգ առնել Թումանյանի ժամանակաշրջանի և նրա երկերի բնորոշման վրա, կազմակերպել գրական բնույթ կրող հավաքույթներ, աշակերտական ռեֆերատներ և այլն՝ իհարկե, այս բոլորը լեզվի ու գրականության դասատուների անմիջական ղեկավարությամբ:

Հ. Թումանյանի 60-ամյակի առթիվ կատարած հատուկ ձեռնարկությունների մասին (հանդեսներ՝ հատուկ ծրագրով, գրադարան-ընթերցարանի հիմնադրում և այլն) խնդրում ենք տեղեկացնել սոցդասգլխվարչությանս:

Սոցդասգլխվարչության պետ՝ Ս. Դավթյան
Քարտուղար՝ Հ. Գորգյան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 12: Բնագիր: Մեքենագիր:

№ 53

Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստի արձանագրությունը

[18 փետրվարի 1929 թ.[1]]

N 3

[Երևան]

---

[1] Թվագրվում է համաձայն բովանդակության և ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 10-ի:

Ներկա էին՝ ընկ. ընկ. [Ա.] Մռավյան, Սերիկ [Դավթյան], [Վ.] Ալազան, [Դ.] Դեմիրճյան, Ս. Կանայան, Լևոն Օհանյան, Մ. Գևորգյան, Ալ. Բարխուդարյան:

Նախագահ՝ Մռավյան, քարտուղար՝ Ռևազով

ԼՍԵՑԻՆ – 1. Կազմակերպությունների կողմից անելիքների մասին ինֆորմացիաներ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1ա. Պրոլետ[արական] և աշխատավ[որական] գրողների միությունը կազմակերպում են գրական-գեղարվեստական երեկո:

բ. Ընկ. Սերիկը հայտնում է, որ հրահանգված է սոցդասգլխվարչության գծով բոլոր բարձր տիպի դպրոցներին կազմակերպել երեկոներ՝ նվիրված Հովհաննես Թումանյանի հիշատակին:

գ. Պետհրատի գծով հրատարակված է Հովհաննես Թումանյանի մանկական 3 անուն և ընկ. Սիմակի բրոշյուրը, այլև տպվում է Երկերի ժողովածու:

դ. Առաջարկել Հայգրքին՝ Հովհաննես Թումանյանի երկերի 1926 թ. հրատարակությունը վաճառել 50 % զեղչով:

ե. Առաջարկել Հայգրքին՝ վաճառքի հանել Հովհաննես Թումանյանի նկարները:

զ. Գտնել անհրաժեշտ ամսիս 24-ի երեկոյան կազմակերպել հատուկ երեկո՝ երաժշտական բաժնով, դնել ընկ. [Պ.] Մակինցյանի զեկուցումը և գրական-գեղարվեստական կազմակերպությունների ողջույնի խոսքեր: Երեկոյի պատասխանատու կարգադրիչ նշանակել ընկ. Ալեքսանդր Բարխուդարյանին:

է. Լսվեց ընկ. [Ս.] Կանայանի հայտարարությունը, որ Գիտ[ության] և արվեստի ինստիտուտը կազմակերպելու է Հով-

հաննես Թումանյանի հիշատակին նվիրված նիստ մարտի սկզբին (ուշացվում է զեկուցողների բացակայության պատճառով):

ը. Հանրային գրադարանի և Պետ[ական] թանգարանի կողմից կազմակերպվելիք ցուցահանդեսը բացել փետրվարի 20-ից մինչև մարտի 3-ը ներառյալ: Առնել ի գիտություն Հանրային գրադարանի վարիչ ընկ. Մ. Գևորգյանի հայտարարությունը, որ փետրվարի 20-ին, ցերեկվա ժամը 12-ին մանկական ընթերցարանում կայանալու է ընկ. Սիմակի զրույցը Հովհաննես Թումանյանի մասին:

թ. Լսվեց տեղեկություն, որ կոնսերվատորիան կազմակերպում է հատուկ երաժշտական երեկո՝ նվիրված Հովհաննես Թումանյանի հիշատակին:

ժ. Առնել ի գիտություն «Կորչի անգրագիտությունը» ընկերության հայտարարությունը, որ կազմակերպում է Հ. Թումանյանի հիշատակին նվիրված երեկոներ Երևանում և Լենինականում:

ժա. Համալսարանից իմանալ՝ ինչ են արել իրենց գծով:

Նախագահ՝ Ա. Մռավյան

Քարտուղար՝ Վ. Ռևազով

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 3: Բնագիր: Մեքենագիր:
ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 1484, թ. 4: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

№ 54

Երևանի լուսավորության բաժնի «շտապ» նշագրումով շրջաբերականը քաղաքի դպրոցներին՝ Հովի. Թումանյանին նվիրված տոնակատարություններ անցկացնելու մասին

18 փետրվարի 1929 թ.
N 60212
Երևան

Սույն թվի փետրվարի 20-ին լրանում է ժողովրդական մանկական գրող Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյակը:

Լուսբաժինս անհրաժեշտ է գտնում նշել Թումանյանի ծննդյան 60-ամյակը բոլոր տիպի դպրոցներում՝ տալով այդ հանդեսներին լայն հասարակական նշանակություն: Ա աստիճանի դպրոցներում (վերջին խմբերում) հանդեսին կարելի է տալ ընդհանուր բնույթ՝ մատչելի բանախոսությամբ, արտասանություններով ու բեմադրությամբ Հ. Թումանյանի երկերից, բարձր տիպի դպրոցներում: Բացի այդ՝ անհրաժեշտ է կանգ առնել Թումանյանի ժամանակաշրջանի և նրա երկերի բնորոշման վրա՝ կազմակերպելով գրական բնույթ կրող հավաքույթներ, աշակերտական ռեֆերատներ և այլն: Իհարկե, այս բոլորը լեզվի և գրականության դասատուների անմիջական ղեկավարությամբ: Հ. Թումանյանի 60-ամյակի առթիվ կատարած հատուկ ձեռնարկությունների առթիվ, այն է՝ հանդեսներ հատուկ ծրագրով, գրադարան, ընթերցարանի հիմնադրում և այլն, անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել սոցդասգլխվարչության հետ:

Լուսբաժնի վարիչ՝ Լ. Վարդունի
Քարտուղար՝ Խ. Կոստանդյան

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 1484, թ. 2: Բնագիր: Մեքենագիր:

№ 55

ՀՍԽՀ լուսժողկոմատի քաղլուսգլխավարչության գրությունը Երևանի լուսբաժնին՝ Հովհ. Թումանյանի 60-ամյակի առթիվ քաղլուստեսուչների անելիքների մասին

20 փետրվարի 1929 թ.

N 3017-5

Երևան

Փետրվարի ընթացքում մենք տոնելու ենք [Հ.] Թումանյանի ծննդյան 60-ամյակը: Թումանյանը մեր հին գրականության մեջ ամենախոշոր բանաստեղծն է: Նրա տարբերությունը [Հ.] Պարոնյանից և հայկական նացիոնալիզմի մյուս երգիչներից այն է, որ նա խոշոր չափով իր գրիչն ուղղում է գյուղական ցեցերի դեմ: Բ՝ ...ուրկե, այդ չի նշանակում, որ նա ազգայնական չի. Թումանյանը միաժամանակ նացիոնալիստ է: Թումանյանը մեզ համար ընդունելի է այնքանով, որքան որ նա քննադատում է տիրող դասակարգերը: Սակայն Թումանյանի իդեոլոգիան ռեակցիոն է և ուտոպիստական: Այդ բնույթվ պիտի մոտենալ Թումանյանին և զեկուցումներ կազմակերպել:

1. Երևանում Կուլտուրայի տանը ունենալ մեկ դասախոսություն՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների մասին:

2. Խնդրել Պետ[ական] կոնսերվատորիային՝ նույն օրը կազմակերպել Թումանյանի երեկո:

3. Կուս[ակցական] դպրոցներում, բարձր տիպի դպրոցներում և բանվորական համալսարանում ունենալ զեկուցումներ և պարզաբանել Թումանյանի ստեղծագործությունների սոցիալական արժեքը:

4. Գավառական քաղաքների ակումբներում կազմակերպել զեկուցումներ Հովհաննես Թումանյանի մասին:

5. Շրջկենտրոնների խրճիթ-ընթերցարաններում ուսուցչության հետ միասին կազմակերպել գրական երեկոներ: Ունենալ ներածական զրույցներ, կարդալ նրա փոքրիկ պատմվածքները՝ «Գիքորը»:

6. Գրադարաններում կազմակերպել Թումանյանի ստեղծագործությունների ցուցահանդես:

7. Ռադիոյում կազմակերպել Թումանյանի ստեղծագործությունների երեկո:

Աղբյուրներ. Ալ. Մյասնիկյանի գիրքը՝ «Թումանյանի ստեղծագործությունների սոց[ալական] արժեքը»[1],

«Խոր[հրդային] Հայաստան» թերթը[2],

«Նոր ուղի» ժուրնալը[3]:

Քաղլուսգլխվարի նախագահ՝ Ռ. Հարությունյան

Քարտուղար՝ Գ. Հարությունյան

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 1484, թ. 5: Բնագիր: Մեքենագիր:

№ 56

Հայգլավլիտի «խիստ գաղտնի» շրջաբերականը «բոլոր գավառեպվարներին», պատճենը՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնին և Պետքաղ-

---

[1] **Մարտունի Ալ.**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, Թիֆլիս, 1923, 40 էջ:

[2] «Խորհրդային Հայաստան»-ի այդ օրվա համարում լույս էին տեսել Պողոս Մակինցյանի «Հովհաննես Թումանյան», Վահան Երեմյանի «Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ (ակնարկներ)», իսկ հաջորդ համարում՝ Գուրգեն Վանանդեցու «Հ. Թումանյանի պոեզիայի արժեքը» հոդվածները: Հայգլավլիտը դրանք անընդունելի համարեց:

[3] Ամսագրի 1929 թ. փետրվար-մարտի համարում հրատարակված Պ. Մակինցյանի «Հովհաննես Թումանյան» ուսումնասիրությունում վերլուծվում էր բանաստեղծի գրական և հանրային գործունեությունը («Նոր ուղի», Երևան, 1929, N 2-3, էջ 184-206):

վարչության ինֆորմացիոն բաժնին՝ Հովհ. Թումանյանի 60-ամյակի տոնակատարությունների վերաբերյալ

[22/23 փետրվարի 1929 թ.][1]

N 20

Երևան

Գրառեպգլխվարը հայտնում է.

Բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ կենտրոնում և գավառներում կազմակերպվող զեկույցների համար արգելվում է օգտագործել «Խորհրդային Հայաստան» օրաթերթի N 42-ում[2] լույս տեսած «Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ» վերնագիր և Վ. Մահիկյան[3] ստորագրությունը կրող հոդվածը: Արգելվում է նույնպես նույն N-ում տպագրված «Հովհաննես Թումանյան» վերնագիր և Պ. Մակինցյան ստորագրությունը կրող հոդվածը: Զեկույցների համար նույնպես արգելվում է օգտագործել «Խորհրդային Հայաստան»-ի N 43-ում[4] լույս տեսած «Հ. Թումանյանի պոեզիայի արժեքը» վերնագիր և Գ. Վանանդեցի ստորագրությունը կրող հոդվածը: Զեկույցների համար արգելվում է նաև Հայպետհրատի կողմից նոր լույս տեսած Հով. Թումանյանի «Ընտիր գրվածներ» անունով բանաստեղծությունների գրքույկի[5] առաջաբանը՝ ստորագրված Պ. Մակինցյանի կողմից:

---

[1] Թվագրվում է համաձայն բովանդակության և մտից համարի: Այն ՀԿ(բ)Կ կենտկոմում ստացվել է 1929 թ. փետրվարի 23-ին:

[2] Թերթի 1929 թ. փետրվարի 20-ի համարն է:

[3] Բոլշևիկ, լրագրող-հրապարակախոս, «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրական խորհրդի անդամ Վահան Երեմյանի (1895–1937) գրական կեղծանունն է:

[4] Թերթի 1929 թ. փետրվարի 21-ի համարն է:

[5] **Թումանյան Հովհաննես**, Ընտիր գրվածներ, **Պ. Մակինցյանի** խմբագրությամբ և առաջաբանով, Երևան, Պետհրատ, 1929, 75 էջ:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ կազմակերպվող զեկույցների համար շուտով լույս կտեսնի «Խորհրդային Հայաստան»-ում Լուսժողկոմատի կողմից կազմված թեզիսները, որոնք պետք է օգտագործել զեկույցների համար[1]:

Գրառեպգլխվարի պետ՝ Ա. Վշտունի
Քարտուղար՝ Ս. Սարգսյան

ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 189, թ. 8: Բնագիր: Մեքենագիր:

№ 57

Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ ՀԼԿԵՄ կենտկոմին կից պատանի պիոներների կենտրոնական բյուրոյի անելիքները

[1929 թ. փետրվար[2]
Երևան]

1. Գավառային պիոներ[ների] բյուրոներին ուղարկել շրջաբերական՝ լուսբաժինների հետ միասին կազմակերպելու դպրոցներում երեկոներ և ցերեկոներ՝ նվիրված [Հովհ.] Թումանյանի ծննդյան 60-ամյակին:

2. «Պիոներ կանչ»-ում[3] տեղավորել Հով. Թումանյանի նկարը և համապատասխան հոդված:

---

[1] «Խորհրդային Հայաստան»-ի հաջորդ համարներում այդպիսի թեզիսներ չեն հրատարակվել: «Գրական դիրքերում» ամսագրի 1929 թ. մարտյան համարում լույս է տեսել ամսագրի խմբագիր, Հայգլավլիտի նախկին նախագահ, գրականագետ Նորայր Դաբաղյանի կազմած թեզիսները՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքի մասին (տե՛ս № 59 փաստաթուղթը): Հավանաբար այն պատրաստվել է ՀՍԽՀ լուսժողկոմատի առաջարկ-հորդորով:

[2] Թվագրվում է համաձայն բովանդակության:

[3] ՀԼԿԵՄ կենտկոմին կից պատանի պիոներների կենտրոնական բյուրոյի շաբաթաթերթը: Հրատարակվում էր 1925 թ. հոկտեմբերից:

3. Երևանի պիոներական տանը կազմակերպել պատանիների համար երեկո՝ նվիրված Հով. Թումանյանին:

4. Պիոներական ռադիո-թերթով հաղորդել պիոներներին և պատանիներին Հով. Թումանյանի գրական գործունեության մասին:

Պիոներ[ների] կենտ[րոնական] բյուրո

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 11: Պատճեն: Մեքենագիր:

№ 58

Հովի. Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ Լուսժողկոմատի արիլուսգլխվարչության անելիքները

[1929 թ. փետրվար[1]
Երևան]

Մեծ բանաստեղծ Հովի. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը արիլուսգլխվարչության դպր[ոցական] հիմնարկություններում հանդիսավոր տոնելու նպատակով առաջարկվելու է դպր[ոցական] հիմնարկություններին.

1. Ձմռան դադարից հետո ակադեմ[իական] կյանքի որոշ ժամանակաշրջան տրամադրել Հովի. Թումանյանի ստեղծագործության բազմակողմանի ուսումնասիրությանը:

2. Հովի. Թումանյանի ստեղծագործության ուսումնասիրությանը նվիրված ակադեմ[իական] պարապմունքները վերջացնելուց հետո կազմակերպել հանդիսավոր նիստ՝ նվիրված բանաստեղծ Հովի. Թումանյանի կյանքին ու գրական-հասարակական ժառանգությանը՝ հետևյալ ծրագրով.

---

[1] Թվագրվում է համաձայն բովանդակության:

ա. Հովի. Թումանյանի կյանքն ու գործունեությունը (ընդհանուր ակնարկ),

բ. Հովի. Թումանյանի ստեղծագործության գրական-հասարակական արժեքը,

գ. Հովի. Թումանյանը որպես մանկական գրող,

դ. Ընթերցանություններ Հովի. Թումանյանի գրական ժառանգությունից,

ե. Երաժշտական բաժին՝ նվիրված Հովի. Թումանյանի ստեղծագործություններին,

զ. Հուշեր Հովի. Թումանյանի մասին:

3. Բացի այդ՝ անհրաժեշտ ենք գտնում դպր[ոցական] հիմնարկության պատի լրագրի մեկ համարը նվիրել բանաստեղծ Հովի. Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 217, թ. 14: Թողոն: Ձեռագիր:

№ 59

Նորայր Դաբաղյանի պատրաստած թեզիսները՝ Հովի. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքի մասին

[1929 թ. մարտ[1]
Երևան]

1. Մենք դեպի անցյալ կուլտուրան մոտենում ենք քննադատական յուրացման միջոցով: Այդ կուլտուրայից, հետևապես և գրականությունից, ժխտում ենք այն, ինչ որ անօգտագործելի է բանվոր դասակարգի պայքարի համար:

[1] «Գրական դիրքերում» ամսագրում հրատարակվելու ժամանակը:

Քննադատական յուրացման ու դիալեկտիկական վերամշակման միջոցով հին կուլտուրայի ու նրա մի մասը կազմող գրականությունից վերցնում ենք օգտագործելի տարրերը: Կոմերիտմիության 3-րդ համագումարում[1] ընկ. [Վ.] Լենինի կողմից անցյալ կուլտուրայի ժառանգության մասին արված քննադատական յուրացման բանաձևումը հիմնական ղեկավարող սկզբունքն է հանդիսանալու նույնպես և գրական ժառանգության խնդրի կոնկրետ լուծման ընթացքում:

2. Մեր վերաբերմունքը դեպի կլասիկները. կլասիկներն այն գրողներն են, որոնք տաղանդավոր կերպով և համեմատաբար օբյեկտիվորեն տալիս են իրենց ժամանակի տվյալ դասակարգի հոգեբանությունը. կենդանի ձևերով՝ ձևի ու բովանդակության ներդաշնակությամբ (ձևի ու բովանդակության ներդաշնակությունը, ըստ [Գ.] Պլեխանովի, հանդիսանում է այս կամ այն ստեղծագործության գեղարվեստականության չափանիշը): Կլասիկները, մեծ մասամբ, իրենց դասակարգի վերելքի շրջանի արտահայտիչներն են: Սակայն այդ օրենքը եզակի չէ, որովհետև գրականության պատմությունը ցույց է տալիս, որ կան կլասիկներ, որոնք տվյալ դասակարգի վերելքի արտահայտիչներ չեն: [Հ.] Թումանյանին մեր գրականության մեջ պետք է դիտել որպես կլասիկ:

3. Հովհաննես Թումանյանն իր գրական գործունեությունը սկսում է [18]80-ական թվականներից: Այդ շրջանում Անդրկովկասում սոցիալական հիմնական ուժերն ու հարաբերությունները, որոնք այս կամ այն կերպ իրենց ազդեցությունն են ունեցել

[1] ԼԿԵՄ երրորդ համագումարը կայացել է 1920 թ. հոկտեմբերին, Մոսկվայում:

Հովհաննես Թումանյանի ստեղծագործության վրա, հետևյալ բնույթն են ունեցել.

ա. Առևտրական կապիտալը փոխակերպվում է արդյունաբերականի, առաջանում էր հայ արդյունաբերական բուրժուազիա, որը, հանդիսանալով հայ ազգայնական շարժման հիմնական աղբյուրներ, հետագայում իր կուսակցության՝ Դաշնակցության միջոցով, ավելի ևս ակտիվ կերպով ձևակերպում է իր գաղափարախոսությունը, որի հիմքը կազմում է զոոլոգիական նացիոնալիզմը[1]:

բ. Հայ խոշոր բուրժուազիան, իր ծրագրերի իրագործման համար, ամեն կերպ աշխատում է մանր բուրժուազիան իր գաղափարախոսության ազդեցության տակ առնել և օգտագործել իր քաղաքական ծրագրերի իրագործման համար: Մանր բուրժուազիան, որը չունի ընդհանրապես ինքնուրույն ու կայուն գաղափարախոսություն, նայած այդ ազգայնական շարժման վերելքին ու վայրէջքին, համապատասխան կերպով ենթարկվում էր բուրժուազիայի ազդեցությանը, ու այդ ազդեցությունը մանր բուրժուազիան արտահայտում էր նաև իր գրականության մեջ:

գ. Առևտրական կապիտալի փոխարկման պրոցեսը արդյունաբերականի, երբեք չէր նշանակում, որ առևտրական կապիտալի ազդեցությունը անդրկովկասյան իրականության մեջ վերանում էր: Առևտրական կապիտալը իր ազդեցության շրջանակներին ենթարկելով գյուղը՝ անխնա շահագործման միջոցով քայքայման էր ենթարկում այն: Նրա ազդեցության տակ գյուղական բնական տնտեսությունը փոխակերպվում էր ապրանքայինի: Գյուղը թևակոխում էր կապիտալիստական հարաբերության

[1] Անասնական ազգայնականություն:

շրջանակը: Գյուղում ակտիվ շահագործման էր անցնում վաշխառուն ու կուլակը. և պարզ է, որ գյուղացիական մանր տնտեսությունները այս պայմաններում քայքայման են ենթարկվում: Գյուղում տարբեր տնտեսական ձևերի միջև առաջացել էր պայքար, ու այդ պայքարը չէր կարող իր անդրադարձումը չունենար գյուղական միջին շերտերի հոգեբանության մեջ և այդ շերտերի հոգեբանությունն արտահայտող գրականության մեջ:

դ. Անդրկովկասում առաջացած այս հարաբերությունների վրա ազդում էր նաև ռուսական ինքնակալությունը, որը Անդրկովկասում մուտք էր գործել որպես ռուսական առևտրական կապիտալի արտահայտիչը: Անդրկովկասյան գյուղացիությունը, հետևապես և Հայաստանի գյուղացիությունը, մի կողմից անխնա հարկադրման էր ենթարկվում, իսկ մյուս կողմից ենթակա էր ցարական ինքնակալության անդրկովկասյան ներկայացուցիչների շահատակություններին: Այս մոմենտը նույնպես արտահայտվել է մեր գյուղագիրների ստեղծագործության մեջ ու Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում նույնպես մենք գտնում ենք նրա արձագանքները:

[4.] Թումանյանի գրական գործունեության շրջանում մեր գրականությունը իր սոցիալական, գրական օղակների տեսակետից հետևյալ պատկերն էր ներկայացնում՝

ա. Մեզանում արդեն առաջացել էր բուրժուական գրականություն, որի ցայտուն արտահայտիչները հանդիսացել էին Գամառ-Քաթիպան ու Ռաֆֆին, որոնք հանդես էին գալիս որպես ռազմական նացիոնալիզմի արտահայտիչներ:

բ. Բուրժուական գրականությանը զուգընթաց, գրական ասպարեզ էին մտել նաև մի շարք գրողներ՝ [Ալեքսանդր] Ծատուրյան, [Հովհաննես] Թումանյան, Ավետիք Իսահակյան, որոնք

պոեզիայի ասպարեզում արտահայտում էին մանրբուրժուազիայի տարբեր շերտերի տրամադրությունները: Այդ բանաստեղծները, ունենալով իրենց գրական գաղափարախոսության շփման ընդհանուր կետերը, յուրահատուկ անդրադարձմամբ էին տալիս այդ միջին շերտերի տրամադրությունները: Պարզ է, որ այս գրողները զերծ չեն մնացել բուրժուական ազգայնական գաղափարախոսության ուժեղ ազդեցությունից իրենց ստեղծագործության մեջ՝ մանր բուրժուազիայի սոցիալական պրիզմայի միջոցով անդրադարձնելով այդ նացիոնալիզմը:

5. Հովհաննես Թումանյանը, վերոհիշյալ հասարակական-քաղաքական պայմաններում հանդես գալով, ենթակա է լինում բուրժուական նացիոնալիզմի ազդեցությանը, ու իր հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալում է այդ գաղափարախոսության ազդեցության տակ: Նա լինում է Դաշնակցություն կուսակցության անդամ, հետագայում դուրս է գալիկ Դաշնակցությունից, սակայն, դա երբեք չի նշանակում, որ նա հրաժարվում է ազգայնական գործունեությունից: Մասնավորապես [19]14 թ. կամավորական շարժումների ընթացքում ցայտուն կերպով հանդես է գալիս այդ գործունեությունը: Նոյեմբերյան հեղափոխությունից հետո Հովհաննես Թումանյանը հայ մանր բուրժուական ինտելիգենցիայից առաջինն է լինում, որ ընդունում է խորհրդային իշխանությունը, իհարկե, յուրահատուկ մոտեցումով: Ենթակա լինելով ազգայնական գաղափարախոսությանը՝ [նա] միևնույն ժամանակ Անդրկովկասում հանդես է եկել ազգերի համերաշխության քարոզներով:

6. Նացիոնալիզմն իր ցայտուն արտահայտությունն է գտել Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մեջ: Սակայն այդ նացիոնալիզմը, համեմատելով Ռաֆայել Պատկանյանի, Ռաֆ-

ֆու մարտական նացիոնալիզմի հետ, կարելի է որակել որպես «պասսիվ» նացիոնալիզմ («Տրտմության սաղմոսներից», «Հայոց լեռներում», «Մեր նախորդներին», «Հայոց վիշտը» և այլն):

Նացիոնալիզմի 2-րդ տիպի այտրահայտությունը դա կրոնական գունավորում ունեցող նացիոնալիզմն է, որը հանդես է գալիս նրա մի շարք գրվածքներում («Լուսավորչի կանթեղը», «Հայ ուխտավոր»-ը և այլն)[1]:

Կամավորական շարժումները պատկերող մի շարք ոտանավորներում (օրինակ՝ «Երկրում») անպայմանորեն մարտական նացիոնալիզմի շեշտեր գոյություն ունեն, սակայն հիմնականում դասրձյալ Հովհաննես Թումանյանը հանդես է գալիս որպես «պասսիվ» նացիոնալիզմի արտահայտիչ: Շեշտելով բուրժուական նացիոնալիզմի ազդեցության, մանր բուրժուական «պասսիվ» անդրադարձման մասին, անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպես մարտական, նույնպես և մանր բուրժուական «պասսիվ» նացիոնալիզմը մեր կողմից ամբողջովին ժխտվում է, անընդունելի է, և ինտերնացիոնալիզմի արտահայտիչը հանդիսացող նոր դասակարգն անխնա պայքարում է նացիոնալիզմի բոլոր արտահայտությունների դեմ]:

7. Գյուղը Թումանյանի երկերում. Հովհաննոս Թումանյանի ստեղծագործության մեջ նկարագրված գյուղը բնական տնտեսությունից դեպի ապրանքային տնտեսություն անցում կատարող գյուղն է: Այդ անցումը Թումանյանը ցայտուն կերպով արտահայտել[2] է իր «Երկաթուղի» պատմվածքում, որտեղ արտահայտվել է նաև անցման շրջանում տարբեր հոգեբանություններ-

---

[1] Շեղատառ հատվածն առկա է միայն «Գրական դիրքերում»-ում տպագրված տարբերակում (էջ 39):

[2] Տպագրված տարբերակում՝ «տվել» (էջ 39):

րի, տարբեր շահերի ու աշխարհզգացողությունների բախում: Այդ պատմվածքում հովիվն ու որսկան Հոսեփը հանդես են գալիս որպես բուրժուական կուլտուրայի դեմ բողոքողներ: Հեղինակը լոռեցի հովվի բերանում դրել է ռուսսոյական քարոզներ այն մասին, թե ինչպես երկաթուղին տրորում է բնության հովվերգությունը, իսկ, մյուս կողմից, նույն այդ երկաթուղին ցամաքեցնում է հովվի ու որսկանի ապրուստի աղբյուրը: Հովիվը ներկա դեպքում հանդես է գալիս որպես Թումանյանի վերաբերմունքի արտահայտիչ: Այս պատմվածքում գյուղացիները բաժանվում էին երկու մասի. մի մասը կողմնակից է դրամական տնտեսությանը, իսկ մյուս մասը դեմ է:

բ. Հովհաննես Թումանյանի գյուղը շերտավորված է: Գյուղում քյոխվան, վաշխառուն, թավադը, տերտերը շահագործում են գյուղական միջին ու չքավոր տարրին: Հովհաննես Թումանյանի նկարագրած գյուղացիները մեծ մասամբ մանր սեփականատերեր են, որոնք կապիտալիստական հարաբերությունների ազդեցության տակ քայքայման են ենթարկվում: Կապիտալիստական հարաբերությունների շրջանակը թևակոխող գյուղի մանր տնտեսատերերի դրությունն իր արտահայտությունն է գտել Թումանյանի հետևյալ ստեղծագործությունների մեջ՝ «Գութանի երգը», հատված «Հառաչանք» պոեմից, «Իմ հայրենիքը տեսել ես, ասա», «Գիքորը» և այլն: «Իմ ընկեր Նեսոն», «Տերն ու ծառան», «Ահմադ» պատմվածքում նույնպես հանդես է գալիս գյուղի շերտավորումը:

գ. Հովհաննես Թումանյանը բացասական վերաբերմունք ունի դեպի գյուղի կուլակը, քյոխվան, տերտերը, վաշխառուն: Նա ցավով է նկարագրում գյուղի մանր տնտեսությունների քայքայումը: «Հառաչանք»-ում ու «Չարի վերջ» գրվածքներում դնում

է հավասարության ոչ սոցիալիստական՝ մանրբուրժուական պահանջը՝ առաջինում հանդես բերելով բնական հավասարության, իսկ երկրորդում՝ սեփականության հավասար բաժանման պահանջը. մի պահանջ, որի հիմքերը ներկա դեպքում պետք է փնտրել գյուղի մանր տնտեսատիրության մեջ:

դ. Հովհաննես Թումանյանը, նկարագրելով գյուղական մանր սեփականատերերի վատթար կացությունը, սոցիալական պայքարի առաջադրություններ չի անում, *այլ*[1] հանդես է գալիս որպես գյուղացիական պասսիվիտետի արտահայտիչ: Եվ լիբերալ որոշ կոլեկտիվներում իր հայացքն ուղղում է դեպի նահապետական անցյալը՝ իդեալականացման ենթարկելով այդ:

8. Թումանյանը բացասական վերաբերմունք ունի դեպի բուրժուական քաղաքն ու դեպի առևտրական կապիտալը: Նրա պեսիմիստական շնչով գրված բանաստեղծություններն արտահայտում են փախուստ քաղաքի «խորթ» միջավայրից դեպի հայրենի լեռները, դեպի տուն: «Հառաչանք» անավարտ պոեմում Թումանյանն ասում է հետևյալը. «Էհ, աստված սիրես, թող դրսանց պապի, Ես շատ եմ զզվել քաղքից, գազեթից»:

Դեպի առևտրական ու վաշխառուական կապիտալը Թումանյանի ունեցած բացասական վերաբերմունքը բնորոշելու համար բավական է հիշել «Գիքորը», «Անբախտ վաճառականները», «Պոետն ու մուսան»: «Պոետն ու մուսա»-ում ցայտուն կերպով հանդես է գալիս մեշչանական շերտերի վերաբերմունքը դեպի փողը, որոնք մի կողմից բողոքում են դրամական տնտեսության մեջ[2], իսկ մյուս կողմից արտահայտում կարոտ դեպի

---

[1] Բառը առկա է միայն տպագրված տարբերակում (էջ 40):

[2] Այս.պես է փաստաթղթում: Պետք է լինի՝ «դեմ», ինչպես մյուս տարբերակում է (էջ 40):

փողը: Այս երկվությունը հատուկ է միջին շերտերին, որը բացատրվում է նրանց յուրահատուկ կացությամբ: Մանր տնտեսատերը, կապիտալիստական հասարակարգում խոշոր կապիտալից ստանալով ջախջախիչ հարվածներ, բողոքի ճիչեր է արձակում, սակայն նա այդ կապիտալի դեմ պայքարում է ոչ թե սոցիալիստական հասարակություն ստեղծելու համար, ինչպես դա կատարում է պրոլետարիատը, այլ յուր գոյության տնտեսական հիմքերն ապահովելու նպատակով:

9. [ա.] Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մեջ արտահայտվում է կրոնական բարոյախոսական, միստիկական, իդեալիստական աշխարհզգացողություն: «Կյանքը երազ է, երազը՝ մի կյանք, չարի վերջը չարով է վերջանում, կյանքը փուչ է, մարդիկ ժամանակի խաղալիք են, հոգին անմահ է» («Դեպի անհուն» և այլն): Այս միստիցիզմը ներկա դեպքում վերջին հաշվով պայմանավորվում է բնության ու կապիտալիստական հարաբերությունների տարերայնության ենթակա գյուղացիական միջին շերտերի կացությամբ: Նոր ուժերը խորտակում էին մանր տնտեսատիրության պատվանդանները. բանվոր դասակարգը մեզանում դեռևս այնքան ուժեղ չէր այդ շրջանում, որպեսզի կարողանար իր ազդեցությանը ենթարկել գյուղացիական այդ շերտերին: Վերջիններս, կորցնելով իրենց հեռանկարները, հույսները կապում էին «ճակատագրի», «աստծու» և այլ այդպիսի «ուժերի» հետ: Հիմնականում այդ աղբյուրներից է գալիս Թումանյանի ստեղծագործության մեջ արտահայտված պասսիվիտետն ու միստիցիզմը:

բ. Հովհաննես Թումանյանը մարդկայնացնում, շնչավորում և յուրահատուկ ձևով «ֆետիշացնում» է բնությունը: Նա հաճախ իր հույզերն ու տրամադրություններն արտահայտում է բնության

տարերքի միջոցով: Միստիքորեն մոտենալով բնությանը՝ բնությունը համարում է իր սփոփանքը: Վերոհիշյալ երևույթը պետք է բացատրել հետևյալ պատճառներով.

ա) Հովհաննես Թումանյանի նկարագրած գյուղում, շնորհիվ արտադրական ուժերի թույլ զարգացման, բնության ու մարդկանց փոխազդեցությունը հանդես է գալիս համեմատաբար պարզ ու պրիմիտիվ ձևերով: Անմիջականությունը մարդու և բնության միջև ավելի ևս զգալի է:

բ) Փախչելով քաղաքի «խորթ» միջավայրից ու գյուղի մռայլ իրականությունից՝ Հովհաննես Թումանյանն իր հայացքն ուղղում է դեպի բնությունը, միստիքական մոտեցումներով «ֆետիշացնում» է բնության ուժերը:

10. Հովհաննես Թումանյանը, որը դեմ էր Անդրկովկասում ազգամիջյան ընդհարումներին, որը, իհարկե, այս դեպքում էլ հանդես էր բերում յուրահատուկ պացիֆիզմ: Այդ տրամադրությունն անդրադարձել է նաև իրեն ստեղծագործության մեջ: «Մի կաթիլ մեղր»-ը, «Սասունցի Դավիթ»-ում ծերուկի ու Դավթի խոսքերը բնորոշում են այդ վերաբերմունքը: Թումանյանի համար այդ ընդհարումների դասակարգային պատճառները մնում են չպարզված: Նա դեմ է այդ ընդհարումներին ոչ թե այդ ընդհարումների դասակարգային պատճառները նկատի ունենալով, [այլ] այդ խնդրում մեկնակետ ունենալով բարոյախոսական-պացիֆիստական նկատառումներ: Այդ վերաբերմունքով ևս, նա արտահայտում է գյուղացիական միջին տարրերի տրամադրությունները, որովհետև այդ ընդհարումները քայքայիչ ազդեցություն էին ունենում այդ տարրերի տնտեսական դրության, «վար ու ցանքի» վրա:

11. Բնորոշելով Թումանյանի վերաբերմունքը դեպի իր ժամանակաշրջանի հիմնական սոցիալական ուժերն ու կատեգորիաները, որոնք այս կամ այն կերպ ազդել են պոետի ստեղծագործության վրա, հանգում ենք այն եզրակացության, որ Հովհաննես Թումանյանն իր ստեղծագործության մեջ հիմնականում արտահայտել է կապիտալիստական հարաբերությունների շրջանակը թևակոխող գյուղի միջին տարրերի՝ մանր սեփականատերերի տրամադրությունները, նրանց վիճակը կապիտալիստական հարաբերությունների պայմաններում:

12. Թումանյանի ստեղծագործության գեղարվեստական արժեքը.

ա) Ձևի ու բովանդակության ներդաշնակությունը,

բ) Կենցաղի, դեպքերի, բնության ու հոգեբանության սինթեզը՝ որպես հիմնական ստեղծագործական պրյոմ Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մեջ («Անուշ», «Մարո» և այլն),

գ) Ժողովրդական ստեղծագործության մշակումը,

դ) Մանկական գրվածքները,

ե) Պատկերներ բնության նկարագրությունից,

զ) Պատմելու շնորհքը՝ էպիկականություն,

է) Լեզվի պարզությունը, որտեղ միանգամայն բացակայում են գռեհկացումները:

16. [ա.] Մենք, ժխտելով Թումանյանի ստեղծագործության մեջ հանդես եկող ազգայնական, կրոնական, բուրժուական գաղափարախոսությունը, չենք հրաժարվում նրա ստեղծագործության լավագույն տարրերից: Որովհետև Թումանյանը նկարագրել է գյուղի միջին շերտերի դրությունը կապիտալիստական հարաբերությունների պայմաններում, նրանց քայքայման օբյեկտիվ նկարագրությունները, անկախ հեղինակի վերաբերմունքից, այ-

սոր, ևս կարող են դաստիարակիչ լինել մեր բանվորա-գյուղացիական մասսաների համար:

բ. Որովհետև Թումանյանի ստեղծագործության խոշոր տոկոսը վերցված է մեր ժողովրդական ստեղծագործությունից, որի մեջ մեծ մասամբ հանդես է եկել ժողովրդական միջին, ստորին շերտերի տրամադրություններն ու հոգեբանությունը, որը մեզ համար ունի խոշոր պատմական նշանակություն՝ մի կողմ թողնելով այդ ստեղծագործության մշակման ընթացքում Թումանյանի կողմից տրված կրոնական-բարոյախոսական տենդենցները:

գ. Լեզվի, գրական կուլտուրայի մշակման ասպարեզում Թումանյանը խոշոր աշխատանք է կատարել: Նոր դասակարգը, քննադատական յուրացման միջոցով այդ կուլտուրայի որոշ տարրեր վերամշակման ենթարկելով, կկարողանա օգտագործել յուր պահանջների համաձայն:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 189, թ. 54-60: Պատճեն: Մեքենագիր:

Մասնակի տարբերություններով տպագրված է՝ «Գրական դիրքերում», Երևան, 1929, N 3 (մարտ), էջ 36-42:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբելեան Պօղոս /Աբելյան Պողոս, 32, 43, 44, 52, 67
Աբեղեան Ա., 11
Աբեղեան Մանուկ, 57
Աբովեան Ս., 43, 44
Աթանասեան Աշոտ, 45
Աթարբեկյան Գևորգ, 61
Ալազան Վահրամ, 84, 88
Ալթունեան Վ., 72
Ահարոնեան Ա. /Ահարոնյան Ավետիս, 10-12, 18, 20, 28
Աղանեանց Գիւտ աւագ քահանայ, 57, 59
Աղբալեան Նիկողայոս /Աղբալյան Նիկոլ, 14, 19, 56, 57
Անանուն Դաւիթ, 57
Անդրանիկ, 16, 17
Աշեր Ք. Դ., 63
Արեգ (Թումանյան), 77
Արզումանյան Միշա, 26
Արիստակէսեան Յ., 52
Արղութեան Յովսէփ, 33
Աւետիսեան Մարգար, 41, 42, 44-46, 48, 52, 54

Բաբալեան Ա., 14, 23
Բաղրամյան (Բաղրամով) Իվան, 20, 22, 23, 29
Բարխուդարյան Ալեքսանդր, 88

Գամառ-Քաթիպա, *տե՛ս Պատկանյան Ռաֆայել*
Գարագաշ Շ., 81-83
Գևորգյան Մամիկոն, 81, 84, 88, 89
Գիլնազարեան Կ., 75
Գորգյան Հ., 87

Դաբաղյան Նորայր, 94, 96
Դաշտոյան Ռ., 81-83
Դավթյան Սերիկ, 81-84, 87, 88
Դաւթեան Յ., 14, 23
Դարբինեան Հ., 61
Դեմիրճեան /Դեմիրճյան Դերենիկ, 56, 84, 88
Դերոյան (Տերոյան) Վարազդատ, 62
Դովլաթյան Իսահակ, 62

Եղիազարյան Արտո, 83
Եվանգուլեան Գ., 67
Երեմյան Վահան, 92, 93
Երզնկեան /Երզնկյան /Յերզնկեան Արամայիս, 14, 64-67, 73, 75

Զարգարեան Միք., 61
Զաքարյան Ա., 34

Էնվեր, 27

Էսսադ (Էսսատ), 20-23, 25, 27, 29

Թահսին, 25
Թաղիանոսեան Եր. /Թաղիանոսյան Երվանդ, 67, 69, 70, 72, 74
Թումանեան Լ., 5, 14, 23
Թումանեան(ց) Յովհաննէս /Թումանյան Հովհաննես, 3-5, 7-15, 17, 18, 20, 22-24, 28-30, 32-35, 37, 40-45, 47-49, 52-56, 59, 61-107
Թումանյան Ա., 84, 85
Թումանյան Համլիկ, 76, 77, 79
Թումանյան Հայկուշ, 83, 84
Թումանյան Օլգա, 80, 81

Իսահակյան Ավետիք, 99

Լազարեան Ս., 48-53
Լենին Վ., 97
Լեո /Լէօ, 57, 66

Խատիսեան /Խատիսյան Ալեքսանդր, 14, 18, 40, 54, 55, 63
Խատիսեան Աշխեն, 63, 64
Խատիսեան Հովիկ, 63, 64
Խատիսյան Գևորգ, 63
Խոջամիրեան Մ., 63, 64
Խոջայան Եր., 83

Ծատուրյան Ալեքսանդր, 99

Կանայան /Կանայեան Ստեփան, 57, 67, 81, 83, 84, 88
Կասյան Ս., 62, 67
Կարճիկեան Խաչատուր, 14
Կոստանդյան Խ., 90

Հախվերդով Հ., 14
Համբարձումեան Համ., 9, 30, 32-35, 37, 40, 43-48, 52-54
Հարությունյան Գ., 92
Հարությունյան Մարտիրոս, 26, 37
Հարությունյան Ռ., 92
Հարությունյան /Յարութիւնեան Սամսոն, 20, 22, 23, 29, 67
Հովհաննիսյան Աշոտ, 79
Հովհաննիսյան /Յովհաննիսեան Տ., 23, 66

Ղազարեան Գ., 16
Ղարաբէգեան Մ., 14, 23

Մալխասեան Ստ., 43
Մախմուրյան Գ., 5
Մակարյան Լ., 5, 72
Մակինց Ն., 83
Մակինցեան Պ. /Մակինցյան Պողոս, 73, 88, 92, 93
Մահիկյան Վ., *տե՛ս Երեմյան Վահան*
Մամիկոնեան /Մամիկոնյան Ստեփան, 13, 14, 23
Մանասյան Սարգիս (Մանաս), 16
Մարգար (Երևանի ներկայացուցիչ), 23, 27
Մարտունի Ալ., *տե՛ս Մյասնիկյան Ալեքսանդր*
Մեասնիկեան /Մյասնիկյան Ալեքսանդր, 66, 92

Մելիքեան Յովի., 67
Մելքումյան (ՀՕՄ-ի ներկայացուցիչ), 74
Միրզոյանց Երվանդ, 22, 23
Մխիթարեան Ա., 23
Մուրադբէկեան Խորէն արքեպիսկոպոս, 67
Մռաւեան /Մռավյան Ասքանազ, 62-64, 67, 76, 79-81, 83-86, 88, 89

Յովհաննիսեան Յովհաննէս, 56

Նազարբէկով Թ., 24
Նար-Դոս, 57

Շահազիզ Երվանդ, 84
Շահպարոնեան Բագրատ, 41, 42, 48
Շիրվանզադէ, 57

Չալըքեան Յովի., 72

Պապաջանյան Միքայել, 18
Պապովեան /Պապովյան Ալ., 66, 67
Պատկանյան Ռաֆայել, 99, 100
Պարոնյան Հ., 91
Պետրոսեան Մադաթ, 41, 42, 48, 52, 53
Պետրոսյան Հ., 84
Պիճիկեան Գ., 67
Պլեխանով Գ., 97

Ջամալյան Արշակ, 33, 34

Ռևազով Վ., 81, 83, 84, 86, 88, 89

Սահակեան Աւ. /Սահակյան Ավետիք, 14, 23, 28, 29
Սարգսյան Ս., 94
Սիմակ, 88, 89
Սուքիասյան Հ. Կ., 5, 14, 18
Ստամբոլցեան Ան., 12, 23, 28
Ստեփանյան Գ., 83

Վանանդեցի Գուրգեն, 92, 93
Վարդանեան Գ., 67
Վարդունի Լ., 83, 90
Վեհիբ փաշա, 16, 27, 28
Վշտունի Ա., 94

Տեր-Վարդունի Ալ., 66
Տէր-Աւետիսեանց Սմբատ, 57
Տէր-Գրիգորեան Ար., 7, 8, 45
Տէր-Գրիգորեան Ջալալ, 45, 52
Տէր-Մինասեան Երուանդ, 57
Տէր-Մինասեան Ռ., 14, 23
Տէր-Յարութիւնեան Գեղամ, 14
Տէր-Սիմոնեան Դր., 67
Տէր-Օհանեան Գ., 67
Տիգրանեան Ս., 14, 23, 56

Ռաֆֆի, 99-101

Փափազեան Վրթանէս, 57
Փիրումեան Սիմոնիկ, 77, 79

Քաջազնունի Յ. /Հովհաննես (Ռուբեն), 14, 23

Օհանյան Լևոն, 81, 88
Օհանջանեան Բ., 32, 48, 52
Օրջոնիկիձե Գեորգի, 61

Ֆոլյան Պ., 82, 83

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ադրբեջան, 11, 38
Ալեքսանդրապոլ /Ալէքսանդրապօլ, 11, 22, 24, 37, 51
Ախալցխա, 7, 37, 41, 51
Ախալքալաք, 7, 24, 28, 29, 37, 41, 45, 48, 51, 52
Աղստաֆա, 46
Այրում, 11, 38, 97, 100, 105
Անդրկովկաս, 3, 10, 99
Անդրկովկասյան Դաշնություն, 77
Ատրպատական, *տե՛ս Ադրբեջան*
Արդահան, 51, 52
Արդանուշ, 51
Արէշ, 7, 60, 61

Բագու /Բաքու, 23, 26, 27, 68
Բազումի լեռնաշղթա, 15, 17
Բաթում, 20, 21, 23, 26, 28, 29
Բակուրիանի, 28
Բաշաբարան, 25
Բեռլին, 76, 77
Բորչալու, 17, 19, 20
Բուլանլուղ, 51
Բրեստ-Լիտովսկ, 10,

Գահիրէ, 68
Գանձակ, 7, 26, 37, 41, 45, 48, 51, 52
Գէօկչայ, 48, 51, 52
Գոլագերան, *տե՛ս Թումանյան երկաթուղային կայարան*
Գողթն, 37, 41, 51

Դիլիջան, 9, 15, 17, 19
Դսեղ, 15, 16, 18
Դվալ, *տե՛ս Բազումի լեռնաշղթա*

Ելիզավետպոլի նահանգ, 26
Երևան, 4, 5, 8, 13-15, 17-19, 21-23, 25, 27, 29, 34, 37, 40, 41, 54, 55, 59, 61-68, 72-76, 79-84, 86, 87, 89-96, 107
Երևանի նահանգ, 26

Զանգեզուր, 7,
Զաքաթալա, 60, 61

Էրզրում, 13

Թիւրքիա, *տե՛ս Օսմանյան կայսրություն*
Թիֆլիս, 7-9, 12-14, 18, 20, 22, 23, 28, 29, 31-38, 41, 45-49, 52, 54, 56, 60, 63, 64, 68-70, 74, 76, 80, 92
Թովուզ, 46
Թումանյան երկաթուղային կայարան, 15

Լենինական, 89
Լոռի /Լօռի, 7, 13, 14, 16, 18, 20, 21, 24, 37, 41, 48, 51, 52, 65
Լոռու մարզ, 15

Խորհրդային Հայաստան, *տե՛ս Հայաստան*
Խորհրդային Միություն, 76
Խորհրդային Վրաստան, *տե՛ս Վրաստան*
Խրամ (գետ), 19

Ծալկա, 33

Կ. Պոլիս /Կոստանդնուպոլիս, 14, 18, 20, 22, 24, 25, 27, 28, 67-71, 74
Կայաբաշ, 26
Կարս /Ղարս, 13, 22, 24, 37, 41, 44, 48, 51, 52
Կովկաս, 11, 27, 41, 57, 71

Համզաչիման, *տե՛ս Մարգահովիտ*
Հայաստան, 4, 5, 14, 17-22, 25, 26, 28, 33, 34, 36, 38, 40, 41, 54-57, 61-66, 68-76, 78-80, 86, 91, 94, 99
Հայաստանի առաջին հանրապետություն, *տե՛ս Հայաստան*
Հայաստանի Հանրապետություն, *տե՛ս Հայաստան*
Հայկական Հանրապետություն, *տե՛ս Հայաստան*
Հին Նախիջևան, 7, 37, 41, 45, 51
ՀՀ, *տե՛ս Հայաստան*
ՀՍԽՀ, *տե՛ս Հայաստան*

Ձորագէղ /Ձորի գէղ, 15

Ղազախ, 7, 20, 37, 41, 45, 46, 48, 51, 52, 65
Ղամարլու, 25, 27
Ղարաբաղ, 7, 37, 41, 51, 54
Ղարախաչ, 16
Ղարաքիլիսա /Ղարաքիլիսէ, 13, 17, 18, 25

Մարգահովիտ, 15
Մերձավոր Արևելք, 62
Մոսկվա /Մոսկաւ, 76, 97

Նոր Բայազետ, 9, 19, 30, 37, 41, 45, 48, 51, 52
Նոր Բայազետի գավառ, 26
Նոր Բայազէտ, 7,
Նուխի, 7, 48, 51, 52, 60, 61

Շամախի, 37, 48, 51, 52
Շամշադին, 7, 20, 37, 46, 51
Շաւշէթ, 51
Շուլավեր /Շուլաւեր, 18, 37, 51
Շուշիի գավառ, 26

Պարսկաստան, 37, 76
Պոլիս, *տե՛ս Կ. Պոլիս*

Ջալալօղլի, տե՛ս Ստեփանավան

Սադախլու, 18, 19
Սանահին, 15, 18, 19
Ստեփանավան, 15, 16, 19

Վենետիկ, 76
Վորոնցովկա, *տե՛ս Տաշիր*
ՎՍԽՀ, *տե՛ս Վրաստան*
Վրաստան, 11, 27, 29-34, 38, 46, 54, 60, 68-70

Տաճկաստան, *տե՛ս Օսմանյան կայսրություն*
Տաշիր, 15, 17
Տրապիզոն, 10,

Ցալկա, տե՛ս Ծալկա

Փամբակ, 20, 21, 37, 41, 51
Փարիզ, 69, 76, 78

Քոլագերան, Քոլագիրան, *տե՛ս Թումանյան երկաթուղային կայարան*

Օլթի, 51
Օսմանյան կայսրություն, 10, 11, 20, 27, 57

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 7

№ 1. Հովի. Թումանյանի ղեկավարած Հայ հայրենակցական միությունների միության հիմնադիր ժողովի արձանագրությունը (1 մարտի 1918 թ.) 7

№ 2. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Հայոց ազգային խորհրդին՝ Նոր Բայազետի քաղաքային ինքնավարությանն ավտոմոբիլներ տրամադրելու հարցով (12 մարտի 1918 թ.) 9

№ 3. Քաղվածք Անդրկովկասյան սեյմի, կառավարության հայ անդամների և գավառների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից (30 մարտի 1918 թ.) 9

№ 4. Հովի. Թումանյանի մասնակցությունը հայ ղեկավար գործիչների արտակարգ խորհրդակցությանը (8 ապրիլի 1918 թ.) 11

№ 5. Ստեփան Մամիկոնյանի հայտարարությունը Հայոց ազգային խորհրդի նիստում՝ Հովի. Թումանյանին ուղղած իր խնդրանքի մասին (19 մայիսի 1918 թ.) 13

№ 6. Քաղվածք Հովի. Թումանյանի մասնակցությամբ կայացած Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից (24 հունիսի 1918 թ.) 13

№ 7. Հայոց ազգային խորհրդի նամակը Կ. Պոլսում գտնվող ՀՀ պատվիրակությանը՝ Լոռու վերաբերյալ Հովի. Թումանյանի հաղորդած տեղեկությունների մասին (25 հունիսի 1918 թ.) 18

№ 8. Հայոց ազգային խորհրդի Փոքր խորհրդի որոշումը Հովի. Թումանյանին ազգային խորհրդի լիազորի պարտականություններից ազատելու մասին (30 հունիսի 1918 թ.) 20

№ 9. Բաթում ուղարկված հայկական պատվիրակության հեռագիրը Կ. Պոլսում գտնվող պատվիրակության

նախագահ Ավետիս Ահարոնյանին (4 հուլիսի 1918 թ.) 20
№ 10. Քաղվածք Հովհ. Թումանյանի մասնակցությամբ կայացած Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրությունից (6 հուլիսի 1918 թ.) 23
№ 11. Հայոց ազգային խորհրդի ժամանակավոր նախագահ Ավետիք Սահակյանի նամակը Կ. Պոլսում գտնվող ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին՝ Բաթում մեկնած հայկական պատվիրակության գործունեության արդյունքների մասին (7 հուլիսի 1918 թ.) 28
№ 12. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գաղթականության խնդրին նվիրված խորհրդակցություն գումարելու պահանջով (4 սեպտեմբերի 1918 թ.) 29
№ 13. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ վերջինի կազմը միության ներկայացուցիչներով համալրելու մասին (13 սեպտեմբերի 1918 թ.) 31
№ 14. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գաղթականության խնդրին նվիրված խորհրդակցություն գումարելու հարցի մասին (2 հոկտեմբերի 1918 թ.) 32
№ 15. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գաղթականության խնդրին նվիրված խորհրդակցության հետաձգման առթիվ (11 հոկտեմբերի 1918 թ.) 33
№ 16. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հրավերը՝ Հաշտության համագումարին հուշագիր ներկայացնելու համար գումարվող հանձնաժողովի նիստին մասնակցելու մասին (1 նոյեմբերի 1918 թ.) 34
№ 17. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը միությունների վարչություններին՝ վճարումները ժամանակին կատարելու մասին (5 դեկտեմբերի 1918 թ.) 35
№ 18. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ վրաց-հայկական պատերազմին վերջ դնելու հարցով ([18 դեկտեմբերի 1918 թ.) 36

№ 19. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հիմնավորումը՝ միությունների անհրաժեշտության մասին (5 փետրվարի 1919 թ.) 38
№ 20. ՀՀ մինիստրների խորհրդի որոշումը՝ հոբելյանի առթիվ Հ. Թումանյանին շնորհավորելու մասին (25 փետրվարի 1919 թ.) 40
№ 21. Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի հրապարակային նիստը՝ նվիրված Հովհ. Թումանյանի հիսնամյակին (27 փետրվարի 1919 թ.) 41
№ 22. Քաղվածք Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստի արձանագրությունից՝ Հովհ. Թումանյանի հոբելյանին նվիրված բանկետ կազմակերպելու մասին (4 մարտի 1919 թ.) 45
№ 23. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի գրությունը Վրաստանի Հայոց ազգային խորհրդի գաղթականական բաժնին՝ Ղազախի հայությանն օգնելու խնդրանքով (24 մարտի 1919 թ.) 46
№ 24. Հովհ. Թումանյանի 50-ամյակին նվիրված Հայ հայրենակցական միությունների միության կազմակերպած երեկույթի հրավիրատոմսը ([1919 թ. ապրիլ) 47
№ 25. Քաղվածք Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստի արձանագրությունից՝ Հովհ. Թումանյանի հոբելյանին նվիրված բանկետ կազմակերպելու մասին (8 մայիսի 1919 թ.) 48
№ 26. Հովհ. Թումանյանին նվիրված բանկետի ժամանակ Հայ հայրենակցական միությունների միության կողմից նրան ներկայացված շնորհավորական գրությունը (11 մայիսի 1919 թ.) 49
№ 27. Հայ հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի նիստի արձանագրությունը՝ Հովհ. Թումանյանի հոբելյանի առթիվ կազմակերպված բանկետի արդյունքներն ամփոփելու մասին (15 մայիսի 1919 թ.) 52
№ 28. Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի նախագահ Հովհ. Թումանյանի գրությունը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը՝ հանձնաժողովին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով (28 հունիսի 1919 թ.) 54

№ 29. ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության գրությունը Հայ գրողների ընկերության նախագահ Հովհ. Թումանյանին՝ գրողներին նպաստ հատկացնելու մասին (9 հուլիսի 1919 թ.) 55
№ 30. Հայ գրողների ընկերության վարչության գրությունը ՀՀ Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանին՝ վարչությանը հանձնված դրամական միջոցները բաշխելու հարցի մասին (13 սեպտեմբերի 1919 թ.) 56
№ 31. ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարության գրությունը Հայ գրողների ընկերության վարչությանը՝ տրամադրված նպաստի անդորագրերը ներկայացնելու մասին (10 մարտի 1920 թ.) 59
№ 32. Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի հրավերը հայկական մշակութային հաստատություններին՝ մասնակցելու Վրաստանի բանաստեղծության և գրականության ազգային տոնին (30 ապրիլի 1920 թ.) 60
№ 33. Երևանում գտնվող Հովհ. Թումանյանին ուղղված ռադիոհեռագիր (պատճենը՝ Գեորգի Օրջոնիկիձեին)՝ խորհրդային զորքերի ճամբար տեղափոխվելու մասին (25 մարտի 1921 թ.) 61
№ 34. Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կովկասյան մասնաճյուղի կառավարչի ճաշի հրավերը Հայաստանի հեղկոմի նախագահ Ս. Կասյանին (6 ապրիլի 1921 թ.) ... 62
№ 35. ՀՍԽՀ արտգործժողկոմատի գրությունը անցագրերի բյուրոյին՝ Հովհ. Թումանյանին, դստերը և թոռանը Թիֆլիս ուղևորվելու անցագիր տրամադրելու հարցով (16 ապրիլի 1921 թ.) ... 63
№ 36. ՀՍԽՀ արտգործժողկոմատի կողմից Հովհ. Թումանյանին տրված անցագիրը՝ Թիֆլիս մեկնելու առթիվ (18 ապրիլի 1921 թ.) 64
№ 37. Հովհ. Թումանյանի մասնակցությունը Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադիր համագումարին (13, 16, 18, 20 սեպտեմբերի 1921 թ.) 64
№ 38. Հովհ. Թումանյանի ելույթը Հայաստանի օգնության կոմիտեի Վրաստանի մասնաճյուղի հիմնադիր ժողովում (22 հոկտեմբերի 1921 թ.) 68
№ 39. Խորհրդային Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության դիմումը ՎՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատին՝ ՀՕԿ-ի գործերով Կ. Պոլիս մեկնող Հովհ.

Թումանյանի և Ե. Թաղիանոսյանի ուղեբեռը մաքսային զննման չենթարկելու հարցով (22 հոկտեմբերի 1921 թ.) 69
№ 40. Խորհրդային Վրաստանի արտաքին գործերի ժողկոմատի պատասխան գրությունը ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությանը՝ Հովհ. Թումանյանի և Ե. Թաղիանոսյանի առաքելության մասին լրացուցիչ տեղեկություններ հայտնելու խնդրանքով (9 նոյեմբերի 1921 թ.) 70
№ 41. Հայրենիքի օգնության մարմնի և Հայաստանի օգնության կոմիտեի համատեղ կոչը՝ ՀՕՄ-ի մասնաճյուղեր կազմակերպելու և հայրենիքին օժանդակելու մասին (1 դեկտեմբերի 1921 թ.) 70
№ 42. ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատի գրությունը Հովհ. Թումանյանին՝ նրա նամակը ստանալու մասին (6 հունիսի 1922 թ.) 73
№ 43. Քաղվածք Հայաստանի օգնության կոմիտեի առաջին համագումարի նիստի արձանագրությունից (20 հուլիսի 1922 թ.) 73
№ 44. Հայաստանի օգնության կոմիտեի որոշումը՝ Հովհ. Թումանյանին դրամական օժանդակություն ցուցաբերելու մասին (28 հուլիսի 1922 թ.) 75
№ 45. Հովհ. Թումանյանի որդու՝ Համլիկի դիմումը ՀՍԽՀ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանին՝ ընտանիքին օժանդակելու և հոր ձեռագրերն անխաթար պահպանելու խնդրանքով (28 մարտի 1923 թ.) 76
№ 46. Հովհ. Թումանյանի որդու՝ Համլիկի դիմումը Բեռլինում Անդրկովկասյան Դաշնության տնտեսական ներկայացուցիչ Սիմոնիկ Փիրումյանին՝ իր ուսման ծախսերը հոգալու խնդրանքով (29 մարտի 1923 թ.) 77
№ 47. ՀՍԽՀ լուսժողկոմ Ասքանազ Մռավյանի «գաղտնի» նշագրումով երկտողը ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանին՝ Հովհ. Թումանյանի որդի Համլիկի խնդրանքի մասին ([1923 թ. մայիս]) 79
№ 48. Հովհ. Թումանյանի այրու՝ Օլգայի դիմումը ՀՍԽՀ լուսժողկոմ Ա. Մռավյանին՝ ամուսնու երկերի հրատարակության հոնորարն ընտանիքի անդամներին փոխանցելու հարցով (19 ապրիլի 1925 թ.) 80
№ 49. Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստի արձանագրությունը (14 հունվարի 1929 թ.) 81
№ 50. Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակը տոնող

հանձնաժողովի հերթական նիստին մասնակցելու հրավեր ([18 հունվարի 1929 թ.) 83
№ 51. Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստի արձանագրությունը ([19 հունվարի 1929թ.]) ... 84
№ 52. Լուսավորության ժողկոմատի սոցիալական դաստիարակության գլխավոր վարչության շրջաբերականը գավառային լուսբաժիններին՝ Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակը տոնելու մասին (5 փետրվարի 1929 թ.) 86
№ 53. Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյա տարեդարձը կատարող հանձնաժողովի նիստի արձանագրությունը ([18 փետրվարի 1929 թ.]) 87
№ 54. Երևանի լուսավորության բաժնի «շտապ» նշագրումով շրջաբերականը քաղաքի դպրոցներին՝ Հովհ. Թումանյանին նվիրված տոնակատարություններ անցկացնելու մասին (18 փետրվարի 1929 թ.) 89
№ 55. ՀՍԽՀ լուսժողկոմատի քաղլուսգլխվարչության գրությունը Երևանի լուսբաժնին՝ Հովհ. Թումանյանի 60-ամյակի առթիվ քաղլուստեսուչների անելիքների մասին (20 փետրվարի 1929 թ.) 91
№ 56. Հայգլավլիտի «խիստ գաղտնի» շրջաբերականը «բոլոր գավոեպվարներին», պատճենը՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնին և Պետքաղվարչության ինֆորմացիոն բաժնին՝ Հովհ. Թումանյանի 60-ամյակի տոնակատարությունների վերաբերյալ ([22/23 փետրվարի 1929 թ.]) 92
№ 57. Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ ՀԼԿԵՄ կենտկոմին կից պատանի պիոներների կենտրոնական բյուրոյի անելիքները ([1929 թ. փետրվար]) 94
№ 58. Հովհ. Թումանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ Լուսժողկոմատի արիլուսգլխվարչության անելիքները ([1929 թ. փետրվար]) 95
№ 59. Նորայր Դաբաղյանի պատրաստած թեզիսները՝ Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքի մասին ([1929 թ. մարտ]) 96

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ 108

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 111

Հովհաննես Թումանյան, Նորահայտ փաստաթղթեր

Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների
հեղինակ՝ Համո Կարենի Սուքիասյան

Hovhannes Tumanyan, Newfound Documents

Compiler and author of the preface and commentaries
Hamo K. Sukiasyan

Ованес Туманян, Новоявленные документы

Составитель, автор предисловия и примечаний
Амо Каренович Сукиасян

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության՝ 18.06.2019 թ.
Տպաքանակը՝ 150

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[1200 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0612672

Б
105484

ISBN 978-9939-860-81-7
9 789939 860817